

Վ ա հ ա ն Բ ա ք ա յ ա ն

Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ի
Հ Ի Մ ՈՒ Ն Բ Ն Ե Ր

Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Բ Ո Ւ Ե Չ

Ե Ր Ե Վ Ա Ն
2003

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26

Հեռ. (3 741) 537788

Հեռ./ֆաքս (3 741) 537767

Web-site: <http://www.fbc-edu.am>

E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© ՖԲԲ (Ֆինանսաբանկային քոլեջ)

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Առաջարան

Բանկային համակարգը, ինչպես գիտենք, հանդիսանում է ցանկացած տնտեսության ամենակարևոր հատվածներից մեկը, որի բնականոն գործունեությունը վճռորոշ ազդեցություն ունի տնտեսության զարգացման վրա: Այդ իսկ պատճառով կարևորվում է «Բանկային գործի հիմունքներ» առարկայի ուսումնական ձեռնարկի ճիշտ կառուցվածքը, որի միջոցով ունկնդիրներին տրվելու են բանկային գործի սկզբնատարրերը: Ուսումնական ձեռնարկը ապահովում է բանկային գործի հետագա համակողմանի ուսումնասիրման անհրաժեշտ հիմքերը:

Գրախոսվող «Բանկային գործի հիմունքներ» ուսումնական ձեռնարկում հաջողությամբ լուսաբանվել են բանկային գործի ստեղծման հիմնապատճառները, բանկերի էությունը, գործառույթները, բանկային ռիսկերը, բանկային համակարգի զարգացման միտումները, գործունեության և կարգավորման հիմունքները:

Ուսումնական ձեռնարկը շարադրված է մատչելի լեզվով, ակնհայտ է, որ հեղինակը լիովին տիրապետում է տվյալ բնագավառին, ունի գործնական աշխատանքի զգալի փորձ, և առարկան մատուցելու յուրահատուկ մոտեցում:

Գրախոսվող նյութի յուրաքանչյուր թեմայում տրվում են թեմայի նպատակը, դասախոսությունն անցնելուց հետո ունկնդիրների կողմից ձեռք բերվելիք ունակությունները և հմտությունները, ինքնաստուգման հարցերը: Ուսումնական նյութի վերջում բերված են հանգուցային բառերի սահմանումները կամ մեկնաբանությունները: Այս ամենը հեշտացնում է առարկայի ընկալումը:

«Բանկային գործի հիմունքներ» ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների և բանկային համակարգի սկսնակ աշխատողների համար:

ՀՀ կենտրոնական բանկի բանկային
մեթոդաբանության և վերլուծությունների
վարչության պետ, տ. գ. թ.

Դ. Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ**2
- Հարգարժան ընթերցող**.....3
- Կենտրոնական բանկի խորհուրդ**3
- Առաջաբան**4
- ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**6
 - 1.1. Բանկերի ծագումը և պատմական զարգացումը 6
 - 1.2. ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը 7
 - Ինքնաստուգման հարցեր*..... 8
- ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**9
 - 2.1. Բանկերի էությունը, առանձնահատկությունները և դերը 9
 - 2.2. Բանկերի գործառույթները 11
 - 2.3. Բանկային գործառնություններ 12
 - Ինքնաստուգման հարցեր*..... 13
- ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**.....14
 - 3.1. Միջազգային բանկային համակարգ 14
 - 3.2. ՀՀ բանկային համակարգը 15
 - Ինքնաստուգման հարցեր*..... 15
- ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**.....16
 - 4.1. Բանկերի տեսակները 16
 - 4.2. Բանկերի կառավարումը 18
 - 4.3. Բանկի կազմակերպական կառուցվածքը 20
 - Ինքնաստուգման հարցեր*..... 22
- ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**.....23
 - 5.1. Առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքները և կողմերը 23
 - 5.2. Առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները 23
 - 5.3. Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը և որակը 25
 - 5.4. Առևտրային բանկերի իրացվելիությունը և վճարունակությունը 27
 - 5.5. Առևտրային բանկերի շահույթը 30
 - Ինքնաստուգման հարցեր*..... 31
- ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**.....32
 - 6.1. Ներածություն 32
 - 6.2. Բանկերի գործունեության լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկումը 32
 - 6.3. Բանկերի գործունեությունը կարգավորող իրավական նորմատիվ ակտեր 38
 - Ինքնաստուգման հարցեր*..... 39
- ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ**40
 - 7.1. Բանկային ռիսկերի էությունը և դրանց դասակարգումը 40
 - 7.2. Ռիսկի տեսակները 41
 - 7.3. Բանկային ռիսկերի գնահատման հիմնական եղանակները 43
 - 7.4. Բանկային ռիսկերի կառավարման քաղաքականությունը 44
 - Ինքնաստուգման հարցեր*..... 46
- ԳԼՈՒԽ 8. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**.....47
 - 8.1. ՀՀ տարածքում գործող բանկերը 47
 - 8.2. Բանկային համակարգի կապիտալը 47
 - 8.3. Բանկային համակարգի ակտիվները 48
 - 8.4. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 49
 - 8.5. Բանկային համակարգի շահութաբերությունը 50
 - 8.6. Իրացվելիություն 51
 - 8.7. Մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում 52
 - Ինքնաստուգման հարցեր* 52
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**.....53
- ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ**54

ՉԼՈՒԽ 1. ԲԱՆԿԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային գործի ծագման հիմնապատճառները և հետագա զարգացումը, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը:

- **Ունակությունների և հմտությունների նկարագիրը:** Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝
 - բացատրել «բանկ» բառի ծագումնաբանությունը
 - բացատրել բանկային գործի ստեղծման հիմնապատճառները
 - ներկայացնել բանկային գործի պատմական զարգացումը
 - ներկայացնել ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը:

1.1. Բանկերի ծագումը և պատմական զարգացումը

Բանկը մարդկության տնտեսական գործունեության և մտքի մեծագույն նվաճումներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է տնտեսության մի մասնիկը և տնտեսության կարևորագույն բաղադրիչ օղակներից մեկն է հանդիսանում, առանց որի անհնարին է պատկերացնել ժամանակակից ապրանքադրամական տնտեսությունը:

Բանկային գործի զարգացումը ուղղակիորեն պայմանավորված է տնտեսության մեջ ապրանքադրամական հարաբերությունների զարգացման մակարդակից:

Բանկերը ներգրավում են ազատ միջոցներ, տրամադրում վարկեր, իրականացնում վճարահաշվարկային ծառայություններ, թողարկում դրամական միջոցներ, հանդիսանում են արժեթղթերի շուկայի դիլերներ, իրականացնում են այլ ֆինանսական գործառնություններ:

Բանկային գործը ծագել և զարգացել է միջոցների փոխանակման ու փոխատվական գործունեության շնորհիվ:

Այդ հարաբերությունների զարգացումը բանկային գործի հիմքը դրեց:

Հին անգլերենում «bank» բառը նշանակել է սեղան, իսկ «Bankerotta» բառակապակցությունը նշանակել է կոտրված նստարան, որտեղից էլ առաջացել է սննկացում բառը: Մեկ այլ պնդման համաձայն, «բանկ» բառը առաջացել է իտալերեն «banka» բառից, որը նշանակում է նավամատույցի շուկայի սեղանիկ, իսկ փոխանակողները կոչվում էին «banchieri»:

Այս անձինք փոխանակողներ էին, որոնք նստում էին հրապարակներում (առևտրական շրջաններում) տեղադրված սեղանների մոտ կամ ոչ մեծ կրպակներում և օգնում էին քաղաք ժամանած ճանապարհորդներին փոխանակելու օտարերկրյա մետաղադրամները տեղական դրամով կամ որոշակի վարձատրության դիմաց հաշվառում էին առևտրային մուրհակները: Ընդ որում, առևտուրն ընթանում էր զանազան մետաղադրամների օգտագործմամբ, որոնք հատվում էին ինչպես պետությունների, այնպես էլ քաղաքների և նույնիսկ առանձին անհատների կողմից: Չկար մետաղադրամների միասնական համակարգ և առք ու վաճառքի ժամանակ հանդիպում էին տարբեր ձևի ու արժողությամբ մետաղադրամներ՝ հաճախ դրանց վրա նշված անվանական արժեքից ցածր: Սիսայրիսի պայմաններում պահանջվեցին հատուկ մասնագետներ, ովքեր կարողանային ճանաչել շրջանառվող բազմաթիվ մետաղադրամները, գնահատել դրանք և խորհուրդներ տալ փոխանակման ժամանակ:

Գիշտ չէ եզրակացնել, թե առաջին բանկերն առաջացել են փոխանակային գործի հիման վրա: Պատմաբանների կարծիքով, դեռևս մ.թ.ա. 2300 տարի առաջ խալդերն ունեին ընկերություններ, որոնք իրենց անմիջական գործառնությունների հետ մեկտեղ նաև տրամադրում էին փոխատվություններ: Դեռևս հին ժամանակներում հասարակության հարստացող խավը պարտքով միջոցներ էր տալիս այն անձանց, ովքեր ունեին դրա կարիքը, կապված ընթացիկ, կամ երկարատև խնդիրների լուծման հետ: Առաջին վարկային գործառնությունների մասին հիշատակումները վերաբերում են մ.թ.ա. VI դարին: Հին Բաբելոնում կիրառվում էր ավանդային գործառնությունը՝ ավանդների ընդունումը և դրանց դիմաց տոկոսների վճարումը: Այդ գործառնությունները մ.թ.ա. IV դարում իրականացվում էին նաև Հունաստանում, որտեղ գոյություն ուներ բավականին զարգացած բանկային գործունեություն: Նրանք իրականացնում էին տարբեր գործառնություններ՝ սկսած զենան, վաճառքի և հաճախորդների հաշվին վճարումների կատարումից մինչև վարկերի տրամադրումը և տարբեր գործառնությունում որպես երաշխավոր կամ վստահված անձ հանդես գալը:

Առաջին բանկը, ժամանակակից ընթանմամբ, առաջացել է Իտալիայում 1407թ. (Banca di San Giorgio), սակայն սա չի նշանակում, թե բանկերն առաջին անգամ առաջացել են միջնադարյան Իտալիայում: «Բանկ» հասկացությունը կարելի է հավասարապես նույնացնել նաև Հին Հունաստանում փոխանակողների և նրանց սեղանների հետ, որտեղ բանկիրներին անվանում էին տրապեզիդներ (հունարեն «տրապեզա» բառից, որը նշանակում է «սեղան»), կամ Հին Հռոմում փոխանակող-մենասարների հետ (լատիներեն «mensa» բառից, որը նշանակում է «սեղան»), ովքեր զբաղվում էին արժույթի փոխանակմամբ, ինչպես նաև այլ գործառնություններով:

Բանկային գործն աստիճանաբար դուրս եկավ դասական հունահռոմեական քաղաքակրթության սահմաններից և ներթափանցեց հյուսիսային և արևմտյան Եվրոպա: XVI-XVII դդ. մի շարք քաղաքներում (Վենետիկ, Սիլան, Ամստերդամ, Համբուրգ, Նյուրիմբերգ, Գենովա) վաճառականները ստեղծեցին ժիրոբանկեր (իտալերեն «giro» բառից, որը նշանակում է շրջապտույտ, շրջանառություն)՝ իրենց հաճախորդ-վաճառականների միջև անկախիկ հաշվարկներ կատարելու համար: Ժիրոբանկերն իրենց հաճախորդների միջև հաշվարկները տանում էին ազնիվ մետաղների որոշակի կշռային քանակով արտահայտված հատուկ դրամական միավորներով:

Արևմտյան Եվրոպայում անցումը դեպի վարկեր տրամադրող բանկային տների և առևտրային բանկերի կատարվել է XVII դարի 2-րդ կեսին: Անգլիայում առաջին բաժնետիրական բանկը (Անգլիայի բանկը) հիմնադրվել է 1694թ, որն ակտիվորեն իրականացնում էր առևտրաարդյունաբերական շրջանառության վարկավորումը և կառավարությունից ստացավ բանկնոտներ թողարկելու իրավունք: ԱՄՆ-ում բանկային գործի պատմությունը սկսվել է XVIII դարի 2-րդ կեսից, որտեղ անհատական վարկային գրասենյակները վարկ էին տալիս հողի գրավով և շրջանառության մեջ դրան թողարկում: ԱՄՆ-ում առաջին առևտրային բանկը, որը ստացել է բանկային

գործառնություններ իրականացնելու իրավունք, եղել է Հյուսիսային Ամերիկայի բանկը, որը կազմավորվել է 1781թ. Ֆիլադելֆիայում: ԱՄՆ-ում 1800թ. արդեն գոյություն ուներ 29 [առևտրային բանկ](#), իսկ 1820թ. դրանց թիվը հասնում էր 300-ի:

Այսպիսով, առաջին բանկերի ծագման ժամանակաշրջանի վերաբերյալ հարցը, դատելով ըստ ոչ մեծ թվով աշխատությունների, չի ստացել հստակ պատասխան: Ժամանակի տատանումը կազմում է մոտ 2 հազար տարի: Գիտնականների մի մասի կարծիքով, առաջին բանկերն առաջացել են Իտալիայում (Վենետիկ, Ջենովա) XIV-XV դարերում: Մյուս գիտնականները գտնում են, որ բանկը, որպես ապրանքային տնտեսության հատուկ ինստիտուտ, ծագում է միայն ապրանքադրամական հարաբերությունների զարգացման այնպիսի փուլում, երբ ի հայտ է գալիս դրամաշրջանառության կարգավորման խառնաշփոթ և լայնածավալ վարկային գործառնությունների իրականացման անհրաժեշտություն: Կան նաև այլ տեսակետներ: Սակայն, կարևորը ոչ այնքան բանկերի առաջացման ժամանակաշրջանի ճշտումն է, որքան այն բանի սահմանումը, թե ի՞նչ է իրենից ներկայացնում բանկը, որո՞նք են բանկային գործի ծագման հիմնապատճառները:

1.2. ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը

Խորհրդային Միության տարիներին ՀՀ բանկային համակարգը հանդիսանում էր Խորհրդային միության սոցիալիստական պլանային տնտեսության կարևոր օղակներից մեկը: Սակայն նշված տարիներին բանկային համակարգը լիարժեք չէր արտացոլում բանկային գործի էությունը: Խորհրդային միության տարիներին բանկային գործը հանդիսանում էր պետության մենաշնորհը, իսկ Խորհրդային Հայաստանի կենտրոնական բանկը՝ Միության պետբանկի գրասենյակը:


1988 թ. հոկտեմբերի 6-ին Խորհրդային Հայաստանում ստեղծվեց առաջին կոոպերատիվ բանկը՝ «Հայկը», որով սկզբնավորվեց հանրապետությունում նոր տեսակի բանկային համակարգի ստեղծման գործընթացը:

Առաջին առևտրային բանկը ստեղծվել է 1988 թ. դեկտեմբերի 8-ին: Առաջին առևտրային բանկերի շարքին են դասվում «Հայկական առևտրային բանկ», «Մասիս», «Պրոմեթևս», Անելիք բանկերը, որոնցից առ այսօր գործունեությունը շարունակում են միայն «Պրոմեթևս» և Անելիք բանկերը:

Անկախության հռչակումից անմիջապես հետո՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում գրանցվեց առաջին առևտրային բանկը՝ Հայէկոնոմբանկը:

Չեռագա տարիներին շարունակվել է Հայաստանի բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը (տես՝ նկար 1): 1995 թ. վերջին Հայաստանի Հանրապետության տարածքում գործում էին 35 ռեզիդենտ բանկեր՝ 182 մասնաճյուղերով: Տարվա ընթացքում անվավեր են ճանաչվել 20 բանկի և [օտարերկրյա բանկերի](#) 3 մասնաճյուղի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիաները: Գրանցվել և լիցենզավորվել է 3 բանկ, այդ թվում ամբողջությամբ օտարերկրյա կապիտալով:

1996 թ. ընթացքում գործունեությունը դադարեցրել է 8 բանկ, որոնցից երկուսը միավորվել են, մեկը միավորվել է այլ բանկի հետ և գրանցվել որպես մասնաճյուղ, մնացած հինգի բանկային գործունեության լիցենզիաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից անվավեր են ճանաչվել: Տարեվերջին օտարերկրյա բանկի մեկ մասնաճյուղ վերակազմավորվել է դուստր բանկի: 1996 թ. ընթացքում լիցենզավորվել է 5 բանկ: Արդյունքում, 01.01.97թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 33 բանկ և մեկ ոչ ռեզիդենտ բանկի մասնաճյուղ:



1998 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 30 բանկ (174 մասնաճյուղով)՝ 1997թ. տարեկազմի 33 բանկի դիմաց: Տարվա ընթացքում մեկ բանկ դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, որի բանկային գործունեության լիցենզիան անվավեր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից և բանկի նկատմամբ սկսվել է լուծարման գործընթաց:

1998 թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրենց գործունեությունն են սկսել էկոնոմիկեստբանկը և Առէկսիմբանկը:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում էին 31 բանկ, որոնցից, ըստ կազմակերպական-իրավական տեսակի՝ 18-ը փակ բաժնետիրական ընկերություններ են, 5-ը՝ բաց բաժնետիրական ընկերություն, 7-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, 1-ը՝ կոոպերատիվ բանկ: Հանրապետության տարածքում գործում են օտարերկրյա բանկերի երեք դուստր բանկեր, օտարերկրյա բանկերը դեռևս մասնաճյուղեր չեն հիմնել ՀՀ տարածքում:

Մեկ բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը միջին հաշվով կազմել է 1065 միլիոն դրամ, ընդհանուր ակտիվները՝ 6157 միլիոն դրամ, ընդհանուր պարտավորություններինը՝ 5092 միլիոն դրամ:

Բանկերը զգալիորեն տարբերվում են իրենց մեծությամբ: Այսպես, հանրապետության բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մոտ 62 տոկոսը բաժին է ընկնում 7 բանկի, որոնցից յուրաքանչյուրն ունի ավելի քան 10 միլիարդ դրամի չափով ակտիվներ: 1 միլիարդ դրամ ընդհանուր կապիտալի սահմանը հատել է 13 բանկ, որոնց պատկանում է համակարգի ընդհանուր կապիտալի ավելի քան 58 տոկոսը, իսկ թվով 15 բանկի համանման ցուցանիշը տատանվում է 524 միլիոն դրամից մինչև 685 միլիոն դրամի սահմաններում:

Բանկերի խոշորացումը միշտ եղել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում, որը դրսևորվում է բանկերի համար սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի աստիճանական մեծացման ձևով: Համաձայն ներկայումս գործող կարգի, բանկերը պարտավոր են իրենց ընդհանուր կապիտալի մեծությունը մինչև 2005թ. հունիսի 1-ը հասցնել 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի: Այլ կերպ ասած, հանրապետության մի շարք բանկերի առջև առաջիկա տարիներին ևս կանգնած կլինի կապիտալիզացիայի խնդիրը:

2002 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 25 բանկ (231 մասնաճյուղով), որոնցից 20 բանկ գործել է ընդհանուր վերահսկողության դաշտում, իսկ 5 բանկ՝ հատուկ վերահսկողության դաշտում:

[Բանկային համակարգը](#) 2003 թվականին քնակոխել է զարգացման նոր փուլ, անցյալում թողնելով բանկերի նախկինում կուտակված դասական բանկերին ոչ բնորոշ խնդիրները:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկային գործի ստեղծման հիմնապատճառները
2. Որտեղի՞ց է առաջացել «բանկ» բառը:
3. Որո՞նք էին առաջին բանկիրների գործառնությունները:
4. Ինչպիսի՞ն է բանկերի պատմական զարգացումը:
5. Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել առաջին բանկը՝ ժամանակակից ըմբռնմամբ:
6. ՀՀ առաջին առևտրային բանկերից ներկայումս որո՞նք են գործում:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ բնութագրել բանկերի էությունը, որպես առանձնահատուկ տնտեսավարող սուբյեկտ, ներկայացնել բանկերի կողմից իրականացվող գործառնությունները և գործառնությունները:

Ուսանողությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝

- բնութագրել բանկերի էությունը, տալ «բանկ» հասկացության սահմանումը
- ներկայացնել բանկերի դերը
- բացատրել բանկը որպես տնտեսության կարևոր մասնիկ
- բնութագրել բանկի առանձնահատկությունները
- ներկայացնել բանկերի գործառնությունները
- ներկայացնել ՀՀ բանկերի կողմից իրականացվող գործառնությունները:

2.1. Բանկերի էությունը, առանձնահատկությունները և դերը

Բանկերը, որպես տնտեսության կարևոր օղակ կարելի է բնութագրել այն գործառնություններով, որոնք նրանք կատարում են տնտեսության մեջ: Դժվարությունը, սակայն, կայանում է նրանում, որ ոչ միայն բանկերի, այլ նաև դրանց հիմնական մրցակիցների գործառնությունները (ֆունկցիաները) ժամանակի ընթացքում մշտապես փոփոխվում են: Իրականում շատ ֆինանսական ինստիտուտներ ձգտում են մատուցվող ծառայությունների առումով հնարավորինս մոտենալ բանկերին, իսկ բանկերը, իրենց հերթին, ոչ բանկային մրցակիցների հետ պայքարում առաջարկում են մրցակիցներին բնորոշ ծառայություններ:

Հասարակության մեջ բանկը բնութագրվում է որպես «խոշոր վարկային կազմակերպություն», ընդ որում, այստեղ էականն այն է, որ վարկատուն սկսում է իր հաճախորդների կարգադրությամբ կատարել հաշվարկային և այլ գործառնություններ: Հետևաբար, բանկը վարկային գործի զարգացման այնպիսի աստիճան է, որի ժամանակ վարկային, դրամական և հաշվարկային գործառնությունները իրենց ամբողջության մեջ կենտրոնացվում են մեկ միասնական կենտրոնում:

Բանկը առանձնահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը ներգրավում է ավանդներ, տրամադրում վարկեր, վճարում չեկեր և մատուցում տարբեր ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց: Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ դրամական միջոցներ առաջարկողների և օգտագործողների միջև: Այդ դրամական միջոցները հավաքագրվում են երեք աղբյուրներից՝ ցպահանջ, խնայողական և ժամկետային ավանդներից, այլ բանկերից ստացված կարծաժամկետ փոխառություններից և սեփական կապիտալից: Բանկերը կատարում են նաև հաճախորդների վճարման հանձնարարականները, այդ թվում՝ դրամական միջոցների փոխանցումներ, գնում կամ վաճառում են արժեթղթեր, կառավարում հավատարմագրային հաշիվներ, իրականացնում ֆակտորինգային, լիզինգային և այլ ֆինանսական գործառնություններ և այլն:

Բանկն իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված դրամական միջոցները տեղաբաշխում է իր անունից և իր ռիսկով՝ վերադարձելիության, վճարելիության և ժամկետայնության պայմաններով:

Բանկի էությունը միասնական է, այն կախված չէ դրա տեսակներից, այն բանից, թե ինչպիսի բանկ ենք քննարկում՝ առևտրային, թե էմիսիոն, ունիվերսալ, թե մասնագիտացված, մասնավոր, թե պետական: Բնականաբար, սա չի նշանակում, որ գործնականում բոլոր բանկերը միատեսակ են, ընդհակառակը, դրանք ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք, սակայն, արտացոլում են միայն բանկերի բազմազանությունը՝ ամբողջությամբ վերցված:

Բանկերի առանձնահատկությունները: Բանկի էությունը պահանջում է բացահայտել նրա առանձնահատկությունները, յուրահատուկ գծերը, որոնք բանկը տարբերում են այլ տնտեսավարող սուբյեկտներից:

Բանկը ո՛չ գործարան է, ո՛չ էլ շինարարական կամ այլ կազմակերպություն: Այն վերջիններից տարբերվում է մի շարք սկզբունքային առումներով: Ամենից առաջ, ի տարբերություն, օրինակ, արդյունաբերական ձեռնարկությունների, բանկի գործունեությունը կենտրոնացված է ոչ թե արտադրության, այլ փոխանակման և փոխառական շրջանառության ոլորտում:

Բանկը, որպես առանձնահատուկ «ձեռնարկություն», արտադրում է «արտադրանք», որն էականորեն տարբերվում է նյութական արտադրության ոլորտների արտադրանքից. նա արտադրում է ոչ թե պարզապես ապրանք, այլ հատուկ տեսակի ապրանք՝ փող վճարային միջոցների տեսքով: Փողը վերարտադրական կատեգորիա է, բանկերի կողմից թողարկված դրամը սպասարկում է ինչպես արտադրության, այնպես էլ բաշխման, փոխանակման և սպառման ոլորտները: Բացի տվյալ արդյունքից, բանկերը մատուցում են նաև առավելապես դրամական բնույթի մի շարք ծառայություններ:

Բանկի հիմնական արտադրանքը ծառայությունների ոլորտում (ի տարբերություն արդյունաբերական ձեռնարկության) հանդիսանում է ոչ թե իրերի, սպառման առարկաների արտադրությունը, այլ վարկի տրամադրումը: Բանկային վարկի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն տրամադրվում է ոչ թե որպես փողի ինչ-որ գումար, այլ որպես կապիտալ: Դա նշանակում է, որ փոխառություն տրամադրված դրամական միջոցները ոչ միայն պետք է պարզապես շրջապտույտ կատարեն փոխառուի տնտեսության մեջ, այլև վերադարձվեն իրենց ելակետային իրավական կետին՝ փոխառական տոկոսի հետ միասին:

Այնուհետև, եթե **բանկը** աշխատում է հիմնականում ուրիշների փողերով, որոնք կուտակվել են վերադարձելիության սկզբունքներով, ապա ձեռնարկությունն իր գործունեությունն իրականացնում է առավելապես սեփական ռեսուրսներով:

Բանկը, ի տարբերություն արդյունաբերական ձեռնարկությունների, ոչ միայն թողարկում է բաժնետոմսեր և այլ արժեթղթեր, այլ նաև կատարում է ուրիշ թողարկողների արժեթղթերի հաշվառման և պահպանման գործառնություններ:

Բանկերն արտադրական ձեռնարկություններից տարբերվում են նաև իրենց ակտիվների և պասիվների կազմով ու կառուցվածքով: Այն դեպքում, երբ արտադրական ձեռնարկությունների պասիվներում մեծ տեսակարար կշիռ են կազմում սեփական միջոցները, իսկ ակտիվների կազմում հիմնական և շրջանառու միջոցները, բանկերի պասիվները սովորաբար բաղկացած են առավելապես ներդրված միջոցներից (ավանդներից, միջբանկային միջոցներից և այլն), իսկ ակտիվները՝ վարկային ներդրումներից, արժեթղթերի պորտֆելից և այլն: Բավական է նշել, որ բանկերի ակտիվների ընդհանուր ծավալի մոտ 30-50 տոկոսը սովորաբար կազմում են վարկային ներդրումները:

Պայմանավորված ակտիվների կազմի և կառուցվածքի զգալի տարբերություններով, բանկերն արտադրական ձեռնարկություններից տարբերվում են նաև շահութաբերության գնահատման և ցուցանիշների հաշվարկման առանձնահատկություններով: Արտադրության շահութաբերության մակարդակի ամփոփ գնահատման համար օգտագործվում է շահույթի հարաբերությունը հիմնական ու շրջանառու արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքին, այն դեպքում, երբ բանկերի շահութաբերության մակարդակը որոշելու համար հաշվարկվում են շահույթ/ընդհանուր ակտիվներ կամ շահույթ/ընդհանուր կապիտալ հարաբերությունները:

Բանկերի կարևորագույն առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք գործում են կարգավորման և վերահսկողության խիստ դաշտում, որը հիմնականում պայմանավորված է բանկային ավանդների ներգրավման իրավունքից առաջացող ռիսկերի զսպմամբ:

Բանկերն ավելի շուտ մոտ են առևտրական ձեռնարկությանը: Եվ դա պատահական չէ: Բանկն իրոք կարծես թե «գնում է» ռեսուրսներ, «վաճառում է» դրանք, գործում է վերաբաշխման ոլորտում, նպաստում ապրանքների փոխանակմանը, նրա գործունեությունը շատ բանով կախված է շրջանառությունից: Բանկի հիմնարար տարբերությունը առևտրական ձեռնարկություններից կայանում է բանկի էությանը: Վերջինիս տակ հասկացվում է բանկի զլխավոր բնութագրականը՝ վարկային գործը:

Այս պայմաններում բանկը հանդես է գալիս ոչ թե որպես առևտրական, այլ հատուկ ձեռնարկություն, քանի որ առևտրի ժամանակ տեղի է ունենում արժեքի հանդիպակած շարժում, այն դեպքում, երբ վարկը միակողմանի շարժ է (փոխատվության գումարը տրվում է փոխառուին, որն այն վերադարձնում է որոշակի ժամանակ անց):

- առևտրի ժամանակ ապրանքի նկատմամբ սեփականությունը վաճառողից անցնում է գնորդին, վարկի դեպքում նման բան տեղի չի ունենում (փոխառվող արժեքն անցնում է փոխառուին միայն ժամանակավոր տիրապետման)
- առևտրական գործարքում վաճառվում է այն, ինչը պատկանում է տիրոջը, վարկի դեպքում դա տեղի է ունենում ոչ միշտ (բանկը հաճախ վաճառում է այն, ինչ պատկանում է ուրիշին, նա առևտուր է անում ուրիշի փողերով)
- առևտրի ժամանակ վաճառողը գնորդից ստանում է ապրանքի զինը, վարկի դեպքում վարկատուն հետ է ստանում ոչ միայն տրամադրված փոխատվության գումարը, այլ նաև ավելացում փոխատվական տոկոսի տեսքով:

Բանկերի հիմնական նպատակը առավելագույն շահույթի ստացումն է, որը հաճախ հակասության մեջ է մտնում իրացվելիության ապահովման հետ, քանի որ բարձր իրացվելի ակտիվները, որպես կանոն, եկամտաբեր չեն կամ ունեն ցածր եկամտաբերություն:

Բանկերի և վարկային կազմակերպությունների միջև տարբերությունները: Բանկերին և վարկային կազմակերպություններին միավորում է (և միաժամանակ նրանց տարբերում է տնտեսավարող մյուս սուբյեկտներից) մեկ բնութագրիչ՝ մասնագիտացումը դրամական շուկաներում կամ գործառնություններում: Սակայն ո՞րն է նրանց միջև տարբերությունը:

Գոյություն ունեն առնվազն երկու հատկանիշներ, որոնք բանկն էականորեն տարբերում են ցանկացած վարկային կազմակերպությունից

1. բանկերը ֆինանսական շուկայում տրամաբանորեն սկզբնական, ելակետային օղակն են: Հենց բանկերի գործունեության բնույթն է որոշում վարկային կազմակերպությունների գործունեության բնույթը, այն հարաբերությունների շրջանակը և բնույթը, որոնցում հանդես են գալիս վերջիններս: զլխավորն այն է, որ բանկերին և միայն բանկերին, սկսած կենտրոնականից, պատմականորեն տրված է շրջանառության մեջ դրամ թողարկելու և շրջանառությունից այն դուրս հանելու հնարավորությունը: Բացի դրանից, պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ վարկային կազմակերպությունները մյուս հաճախորդների հետ միասին սպասարկվում են բանկերի կողմից:

2. բանկերը ֆինանսական շուկայի հիմնական, զլխավոր օղակն են: Դա նշանակում է, որ բանկերը միակ կազմակերպություններն են, որոնք իրենց գործունեությամբ իրականացնում են շուկայական դրամական հարաբերությունների (գործառնությունների) ողջ զամման՝ հավաքածուն, այսինքն՝ ըստ սահմանման, ունիվերսալ բնույթի ֆինանսական ինստիտուտներ են: Սա չի նշանակում, թե ցանկացած բանկ ժամանակի ցանկացած պահին իրականում կատարում է ֆինանսական շուկայի բոլոր գործառնությունները: Խոսքն այլ բանի մասին է. բանկը պետք է պատրաստ լինի դրան:

Բանկերի դերը: Բանկերի դերը տնտեսության մեջ առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ բանկերը հանդիսանում են ֆինանսական միջնորդներ: «Ֆինանսական միջնորդ» տերմինը նշանակում է ձեռնարկություն (կազմակերպություն), որը տնտեսության մեջ փոխհամագործակցում է երկու տեսակի անհատների կամ կազմակերպությունների հետ, որոնց

1. ընթացիկ ծախսերը սպառման և ներդրումների վրա գերազանցում են ընթացիկ եկամուտները, և որոնք ստիպված են ներգրավել փոխառու միջոցներ
2. ընթացիկ եկամուտները գերազանցում են ապրանքների ու ծառայությունների վրա ընթացիկ ծախսերը, այնպես, որ գոյանում են ավելցուկային միջոցներ, որոնք կարելի է կուտակել և ներդրում կատարել:

Բանկը կատարում է այս երկու խմբերի՝ վերջնական փոխառուների և ֆինանսական ռեսուրսների աղբյուրների միջև միջնորդության կարևոր գործառնություն: Բանկերը հավաքագրում են հասարակության լայն զանգվածների խնայողությունները և դրանք տրամադրում են փոխառուներին՝ իրենց անուճից: Մանր և հաճախ կարճաժամկետ ավանդները վերափոխում են ավելի խոշոր և երկարաժամկետ վարկերի, դրանով իսկ արագացնելով և ավելի արդյունավետ դարձնելով տնտեսության մեջ ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման գործընթացը:

Գրեթե բոլոր ժամանակակից տեսությունները բանկերի գոյությունը բացատրում են ֆինանսական համակարգի անկատարելությամբ: Օրինակ, բոլոր փոխառությունները և արժեթղթերը հնարավոր չէ տրոհել փոքր անվանական արժեթղթերի, որոնք մատչելի կլինեն յուրաքանչյուրին: Բանկերը մատուցում են կարևոր ծառայություն, այն է՝ այդպիսի արժեթղթերի տրոհում փոքր անվանական արժեթղթի արժեթղթերի՝ ավանդների ձևով, որոնք մատչելի են միլիոնավոր մարդկանց:

Բանկերի մեկ այլ դերը կայանում է փոխառուներին ռիսկային փոխառություններ տրամադրելու և ներդրողների համար ցածր ռիսկային արժեթղթեր թողարկելու նրանց պատրաստակամության մեջ:

Բանկերը բավարարում են նաև իրացվելի միջոցների նկատմամբ բազմաթիվ հաճախորդների խիստ պահանջարկը: Մեծ թվով ֆիզիկական անձինք և կազմակերպություններ ձգտում են ունենալ իրացվելի միջոցների բավարար քանակություն չնախատեսված հանգամանքներում ևս կանխիկի նկատմամբ պահանջները բավարարելու համար: Բանկերը բավարարում են այդ պահանջները, ապահովելով ավանդների բարձր իրացվելիություն:

Բանկերի աճի և ծաղկման մեկ այլ պատճառ է հանդիսանում տեղեկատվությունը գնահատելու նրանց մեծ ունակությունը: Արժեթղթերում ներդրումների վերաբերյալ համապատասխան տվյալները և սահմանափակ են, և թանկ: Բանկերը տնօրինում են որոշակի գիտելիքների և փորձի, որոնք նրանց թույլ են տալիս գնահատել ֆինանսական գործիքները և դրանցից ընտրել նրանք, որոնց համար բնորոշ են ռիսկի և եկամտաբերության մակարդակների ցանկալի համակցություններ:

2.2. Բանկերի գործառնությունները

Բանկերը տնտեսության մեջ կատարում են հետևյալ կարևորագույն գործառնությունները՝

1. միջնորդություն վարկավորման գործում
2. դրամական եկամուտների խնայողությունների տեսքով հավաքագրում և դրանց վերածում կապիտալի
3. միջնորդություն վճարումներում
4. շրջանառության վարկային գործիքների ստեղծում:

Միջնորդությունը վարկավորման գործում: Բանկերի կարևորագույն գործառնություններից մեկը միջնորդությունն է վարկավորման գործընթացում, որը նրանք իրականացնում են դրամաշրջանառության գործընթացում ժամանակավոր ազատ դրամական միջոցների վերաբաշխման տեսքով: Միջնորդության յուրահատկությունն այն է, որ միջոցների վերաբաշխման գլխավոր չափանիշը հանդիսանում է փոխառուի կողմից դրանց օգտագործման **շահութաբերությունը**: Դրամական միջոցների վերաբաշխումը փոխատուի և փոխառուի միջև տնտեսական կապերի հորիզոնականով հիմնականում իրականացվում է բանկերի միջոցով՝ վճարելիության և վերադարձելիության պայմաններով:

Ակնհայտ է, որ ապրանքն իրացնելիս վաճառողն, ըստ գնորդի հետ նախնական պայմանավորվածության, կարող է ապրանքը վաճառել զումարն անմիջապես ստանալով կամ ապրանքը մատակարարելուց հետո՝ որոշակի ժամանակ անց: Այսպիսով, գործարարների մոտ ապրանքը վաճառելու պահին կարող է առաջանալ այսպես կոչված դրամական միջոցների ժամանակավոր ավելցուկ: Մյուս կողմից, չի բացառվում, որ որևէ այլ ապրանք արտադրողի մոտ իրացման փուլում առաջանա դրամական միջոցների ժամանակավոր պահանջ:

Ենթադրենք, գործում են 2 արտադրական ձեռնարկություններ, որոնցից առաջինը զբաղվում է հագուստի, իսկ երկրորդը՝ պաղպաղակի արտադրությամբ: Երկու ձեռնարկություններն էլ ձեռք են բերում հումք և արտադրության միջոցով ստանում լայն սպառում ունեցող ապրանքներ: Ուշ աշնանը պաղպաղակի սպառումը գրեթե դադարում է, իսկ հագուստի արտադրությունն ընդլայնվում, քանի որ ամառային պարզ և էժան հագուստների փոխարեն մեծանում է աշնանային և ձմեռային հագուստների պահանջարկը: Այս պայմաններում պաղպաղակի ձեռնարկությունում եղած դրամական միջոցները չեն օգտագործվում, իսկ հագուստի ձեռնարկությունում առաջանում են լրացուցիչ դրամական միջոցների պահանջարկ՝ արտադրության շրջանառու միջոցներ (հումք, նյութեր և այլն) ձեռք բերելու համար: Պաղպաղակի ձեռնարկության ղեկավարությունը պետք է գտնի այնպիսի մի ոլորտ, որտեղ կարողանա ժամանակավորապես ներդնել ազատ դրամական միջոցները և ստանալ եկամուտ: Հագուստի ձեռնարկությունը պետք է գտնի ազատ դրամական միջոցներ, որպեսզի ընդլայնի իր արտադրությունը:

Դրամական միջոցները փոխատուից դեպի փոխառուին կարող են տեղափոխվել նաև առանց բանկերի միջնորդության, սակայն այդ դեպքում կտրուկ աճում են դրամական միջոցների կորստի ռիսկերը: Որպես փոխառություն և ազատ դրամական միջոցների անմիջական տրամադրումը դրանց տերերի կողմից առևտրական և արդյունաբերական ձեռնարկատերերին կապված է մի շարք խոչընդոտների հետ: Նախ, փոխառության համար առաջարկվող դրամական կապիտալի զումարը կարող է չհամապատասխանել փոխատվական կապիտալի նկատմամբ պահանջարկին: Օրինակ, A ձեռնարկության մոտ դրամական կապիտալն ազատվում է մեկ ամսով, իսկ B ձեռնարկությանն անհրաժեշտ է երեք ամիս ժամկետով: Երրորդ, դրամական կապիտալների սեփականատերերի կողմից ձեռնարկատերերին փոխառության տրամադրման խոչընդոտ կարող է հանդիսանալ փոխառուների վճարունակության մասին նրանց անիրազեկությունը:

Քանի որ այդպիսի դեպքերն առկա են եղել բավականաչափ երկար ժամանակահատվածի ընթացքում, ապրանք արտադրողների շրջանում գտնվեցին առանձին անձինք, որոնք ստեղծեցին հաստատություն, որի

գործունեության հիմնական բովանդակությունը հանգում էր ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրմանը և այդ միջոցները ժամանակավորապես դրամական պահանջ ունեցողներին տրամադրելուն: Հենց այդ օղակը ներկայիս տնտեսության մեջ հանդիսանում է բանկը: Վարկավորման գործում բանկերի միջնորդությունը վերացնում է բոլոր պատենները, որոնք կանգնած են ուղղակի վարկավորման ճանապարհին: Բանկերը հավաքագրում են տարբեր չափերով և ժամկետներով ավանդները, դրա համար էլ կարող են վարկեր տրամադրել ձեռնարկատերերին՝ վերջիններիս անհրաժեշտ գումարներով ու ժամկետներով, նրանց պահանջներին համապատասխան և իրենց ակտիվների լայն դիվերսիֆիկացիայի հիման վրա նվազեցնում են ավանդատուների ռիսկերը: Բացի դրանից, մասնագիտանալով վարկային գործառնություններում, բանկերն ունեն հավանական փոխառուների վարկունակությունը ճիշտ գնահատելու ավելի մեծ հնարավորություն, դրանով իսկ նրանք իրենց գործունեությամբ նվազեցնում են տնտեսական համակարգում ռիսկի ամորտիզացիայի աստիճանը:

Դրամական եկամուտները խնայողությունների տեսքով հավաքագրումը և դրանց վերածումը կապիտալի:

Հասարակության տարբեր շերտերը ստանում են տարբեր դրամական եկամուտներ, որոնց մի մասը կարճատև կամ երկարատև ժամկետով կուտակվում են գալիք ծախսերի համար: Այդ դրամական եկամուտների տեսքով գոյացած խնայողություններն ինքնին չեն հանդիսանում կապիտալ և բանկերի կամ այլ վարկային կազմակերպությունների բացակայության պայմաններում կվերածվեին չաշխատող ակտիվի:

Բանկերը (ինչպես նաև այլ վարկային կազմակերպությունները) հավաքագրում են այդ խնայողություններն ավանդների ձևով, որի արդյունքում դրանք վերածվում են փոխատվական կապիտալի: Վերջինս բանկերը տրամադրում են առևտրական ու արդյունաբերական ձեռնարկություններին, որոնք բանկերից ստացված վարկային միջոցներն օգտագործում են իրենց ձեռնարկությունում: Դրանով իսկ տարատեսակ խնայողությունները բանկերի օգնությամբ ի վերջո դառնում են կապիտալ:

Հանդես գալով ֆինանսական շուկայում վարկային ռեսուրսների պահանջով՝ բանկերը ոչ միայն հավաքագրում են տնտեսության մեջ առկա խնայողությունները, այլև ձևավորում են միջոցների կուտակման համար բավականին արդյունավետ խթաններ: Դրամական միջոցների խթանները ձևավորվում են ճկուն ավանդային քաղաքականության հիման վրա: Բացի բարձր տոկոսադրույքներից, բանկի ավանդատուներին անհրաժեշտ են նաև ապահովության երաշխիքներ: Նման երաշխիք կարող է ծառայել բանկի ակտիվների ապահովագրման ֆոնդի ստեղծումը, ավանդային ներդրումների ապահովագրումը և այլն: Ավանդատուների համար կարևոր նշանակություն ունի առևտրային բանկի գործունեության և ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության տիրապետումը:

Բանկերի միջնորդությունը վճարումներում:

Բանկերի երրորդ կարևորագույն գործառնությամբ միջնորդությունն է առանձին սուբյեկտների միջև կատարվող վճարումներում: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներին իրենց կողմից իրականացվող գործառնությունների ընթացքում հաճախ հարկ է լինում կատարելու անկանխիկ վճարումներ իրենց բանկային հաշիվներից:

Բանկերը հանդես գալով որպես վճարումներում միջնորդներ, իրենց վրա են վերցնում հաճախորդների համար այս գործառնության կատարումը: Տնտեսավարող սուբյեկտները շահագրգռված են վճարումներում բանկային միջնորդությամբ, քանի որ դրամական գործառնությունների և հաշվարկների համակենտրոնացումը բանկերում կրճատում է նրանց ծախսերը գանձապահների, հաշվապահների և այլ հաստիքների պահպանման համար:

Բանկերի այս գործառնությամբ սերտորեն կապված է առաջին գործառնության հետ: Արդի պայմաններում բանկերը հաճախորդների հանձնարարությամբ իրականացնում են ապրանքների ու ծառայությունների համար վճարումներ (օրինակ, վճարումների էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ չեկեր դուրս գրելու և հաշվանցելու, բանկային հաշիվներից կանխիկ դրամական միջոցների հանձնելու համար բանկումատուների միջոցով): Տվյալ գործառնությամբ հանդես է գալիս նաև այն դեպքերում, երբ բանկերը ֆոնդային բորսայում արժեթղթերով գործառնություններում հանդես են գալիս որպես միջնորդ, ներդրումային խորհրդատվություն իրականացնող, ներդրումային ընկերություն հանդիսացող կազմակերպություն:

Շրջանառության վարկային գործիքների ստեղծում:

Բանկերի գործառնություններից է շրջանառության վարկային գործիքների (բանկային տոմսերի, չեկերի) ստեղծումը, որոնք փոխարինում են թղթադրամներին և մետաղադրամներին:

Կատարելով վերոհիշյալ գործառնությունները, բանկերը նպաստում են ընդլայնված վերարտադրությանը հետևյալ ճանապարհներով՝

- ձեռնարկություններին փոխատվական կապիտալ տրամադրելով, որոնք օգտագործվում են ձեռնարկությունների ընդլայնման համար
- շրջանառության ոչ արտադրական ծախսերի կրճատման շնորհիվ դրամարկղային գործառնությունների համակենտրոնացման, անկանխիկ հաշվարկների զարգացման և մետաղադրամների շրջանառության վարկային գործիքներով փոխարինելու
- դրամական խնայողությունների և անձնապես սպառվող եկամուտների մի մասի լրացուցիչ կապիտալի փոխարկման:

2.3. Բանկային գործառնություններ

ՀՀ բանկային օրենսդրությամբ բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, [օտարերկրյա բանկերի](#) մասնաճյուղերն իրենց գործունեության ընթացքում կարող են իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

- ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ
- բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ
- գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ)
- դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ
- ե) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները
- զ) թողարկել, գնել (գեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, նման այլ գործառնություններ կատարել
- է) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել:
- ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում)
- թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ
- ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ
- ի) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ)
- լ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ
- խ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն
- ծ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:
- Կենտրոնական բանկը կարող է թույլատրել բանկերին իրականացնելու բանկային օրենսդրությամբ ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են, կամ սերտորեն կապված են բանկային գործունեության, կամ վերը նշված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելի չի հակասում բանկային օրենսդրության նպատակներին և էականորեն չի վտանգում բանկերի ավանդատուների և վարկատուների շահերը:
- Բանկերը կարող են կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրենց բանկային օրենսդրությամբ թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:
- Բանկերը չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է բանկի էությունը:
2. Որո՞նք են բանկերի գործառնությունները:
3. Ո՞րն է բանկերի դերը տնտեսության մեջ:
4. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի «ապրանքը»:
5. Որո՞նք են բանկի առանձնահատկությունները, որպես տնտեսավարող սուբյեկտի:
6. Ո՞րն է «բանկ» հասկացության սահմանումը:
7. Որո՞նք են բանկի և առևտրական ձեռնարկության տարբերությունները:
8. Որո՞նք են բանկերի և վարկային կազմակերպությունների նմանությունը և տարբերությունները:

ՓԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային համակարգը մի շարք զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում:

Ուսուցիչական նպատակները: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝

- տալ բանկային համակարգի սահմանումը
- բացատրել բանկային համակարգի առանձնահատկությունները մի շարք զարգացած երկրներում
- ներկայացնել ՀՀ բանկային համակարգը
- ներկայացնել ՀՀ բանկային համակարգի մեջ ընդգրկվող սուբեկտների սահմանումը:

3.1. Միջազգային բանկային համակարգ

Բանկային համակարգը այս կամ այն երկրում պատմականորեն ձևավորված և օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապված բանկերի և այլ վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգի շրջանակներում: Բանկային համակարգը երկրի ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն է, ֆինանսական համակարգի հանգուցային օղակը: Ներկայումս մեծ թվով երկրներում գործում է երկմակարդակ բանկային համակարգ, որի առաջին մակարդակում գտնվում է կենտրոնական բանկը (ԱՄՆ-ում՝ Համաերկրային պահուստի համակարգը), իսկ երկրորդ մակարդակում՝ առևտրային բանկերի և այլ հաշվարկավարկային հիմնարկների ցանցը: Կենտրոնական բանկը վարում է պետական էմիսիոն, արժույթային և դրամավարկային քաղաքականություն, հանդիսանում է պահուստային համակարգի միջուկը: Առևտրային բանկերն իրականացնում են բոլոր բանկային գործառնությունները:

Երկմակարդակ բանկային համակարգն առաջինը ստեղծվել է Մեծ Բրիտանիայում, այն բանից հետո, երբ 1694 թ. Անգլիայի բանկն ստացավ թղթադրամներ թողարկելու մենաշնորհային իրավունք, որոնք պարտադիր ընդունվում էին բոլոր վճարումների ժամանակ: Այդ համակարգը ներառում է կենտրոնական բանկը, առևտրային, խնայողական, ներդրումային մասնագիտացված (առևտրային) բանկերը, ինչպես նաև հաշվարկային տները: Վերջիններս զբաղվում են կառավարության կարճաժամկետ արժեթղթերի (գանձապետական մուրհակների) հաշվառմամբ: Առևտրային բանկերը կատարում են տարբեր տեսակի գործառնություններ (այդ թվում՝ արժեթղթերի տեղաբաշխում, ֆինանսական խորհրդատվություն, գույքի կառավարում, միջազգային գործառնությունների գծով հաշվարկներ):

1863թ-ին ԱՄՆ-ում ընդունվեց ազգային արժույթը, իսկ 1 տարի անց ստեղծվեց Ազգային բանկը, որը կառավարության կողմից տրված լիազորության սահմաններում լիցենզիա է տալիս բանկային գործառնություններ իրականացնողներին: Այդ ժամանակվանից այն բանկերը, որոնք լիցենզիա են ստացել և վերահսկվում են Համաերկրային (ֆեդերալ) իշխանությունների կողմից, կոչվեցին ազգային բանկեր, իսկ այն բանկերը, որոնք լիցենզիա են ստացել Նահանգների իշխանություններից, կոչվեցին Նահանգների բանկեր: Այսպիսով, ԱՄՆ-ում ձևավորվեց երկակի ենթակայության բանկային համակարգ: Ժամանակակից պայմաններում ԱՄՆ-ի բոլոր ազգային բանկերը պետք է մտնեն Համաերկրային պահուստի համակարգի մեջ, որոշակի պահանջների հետևելու պայմանով: Համանման համակարգ գոյություն ունի նաև փոխառված-խնայողական ասոցիացիաների, վարկային միությունների և փոխադարձ խնայողական բանկերի համար: ԱՄՆ-ի բանկային համակարգը գլխավորում է կենտրոնական բանկը կամ Համաերկրային պահուստի համակարգը, որը բաղկացած է կառավարիչների խորհրդից և համերկրային պահուստի բանկերից: Ներկայումս ԱՄՆ-ում հաշվարկվում են տասնյակ հազարից ավելի առևտրային բանկեր, որոնցից առավել մեծ տարածում են ստացել առանց մասնաճյուղերի բանկերը: Դրա համար էլ ԱՄՆ-ը հանդիսանում է ամենամեծ թվով առևտրային բանկեր ունեցող երկիրը:

ԱՄՆ-ում բոլոր ֆինանսական միջոցները բաժանվում են դեպոզիտային (առևտրային բանկեր, փոխադարձ-խնայողական բանկեր, փոխադարձ-խնայողական ասոցիացիաներ, վարկային միություններ) և ոչ դեպոզիտային ընկերությունների (կյանքի, գույքի ապահովագրության ընկերություններ, մասնավոր կենսաթոշակային հիմնադրամներ, ներդրումային, ֆինանսական ընկերություններ, դրամական շուկայի փոխադարձ հիմնադրամներ և այլն):

Ճապոնիայի բանկային համակարգը ներկայացվում է ճապոնիայի բանկով, առևտրային բանկերով և այլ ֆինանսական ինստիտուտներով: Այս երկրում առևտրային բանկերը բաժանվում են քաղաքային բանկերի, տարածաշրջանային բանկերի, տրաստ-բանկերի, երկարաժամկետ վարկավորման բանկերի, և օտարերկրյա բանկերի: Քաղաքային բանկերը խոշորագույն բանկերն են, որոնք վարկավորում են, որպես կանոն, արդյունաբերական կոնցեռներին: Դրանք ունիվերսալ բանկեր չեն, սակայն, սկսած 1982 թ. ստացել են ճապոնական բորսայում արժեթղթերով առևտուր իրականացնելու իրավունք: Տարածաշրջանային բանկերի գործունեությունը սահմանափակված է տարածքային հատկանիշով, ունեն գործառնությունների համեմատաբար փոքր ծավալ և վարկավորում են փոքր ու միջին բիզնեսը, մասամբ ներգրավում են նաև խնայողական ավանդներ: Երկարաժամկետ վարկավորման բանկերը համագործակցում են խոշորագույն ձեռնարկությունների հետ, մասամբ դրանք հիփոթեքային բանկեր են: Հավատարմագրային-բանկերը կառավարում են ձեռնարկությունների գույքը, սակայն 1945 թ հետո ստացան ձեռնարկությունների երկարաժամկետ ֆինանսավորման և ֆինանսական կառավարման իրավունք: Օտարերկրյա բանկերը այլ երկրների բանկերի մասնաճյուղերն են և ներկայացուցչությունները:

Ֆրանսիայի բանկային համակարգը բաղկացած է կենտրոնական բանկից, դեպոզիտային (առևտրային) բանկերից, գործարար (ներդրումային) բանկերից և խնայողական բանկերից: Բանկային համակարգում առաջատար դիրք են գրավում դեպոզիտային բանկերը, որոնք կատարում են առևտրային բանկերի դերը: Այս երկրի բանկային համակարգի առանձնահատկությունն այն է, որ նա գտնվում է պետական կամ խառը սեփականության ներքո: Բանկերի հետ միասին գործում է նաև մասնագիտացված ոչ բանկային

Ֆինանսավարկային ինստիտուտների (ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների, ներդրումային և ֆինանսական ընկերությունների) համակարգը: Այդ հիմնարկները ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդներ ներգրավելու համար լուրջ մրցակիցներ են:

Գերմանիայի բանկային համակարգը ներկայացվում է կենտրոնական բանկով, առևտրային բանկերով, հիփոթեքային և խնայողական բանկերով: Համակարգում առաջատար դիրք է գրավում բանկերի մեծ եռյակը՝ Դոյչբանկը, Դրեզդներբանկը և Կոմերցբանկը:

Իրենց նշանակությամբ երկրորդ տեղը զբաղեցնում են հիփոթեքային բանկերը, որոնք կատարում են հատուկ գործառնություններ և զբաղվում են նաև վարկային այլ գործունեությամբ: Գերմանիայում առևտրային բանկերը կատարում են նաև ներդրումային բանկերի գործառնություններ, զբաղվելով արժեթղթերի տեղաբաշխմամբ և երկարաժամկետ վարկավորմամբ:

Իտալիայի բանկային համակարգը բաղկացած է կենտրոնական բանկից և առևտրային բանկերից, որոնք, իրենց հերթին, բաժանվում են կարծաժամկետ և միջին ու երկարաժամկետ վարկավորման ինստիտուտների: Իտալիայի կենտրոնական բանկը հիմնվել է 1893թ., իսկ բանկնոտներ թողարկելու մենաշնորհային իրավունք ստացել է միայն 1926-ին: Կարծաժամկետ վարկավորման ինստիտուտները ներառում են վեց հիմնական խմբեր՝ պետական վարկային ինստիտուտներ, ազգային շահերի բանկեր, ոչ պետական առևտրային բանկեր, խնայողամարկդներ, արհեստագործական և գյուղատնտեսական ինստիտուտներ, մասնագիտացված վարկային ինստիտուտներ: Միջին ու երկարաժամկետ վարկավորման ինստիտուտները միջոցները ձևավորում են միջին ժամկետային փոխառությունների թողարկման և ավանդների հաշվին:

Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգի առաջին մակարդակը ներկայացվում է կենտրոնական բանկով, երկրորդը՝ առևտրային, խնայողական, հիփոթեքային, մասնագիտացված բանկերով: Առևտրային բանկերը բանկային համակարգի հիմնական օղակն են և իրականացնում են գրեթե բոլոր բանկային գործառնությունները: Հիփոթեքային բանկերն իրենց գործունեությունը հիմնում են բնակելի տների շինարարության համար հիփոթեքային վարկերի տրամադրման վրա, խնայողական բանկերը ներգրավում են բնակչության խնայողությունները, տրամադրում սպառողական վարկեր, կատարում արտարժույթային և հաշվարկային գործառնություններ: Մասնագիտացված բանկերը մատուցում են մեկ կամ մի քանի տեսակի բանկային ծառայություններ:

3.2. ՀՀ բանկային համակարգը

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

ՀՀ կենտրոնական բանկը երկրի գլխավոր բանկն է, որն օժտված է բանկնոտների մենաշնորհային թողարկման, դրամաշրջանառության կարգավորման, բանկերի և այլ վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկման, դրամավարկային և արժույթային քաղաքականության մշակման և իրականացման, երկրի պաշտոնական միջազգային պահուստների պահպանման և կառավարման իրավունքով:

Բանկը իրավաբանական անձ է, որը բանկային օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված լիցենզիայի հիման վրա իրականացնում է բանկային գործունեություն:

Բանկի մասնաճյուղը՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) բանկային օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

Բանկի ներկայացուցչությունը բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և բանկային օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

Օտարերկրյա բանկերը կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Օտարերկրյա բանկի մասնաճյուղը բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ է իրականացնում լիցենզիայի հիման վրա: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմաններ սահմանել: Այդ պայմանները պետք է միևնույնը լինեն օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր մասնաճյուղերի համար:

ՀՀ բանկային համակարգում գործող բանկերը հանդիսանում են ունիվերսալ բանկեր, այսինքն կարող են իրականացնել օրենսդրությամբ նախատեսված բոլոր տեսակի բանկային գործառնությունները:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչ՞ է բանկը:
2. Ի՞նչպես կարելի է ներկայացնել և բնութագրել ՀՀ բանկային համակարգը:
3. Ի՞նչ է մասնաճյուղը:
4. Ի՞նչ է ներկայացուցչությունը:
5. Որո՞նք են բանկային համակարգի առանձնահատկությունները մի շարք երկրներում:

ՉԼՈՒԽ 4. ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԿԱՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ տալ բանկերի դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների, բացատրել առևտրային բանկերի կառուցվածքը և կառավարումը, ներկայացնել բանկերի կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործառնությունները և կառավարման մարմինների իրավասությունները :

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել բանկերի դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների
- բնութագրել բանկերի տարբեր տեսակները
- ներկայացնել բանկերի կազմակերպական կառուցվածքները
- ներկայացնել բանկերի կառավարման մարմինները և նրանց հիմնական իրավասությունները
- բնութագրել բանկերի վերստուգիչ հանձնաժողովի դերը և գործառնությունները:

4.1. Բանկերի տեսակները

Իրենց էության միասնականությամբ հանդերձ, բանկերի դասակարգումը ենթադրում է դրանց բաժանում ըստ տարբեր հատկանիշների (չափանիշների): Ամբողջականության մեջ դրանք օգնում են բազմակողմանիորեն յուրացնել բանկերի բնույթը: Այդ դասակարգման խմբերն արտացոլում են տվյալ երկրում բանկային գործի պատմական զարգացման և կազմակերպման առանձնահատկությունները: Գործնականում բանկերը կարելի է դասակարգել, ելնելով հետևյալ չափանիշներից.

1. Իրենց առջև դրված խնդիրներից
 - Կենտրոնական բանկ (եմիսիոն)
 - առևտրային
2. Կազմակերպական - իրավական ձևից

- կոոպերատիվ
- փայտիտիական
- բաժնետիրական
 - բանկեր - ԲԲԸ
 - բանկեր - ՓԲԸ
- 3. Գործունեության բնույթից.
 - ունիվերսալ
 - մասնագիտացված

Բանկերի գործունեությունն ըստ իրենց առջև դրված խնդիրների, կարելի դասակարգել երկու խմբի.

1. Էմիսիոն բանկեր
2. առևտրային բանկեր

Էմիսիոն բանկերն օրենսդրորեն օժտված են բանկնոտներ թողարկելու, երկրում դրամաշրջանառությունը, արտարժույթի փոխարժեքը և վարկը կարգավորելու, երկրի արժութային պահուստների պահպանման մենաշնորհային իրավունքով: Նշված խնդիրն օրենսդրորեն հիմնականում դրվում է կենտրոնական բանկերի վրա: Կենտրոնական բանկը տվյալ երկրի գլխավոր բանկն է, որը պատասխանատու է.

1. գների կայունության համար.
2. երկրի օրինական վճարամիջոցի թողարկման համար.
3. բանկային համակարգի կայունության և հուսալիության համար.
4. վճարահաշվարկային համակարգի ստեղծման և զարգացման համար:

Կենտրոնական բանկն օժտված է դրամանիշերի թողարկման, դրամաշրջանառության կարգավորման, բանկերի և այլ վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկման, դրամավարկային և արժութային քաղաքականության մշակման և իրականացման, երկրի պաշտոնական միջազգային պահուստների պահպանման և կառավարման իրավունքով:

Չանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալը՝ պետական բյուջեն սպասարկելիս, իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը:

Տարբեր երկրներում կենտրոնական բանկերն անվանում են տարբեր կերպ.

1. ազգային,
2. պետական
3. ժողովրդական:

Պատմականորեն կենտրոնական բանկերը առաջացել են որպես բաժնետիրական ընկերություններ, որոնք օժտված էին հատուկ իրավասություններով: Մի շարք երկրներում կենտրոնական բանկի կապիտալի մեծ մասը (կամ ամբողջությամբ) պատկանում է պետությանը, թեև դրանց բաժնետեր կարող են լինել նաև առևտրային բանկերը և ֆինանսական ինստիտուտները: Կենտրոնական բանկերը հատուկ տեղ են գրավում վարկային համակարգում որպես «բանկերի բանկ»: Մինչև XX դարի սկզբները, էմիսիոն բանկերը եղել են մասնավոր բանկեր, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին սկսվեց դրանց ազգայնացումը կամ հանձնումը պետության հսկողությանը:

Առևտրային բանկերն ոչ պետական վարկային հիմնարկներ են, որոնք իրականացնում են ունիվերսալ բանկային գործառնություններ, կազմակերպություններին և բնակչությանը մատուցում են բազմատեսակ ֆինանսական ծառայություններ:

Առևտրային բանկերը, ի տարբերություն կենտրոնական բանկերի, չունեն դրամանիշերի թողարկման իրավունք:

Կարող են հիմնադրվել հետևյալ կազմակերպական - իրավական ձևերի բանկեր.

1. բաժնետիրական
2. փայտտիրական
3. կոոպերատիվ:

Բաժնետիրական բանկերը որպես բաժնետիրական ընկերություն կազմակերպական-իրավական ձևով հիմնադրված բանկերն են: Բաժնետիրական բանկի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը բաժնետերերը կրում են իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում: Կարող են լինել բաց կամ փակ բաժնետիրական ընկերությունների ձևով կազմավորված բանկեր:

Բաց բաժնետիրական ընկերության (ԲԲԸ) մասնակիցները կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը՝ առանց մյուս բաժնետերերի համաձայնության: Այդպիսի ընկերությունը կարող է անցկացնել իր կողմից թողարկված բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն, նրա բաժնետոմսերը կարող են ազատ գնվել և վաճառվել արժեթղթերի շուկայում: ԲԲԸ բաժնետերերի թիվը չի սահմանափակվում:

Փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) բաժնետոմսերը չեն գնվում և վաճառվում արժեթղթերի շուկայում, և նրա վրա չեն տարածվում բաց բաժնետիրական ընկերության (ԲԲԸ) գործունեությանը վերաբերող շատ կանոններ: Օրինակ, պարտավոր չէ, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը: ՓԲԸ բաժնետերերի թիվը սովորաբար սահմանափակ է (օրինակ, Մեծ Բրիտանիայում՝ 50-ից, իսկ Չայաստանում՝ 49-ից ոչ ավելի):

Փայտտիրական բանկերը որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կազմակերպական-իրավական ձևով հիմնադրված բանկերն են: Այդպիսի համատեքստում «փայ» բառը նշանակում է, որ դրանք բաժնետիրական բանկեր չեն. մասնակիցների բաժնետոմսերը կանոնադրական կապիտալում հասկացվում են որպես փայեր, այլ ոչ թե արժեթղթեր՝ բաժնետոմսերի ձևով:

Կոոպերատիվ բանկերը որպես կոոպերատիվ, կազմակերպական-իրավական ձևով հիմնադրված բանկերն են: Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը: Կոոպերատիվ բանկի մասնակիցներն, անկախ բանկի կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության չափից, ունեն մեկ ձայնի իրավունք:

Բանկերն իրենց գործունեության սկզբունքներից ելնելով դասակարգվում են երկու խմբի.

1. մասնագիտացված
2. ունիվերսալ:

Մասնագիտացված բանկերը առևտրային բանկեր են, որոնք մասնագիտացված են մեկ կամ մի քանի տեսակի բանկային գործառնությունների գծով, տնտեսության որևէ ճյուղի (ենթաճյուղի), ձեռնարկությունների խմբերի վարկավորմամբ, հաճախորդների որոշակի խմբի սպասարկմամբ:

Մասնագիտացված բանկերից են՝ ինվեստիցիոն, հիփոթեքային, իննովացիոն, խնայողական, գյուղատնտեսական, արտաքին առևտրական բանկերը և այլն: Բացի դրանից, այս բանկերի կարգին պետք է դասել նաև միջազգային և տարածաշրջանային արժուրավարկային և ֆինանսական կազմակերպությունները, որոնք կոչված են ապահովելու միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորումը (օրինակ՝ Չամաշխարհային բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Եվրամիության համակարգում մի շարք բանկեր և այլն):

Ինվեստիցիոն բանկերը զբաղվում են տարբեր ճյուղերի, գլխավորապես արդյունաբերության, առևտրի և տրանսպորտի ֆինանսավորմամբ և երկարաժամկետ վարկավորմամբ: Դրանց միջոցով բավարարվում է հիմնական կապիտալի նկատմամբ արդյունաբերական և այլ ձեռնարկությունների պահանջարկի զգալի մասը: Ի տարբերություն առևտրային բանկերի, ինվեստիցիոն բանկերն իրենց ռեսուրսների մեծ մասը հավաքագրում են սեփական բաժնետոմսերի, պարտատոմսերի և փոխառու այլ պարտավորությունների թողարկման, ինչպես նաև առևտրային բանկերից վարկերի ստացման ճանապարհով: Դրա հետ միասին, նրանք ակտիվ դեր են խաղում արդյունաբերական և այլ ընկերությունների բաժնետոմսերը թողարկելու և տեղաբաշխելու գործում:

Հիփոթեքային բանկը մասնագիտացված բանկ է, որը զբաղվում է հիփոթեքային վարկերի (անշարժ գույքի գրավի դիմաց վարկերի) տրամադրմամբ, անշարժ գույքի ձեռք բերման, հիփոթեքների վերավաճառքի, տարբեր տեսակի տեխնիկական ծառայությունների մատուցման գործունեությամբ: Հիփոթեքային բանկերի կողմից տրամադրվող վարկերը սովորաբար ունեն երկարաժամկետ բնույթ: Նրանց դրամական միջոցների աղբյուրներն առավելապես այն հաճախորդների ավանդներն են, որոնք ցանկանում են ստանալ հիփոթեքային վարկ, և բանկի սեփական կապիտալը: Նրանք հավաքագրում են ռեսուրսներ՝ արժեթղթերի հատուկ տեսակի՝ գրավաթղթերի թողարկման միջոցով, որոնց համար որպես ապահովում է ծառայուն բանկերում գրավադրված անշարժ գույքը:

Կախված վարկավորման ուղղություններից, հիփոթեքային բանկերը բաժանվում են հողային բանկերի, որոնք վարկ են տրամադրում հողամասի գրավի դիմաց, մելիորատիվ բանկերի, որոնք վարկ են տրամադրում մելիորատիվ (հողաբարելավման) աշխատանքների համար, կոմունալ բանկերի, որոնք վարկ են տրամադրում քաղաքի անշարժ գույքի գրավի դիմաց:

Խնայողական բանկը ավանդներ է ընդունում հիմնականում բնակչությունից, առաջարկում է խնայողական տարբեր հաշիվների բացում և վարում, ներդրումներ է կատարում հուսալի արժեթղթերում (այդ

թվում պետական պարտատոմսերում), ինչպես նաև առաջարկում է հաշվարկային ծառայություններ, վարկեր, վարկային քարտեր, բանկային փոխառություններ և այլն: Խնայողական բանկերը նպաստում են բնակչության խնայողությունների և ազատ դրամական միջոցների՝ բանկային համակարգ ներգրավմանը: Կարող է ստեղծվել կամ որպես բաժնետիրական ընկերություն կամ որպես փոխադարձ խնայողական բանկ:

Ներկայումս գործում են խնայբանկերի մի քանի տեսակներ՝ փոխադարձ - խնայողական և փոստա - խնայողական:

Փոխադարձ - խնայողական բանկերը նույնպես կոոպերատիվ բանկային հիմնարկների տարատեսակն են, տարածված են ԱՄՆ-ում, որը չունի բաժնետիրական կապիտալ: Առաջացել են 19 դարի սկզբներին՝ բնակչության փոքր խնայողությունները հավաքագրելու նպատակով: Դրանց առանձնահատկությունն այն է, որ դրանք չունեն բաժնետիրական կապիտալ: Ավանդատուների միջոցները կուտակվում են բացվող խնայողական և ինվեստիցիոն հաշիվներում, ինչպես նաև տոկոսային չեկային հաշվում (ՆԱՌԲ - հաշվում): Իրականացվող գործառնությունների շրջանակով փոխադարձ խնայողական բանկերը մոտ են առևտրային բանկերին: Նրանց նկատմամբ կիրառվում է պետական հարկային արտոնյալ ռեժիմ, քանի որ դրանք դասվում են ոչ առևտրային հիմնարկների դասին:

Փոստա - խնայողական բանկերը արտերկրում առավել տարածված խնայողական հիմնարկներից են և կազմակերպական առումով միավորված են փոստի համակարգի հետ: Առաջացել են 19 դարի վերջերին և 20 դարի սկզբներին: Ժամանակակից պայմաններում լայնորեն տարածված են Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, ճապոնիայում, Եգիպտոսում, Չինաստանում և այլն: Հանդես են գալիս պետության վարկատուներ և սպասարկում են բնակչությանը այն վայրերում, որտեղ չկան առևտրային բանկեր: Այս բանկերը չունեն բաժնետիրական կապիտալ, նրանց պարտավորությունները երաշխավորված են պետության կողմից: Բնակչության միջոցները կուտակում են փոստի բաժանմունքների միջոցով, որոնց դերը սահմանափակվում է միջոցների ընդունմամբ և տրամադրմամբ: **Ալտիվները** կազմված են պետական արժեթղթերից: Կատարում են հետևյալ գործառնությունները՝ բնակչության և ձեռնարկությունների վարկավորում, չեկերի վճարում, փոխանցումների իրականացում:

Ունիվերսալ բանկերը են համարվում այն առևտրային բանկերը որոնք օրենքով սահմանված կարգով ստացված լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել բանկային օրենսդրությամբ սահմանված բոլոր բանկային գործառնությունները:

Ըստ գործունեության մասշտաբի, բանկերը կարելի է դասակարգել խիստ պայմանական: Որոշ երկրներում վարկային հիմնարկների ընդհանուր թվի մեջ զգալի տեղ են գրավում այսպես կոչված փոքր վարկի հիմնարկները՝ վարկային կոոպերացիաները, փոխադարձ վարկի ընկերությունները, փոխատվական-խնայողական բանկերը, շինարարական-խնայողական բանկերը, խնայողամարկղերը և այլն:

Միջազգային բանկային պրակտիկայում հանդիպում են նաև բանկերի դասակարգման այլ չափանիշներ: Այսպես, ԱՄՆ-ում, որտեղ սահմանված է կրկնակի ենթակայության բանկային համակարգ, առանձնացվում են Համերկրային պահուստի համակարգին վերաբերող բանկեր, և բանկեր, որոնք կարգավորվում են առանձին նահանգների կողմից, ապահովագրության հետ կապված գործում են բանկեր, որոնց ավանդներն ապահովագրված են **Ավանդների** ապահովագրության համերկրային կորպորացիայի կողմից, և բանկեր, որոնց ավանդները չեն ապահովագրվում այդ կորպորացիայում:

Բանկերի վերը բերված դասակարգման վերաբերյալ հարկ է կատարել հետևյալ վերապահումը. բանկերի թվարկված տեսակները հաճախ տեսական ենթադրություններ են այն իմաստով, որ իրականում դրանք «մաքուր» տեսքով գոյություն չունեն, և բանկերի յուրաքանչյուր խումբը բնութագրվում է ինչպես առանձնացված, գերիշխող, այնպես էլ այլ գծերով:

4.2. Բանկերի կառավարումը

Բանկը, որպես իրավաբանական անձ, քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով: Նրա կանոնադրությամբ պետք է սահմանվի նաև բանկի կառավարման կարգը: Բանկի կառավարման մարմինները պարտավոր են ապահովել նրա առևտրային գործունեության անխափան և արդյունավետ ղեկավարումը՝ բանկի առջև դրված խնդիրների իրագործման նպատակով: Բանկի հիմնադիրներն անմիջապես մասնակցում են նրա կառավարմանը: Բանկի կառավարման մարմիններն են մասնակիցների (հիմնադիրների, բաժնետերերի, փայատերերի, անդամների) ընդհանուր ժողովը, բանկի խորհուրդը (տնօրենների խորհուրդը, դիտորդ խորհուրդը) և գործադիր մարմինները, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան:

Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը նրա կառավարման բարձրագույն մարմինն է, որը լուծում է բանկի բոլոր ռազմավարական խնդիրները:

Բանկի կառավարման մարմինների ընտրության կամ նշանակման կարգը սահմանվում է օրենքով և նրա կանոնադրությամբ: Օրենքով սահմանվում են նաև բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և **բանկի** դիտորդ խորհրդի (բանկի խորհրդի) բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը, որոնք չեն կարող փոխանցվել գործադիր մարմինների իրավասությանը: Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) և բաժնետիրական ընկերության (ԲԸ) մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- ընկերության կանոնադրությունը և կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը
- ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը (եթե ԲԸ կանոնադրությամբ այդ հարցերի լուծումը վերապահված չէ տնօրենների (դիտորդ խորհրդի) իրավասությանը)

- ՄՊԸ վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը, ԲԸ-ի տնօրենների (դիտորդ խորհրդի) և վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը
 - ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը, նրա շահույթն ու վնասները բաշխելը
 - ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը:
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և բաժնետիրական ընկերությունների մասին օրենքներով մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը կարող է վերապահվել նաև այլ հարցերի լուծումը:
- Բանկի խորհուրդն իրականացնում է նրա գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և բանկի կանոնադրությամբ վերաբերում են մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:
- Բանկի խորհրդի (տնօրենների, դիտորդ խորհրդի) անդամները սովորաբար ընտրվում են մասնակիցների թվից: Նրանց թիվը կարող է շատ տարբեր լինել, սակայն չի կարող փոքր լինել երեքից:
- Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում, մասնավորապես, հետևյալ հարցերը՝
 - բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
 - բանկի մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, օրակարգի հաստատումը
 - բանկի գործադիր մարմնի (գործադիր տնօրենի, վարչության) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գործադիր տնօրենի և վարչության վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները, եթե բանկի կանոնադրությամբ այդ իրավունքները վերապահված են ընկերության խորհրդին
 - բանկի վերաստուգիչ հանձնաժողովի (վերահսկիողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը
 - ընկերության առևտրային իրականացումը անձի վարձատրության չափի սահմանումը
 - բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը
 - բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, եթե բանկի կանոնադրությամբ կամ բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է ընկերության խորհրդին
 - բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը օրենքով նախատեսված դեպքերում
 - բանկի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը
 - ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը:
- Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է բանկի գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը կամ բանկի գործադիր տնօրենը բանկի վարչության հետ համատեղ:
- Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, բաժնետիրական ընկերությունում գործադիր մարմինը կարող է լինել կոլեգիալ (վարչություն, տնօրինություն) և (կամ) միանձնյա (տնօրեն, գլխավոր տնօրեն), սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), կոոպերատիվի գործադիր մարմիններն են վարչությունը և (կամ) նախագահը: Այսպիսով, այդ մարմինների անվանումները կարող են լինել տարբեր: Սակայն կառավարման կամ գործադիր մարմնի անվանումը չի ազդում նրա իրավասության վրա:
- Եթե բանկի կանոնադրությամբ նախատեսված է ունենալ վարչություն, ապա կանոնադրությամբ պետք է սահմանազատվեն գործադիր տնօրենի և վարչության իրավասությունները: Վարչության առկայության դեպքում ընկերության գործադիր տնօրենը կատարում է նաև բանկի վարչության նախագահի պարտականությունները:
- Բանկի գործադիր մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է բանկի խորհրդի որոշմամբ, եթե բանկի կանոնադրությամբ այդ հարցերը տրված են բանկի խորհրդի իրավասությանը:
- Բանկի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:
- Բանկի գործադիր մարմինը կազմակերպում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի որոշումների կատարումը: Նա ղեկավարում է բանկի ընթացիկ գործունեությունը և հաշվետու է բանկի խորհրդին (տնօրեններին, դիտորդ խորհրդին) ու մասնակիցների ընդհանուր ժողովին:
- Բանկի գործադիր տնօրենը և վարչությունը նշանակվում են բանկի խորհրդի կողմից, եթե բանկի կանոնադրությամբ այդ իրավասությունը չի տրված բանկի մասնակիցների ընդհանուր ժողովին: Բանկի գործադիր տնօրենի և վարչության անդամների հետ պայմանագիրը կնքում է բանկի խորհրդի նախագահը կամ բանկի կանոնադրությամբ սահմանված այլ անձ: Եթե բանկի խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնները զբաղեցնում է միևնույն անձը, ապա պայմանագիրը գործադիր տնօրենի հետ կնքում է բանկի խորհրդի որոշմամբ խորհրդի անդամներից մեկը, իսկ վարչության անդամների հետ՝ բանկի խորհրդի նախագահը:
- Բանկի գործադիր տնօրենը.
 - տնօրինում է բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում բանկի անունից
 - ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում
 - գործում է առանց լիազորագրի

- տալիս է լիազորագրեր
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային
- բանկերում բացում է բանկի թղթակցային (այդ թվում՝ արտարժույթով) հաշիվներ
- բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում բանկի աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, բանկի վարչակազմակերպական կառուցվածքը
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում բանկի աշխատակիցներին
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ
- բանկերում բացում է բանկի թղթակցային (այդ թվում՝ արտարժույթով) հաշիվներ:

Բանկի կանոնադրությամբ կարող են սահմանվել ընկերության գործադիր տնօրենի նաև այլ իրավասություններ:

Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել բանկի գործադիր տնօրենի, բանկի վարչության անդամների, կառավարիչ կազմակերպության կամ անհատ կառավարչի հետ կնքված պայմանագրերը, եթե բանկի կանոնադրությամբ այդ հարցի լուծումը չի տրված բանկի խորհրդի իրավասությանը:

Բանկի վարչությունը ներառում է բանկի գործադիր տնօրենին, նրա տեղակալին (տեղակալներին), գլխավոր հաշվապահին, ինչպես նաև բանկի գործունեությունը կարգավորող այլ վարձու աշխատողներին:

Բանկի վարչությունը գործում է բանկի կանոնադրության, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված վարչության կազմը, նրա նիստերի գումարման, անցկացման և որոշումներ ընդունելու կարգը սահմանող վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ որոշակի պարտականություն և պատասխանատվություն է դրված իրավաբանական անձանց (տվյալ դեպքում՝ բանկի) ղեկավարների վրա: Անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար բանկի մասնակիցների ընդհանուր ժողովն ընտրում է բանկի վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող), որի իրավասությունները սահմանվում են օրենքով և բանկի կանոնադրությամբ:

- վերստուգիչ հանձնաժողովը.
- բանկում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ
- բանկի խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության, ինչպես նաև [Կենտրոնական բանկի](#) հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին
- եզրակացություններ է տալիս բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ
- իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է բանկի կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է բանկի փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և բանկի կանոնադրությանը: Նրա գործունեության կարգը սահմանվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգով:

Վերստուգիչ հանձնաժողովի պահանջով նրանց պետք է ներկայացվեն բանկի, դրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Բանկի վերստուգիչ հանձնաժողովը կազմված է առնվազն երեք անդամից, որոնք նշանակվում են բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Բանկի խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամները հաշվետու են բանկի մասնակիցների ընդհանուր ժողովին:

Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել բանկի խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամների պահանջով:

4.3. Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկը, ինչպես ցանկացած այլ առևտրային կազմակերպություն, ունի կառավարման որոշակի համակարգ և կազմակերպական կառուցվածք: Լավագույն կազմակերպական կառուցվածքի ընտրությունը՝ ամբողջությամբ վերցված բանկի աշխատանքի ճիշտ կազմակերպման և հաջող գործունեության գրավական է: Բանկի կազմակերպական կառուցվածքում առանձնանում են երկու հիմնական պահեր՝ բանկի կառավարման կառուցվածքը և նրա ֆունկցիոնալ ստորաբաժանումների ու ծառայությունների կառուցվածքը:

Բանկն առանձնահատուկ տնտեսավարող սուբյեկտ է. հանդես է գալիս որպես բանկային գործառնություններ իրականացնող ֆինանսավարկային ինստիտուտ: Հետևաբար, նրա կազմակերպական կառուցվածքի և կառավարման ապարատի կառուցվածքի վրա իր կնիքն է թողնում բանկի կողմից իրականացվող

գործունեության առանձնահատկությունը: Դա կարելի է նկատել բանկի աշխատանքի կազմակերպման որոշակի սկզբունքների օրինակով, որոնք թույլ են տալիս իրականացնել բանկային գործառնությունները և նրա առջև դրված խնդիրները:

Բանկերը, որպես կանոն, կազմավորված են ըստ ֆունկցիոնալ հայտանիշի: Դա նշանակում է, որ բանկի կառուցվածքը պետք է հարմարեցված լինի նրա կողմից իրականացվող կոնկրետ գործունեությանը: Քանի որ բանկը խոշոր վարկային կազմակերպություն է, ընդունում է ավանդներ, իրականացնում դրամարկղային, հաշվարկային գործառնություններ, նրա կառուցվածքում պետք է առկա լինեն վարկային, ավանդային, վճարահաշվարկային ստորաբաժանումներ, դրամարկղ և այլն:

Տարիների ընթացքում բանկերը մշակել են մի շարք կազմակերպական կառուցվածքներ, որոնցից յուրաքանչյուրը հարմարեցվել է այն ֆունկցիաների իրականացմանը և ծառայությունների մատուցմանը, որոնց կարիքը զգում են սպառողները: Բանկի կառուցվածքի ձևավորման վերջնական նպատակը հանդիսանում է ամբողջ բանկային գործունեության համալիրի կառավարման հարմարությունը, հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, բանկային ծառայողների աշխատանքի արտադրողականության և բանկի շահութաբերության բարձրացումը:

Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը հիմնականում կարող է պայմանավորված լինել իր առջև դրված խնդիրների իրագործումն առավելագույնս արդյունավետ դարձնելու նպատակով:

Ելնելով միջազգային բանկային փորձից, բանկի կազմակերպական կառուցվածքի մեջ ընդգրկվող ստորաբաժանումները կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝ Front Office, Back Office և Middle Office:

Front Office-ն ընդգրկում է բանկի այն ստորաբաժանումները, որոնք անմիջականորեն շփվում են բանկի գործընկերների և հաճախորդների հետ: Դրանց աշխատակիցներն անմիջապես զբաղված են հաճախորդների հետ գործառնությունների իրականացմամբ և ծառայությունների մատուցմամբ, գործարքներ կնքելով, անմիջապես մասնակցում են բանկի եկամուտների ստեղծման գործընթացներին, ի տարբերություն այն աշխատակիցների, որոնք կատարում են օժանդակ ֆունկցիաներ:

Front Office-ի հիմնական աշխատակիցներից են հաճախորդներին անմիջականորեն սպասարկողները, դրամական շուկայի (վարկային, ավանդային մասնագետները), արտարժույթային շուկայի և արժեթղթերով գործառնությունների մասնագետները:

Չաճախորդներին անմիջականորեն սպասարկողներն ընդունում են հաճախորդներին, նրանց մատուցում խորհրդատվություն, ներկայացնում բանկի կողմից մատուցվող ծառայությունները և սահմանված կարգերն ու արարողակարգերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց ուղարկում գործարքներ կնքող համապատասխան ստորաբաժանումներ:

Վարկային մասնագետների հիմնական գործառնություններն են՝ գործող օրենսդրությանը և բանկի ներքին կանոններին համապատասխան հաճախորդների հետ վարկային, ֆակտորինգային, լիզինգային և այլ ակտիվային գործարքներ կնքելը, վարկային գործեր բացելը և վարելը, տրամադրված վարկերի ժամանակին մարմանը և տոկոսների վճարմանը հետևելը (մոնիտորինգը), գործող կարգին համապատասխան վարկերը դասակարգելը և հնարավոր կորուստների պահուստին ուղղվող հատկացումների գումարը որոշելը, վարկերի և այլ ակտիվային գործարքների վերաբերյալ հաշվետվություններ կազմելը, համապատասխան հաշվապահական ձևակերպումների համար Back Office-ին կարգադրություններ տալը:

Ավանդային գործառնությունների մասնագետների հիմնական գործառնություններն են՝ գործող օրենսդրությանը և բանկի ներքին կանոններին համապատասխան հաճախորդների համար բանկային հաշիվներ բացելը և վարելը, բանկային հաշվի և բանկային ավանդի պայմանագրեր կնքելը, ներգրավված ավանդների ժամանակին մարմանը և տոկոսների վճարմանը հետևելը (մոնիտորինգը), ավանդների վերաբերյալ հաշվետվություններ կազմելը, համապատասխան հաշվապահական ձևակերպումների համար Back Office-ին կարգադրություններ տալը:

Արտարժույթային գործառնությունների մասնագետների հիմնական գործառնություններն են՝ գործող օրենսդրությանը և բանկի ներքին կանոններին համապատասխան հաճախորդների հետ արտարժույթի կանխիկ և ժամկետային գործարքներ կնքելը, արտարժույթային շուկայում գործառնություններ իրականացնելը, արտարժույթային գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ կազմելը, համապատասխան հաշվապահական ձևակերպումների համար Back Office-ին կարգադրություններ տալը:

Արժեթղթերով (ֆոնդային) գործառնությունների մասնագետների հիմնական գործառնություններն են՝ գործող օրենսդրությանը և բանկի ներքին կանոններին համապատասխան արժեթղթերով գործարքներ, այդ թվում՝ ժամկետային գործարքներ կնքելը, արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկայում գործառնություններ իրականացնելը, գործող կարգին համապատասխան արժեթղթերը դասակարգելը և հնարավոր կորուստների պահուստին ուղղվող հատկացումների գումարը որոշելը, արժեթղթերով գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ կազմելը, համապատասխան հաշվապահական ձևակերպումների համար Back Office-ին կարգադրություններ տալը:

Back Office-ն ընդգրկում է բանկի այն ստորաբաժանումը կամ ստորաբաժանումները, որոնք ուղղակի մասնակցություն չեն ունենում բանկային գործառնություններում, այլ իրականացնում են բանկի գործառնությունների հաշվապահական ձևակերպումները (հաշվառումը), հաշվարկները և հաշվետվությունների կազմումը: Այս իմաստով Back Office-ն անվանում են բանկի օժանդակ գրասենյակ կամ գործառնական ստորաբաժանում: Back Office-ը պատասխանատու է հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմման, գործող օրենսդրական պահանջներին և կանոններին դրանց համապատասխանության, ինչպես նաև մասնաճյուղերի միջև կապի համար: Բանկերում այս ծառայության գործառնությունները կատարում է հաշվապահությունը:

Բանկի հաշվապահների հիմնական գործառույթներն են՝ գործող օրենսդրությանը և բանկի ներքին կանոններից համապատասխան հաշվապահական հաշվառում վարելը, բանկի կողմից իրականացված բոլոր գործառնությունների հաշվապահական ձևակերպումներ տալը, ֆինանսական, հարկային և այլ հաշվետվություններ կազմելն ու ժամանակին ներկայացնելը, ֆինանսական հաշվետվություններ հրապարակելը, բանկի մասնաճյուղերի և տարածքային այլ ստորաբաժանումներում հաշվապահական հաշվառման վարմանը և գործառնությունների գրանցմանը հետևելը:

Middle Office-ն ընդգրկում է բանկի ֆինանսատնտեսական գործունեությունը գնահատող, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրավորումն իրականացնող, ֆինանսական շուկաներն ուսումնասիրող, բանկային ռիսկերը գնահատող և կառավարող, բանկի ակտիվների, պասիվների և պահուստների կառավարումն իրականացնող, բանկի կայուն զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվություն հավաքող, մշակող և արդյունքները գործնականում կիրառող, ինչպես նաև բանկի կողմից իրականացվող գործառնությունների պարամետրերը ստուգող, հաստատող կամ մերժող, բանկի ընթացիկ գործառնությունների և դրանց ձևակերպումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումները, և այս իմաստով միջանկյալ դիրք է զբաղում Front Office-ի ու Back Office-ի միջև:

Middle Office-ը սահմանում և Front Office-ին է տրամադրում ընթացիկ օրվա առանձին շուկաների, գործընկերների, գործիքների սահմանաչափերը: Տեխնիկական վերստուգումից բացի, Middle Office-ի կարևորագույն ֆունկցիան է ռիսկերի կառավարումը:

Middle Office-ի հիմնական աշխատակիցներից են ֆինանսական և ռիսկերի վերլուծաբանները:

Ֆինանսական վերլուծաբանների հիմնական գործառույթներն են բանկի ընթացիկ գործունեության մշտական վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղղությամբ համարժեք միջոցառումների ձեռնարկումը կամ առաջարկումը, արտաքին միջավայրի, այդ թվում՝ ֆինանսական շուկայի վերլուծությունը, բանկի հեռանկարային զարգացման ուղղությունների, վարկային քաղաքականության մշակումը, վարկային ներդրումների, արժեթղթերի պորտֆելների, ակտիվների և պասիվների կառավարումը, բանկի կայուն զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը, մշակումը և արդյունքների գործնական կիրառումը, բանկի կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը:

Ռիսկերի վերլուծաբանների հիմնական գործառույթներն են՝ բանկային ռիսկերի վերլուծությունը և գնահատումը, բանկի գործունեության ֆինանսական ցուցանիշների վրա դրանց ազդեցության գնահատումը, ռիսկերի կառավարումը և հեջավորման (ռիսկերից ապահովագրման) ուղղությամբ համարժեք միջոցառումների ձեռնարկումը կամ առաջարկումը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչպիսի հատկանիշներից ելնելով կարելի է դասակարգել բանկերը:
2. Ի՞նչո՞ւմ է կայանում առևտրային և էմիսիոն բանկերի տարբերությունը:
3. Որո՞նք են բանկերի կառավարման մարմինները և դրանց հիմնական իրավասությունները:
4. Որո՞նք են բանկերի կազմակերպական կառուցվածքի վրա ազդող գործոնները:
5. Ի՞նչպե՞ս կարելի է բնութագրել Front Office, Back Office և Middle Office:
6. Ո՞ւմ կողմից է նշանակվում բանկի խորհուրդը:
7. Ի՞նչո՞ւմ է կայանում բանկի վերստուգիչ հանձնաժողովի դերը:

ՓԼՈՒԽ 5. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ բացատրել առևտրային բանկերի գործունեության ընդհանուր կողմերը, այդ թվում՝ ռեսուրսների ձևավորումը և դրանց տեղաբաշխումը, ակտիվների որակը, [շահութաբերությունը](#), իրացվելիությունը և [վճարունակությունը](#):

- **Ունակությունների և հմտությունների նկարագիրը:** Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝
- թվարկել և բացատրել առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքները
- բացատրել առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները և դրանց կառուցվածքը
- ներկայացնել բանկերի կապիտալի հիմնական գործառույթները
- բացատրել և բնութագրել բանկերի ակտիվների կառուցվածքը և որակը
- տալ ակտիվների դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների
- բացատրել բանկերի վճարունակությունը և իրացվելիությունը, ներկայացնել դրանց վրա ազդող գործոնները
- բացատրել բանկերի եկամուտների աղբյուրները, ծախսերի տարրերը և շահութաբերությունը:

5.1. Առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքները և կողմերը

Բանկային գործը, որպես կանոն, գործարարության առանձնահատուկ և ռիսկային բնագավառ է, որը ղեկավարվում է որոշակի սկզբունքներով:

Առևտրային բանկերի գործունեության [հիմնական սկզբունքը](#) բանկի գործունեության իրականացումն է սեփական և [ներգրաված միջոցների](#) շրջանակներում: Սա, մասնավորապես, նշանակում է, որ բանկերը պետք է ապահովեն քանակական համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև:

Բանկերը վճարունակության և իրացվելիության խնդիրներից խուսափելու նպատակով պետք է ապահովեն ոչ միայն քանակական, այլ նաև ժամկետային համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև: Այսինքն, ցանկացած ներդրումային գործառնություն (փոխատվական, բաժանորդագրային, ինվեստիցիոն և այլն) իրականացնելիս բանկը պետք է ուշադրություն դարձնի տեղաբաշխվող միջոցների ձևավորման աղբյուրներին:

Այս սկզբունքը ուղղորդում է բանկին ներգրավման նպատակով փնտրել ցածր ծախսատար և երկարաժամկետ միջոցների աղբյուրներ, ինչպես նաև ներդրման նպատակով էլ ավելի ցածր վտանգ և բարձր եկամտաբերություն ապահովող ներդրումային ոլորտներ:

Չենց այստեղ էլ կատարվում է բանկային կապիտալի տեղափոխումը դեպի ավելի շահութաբեր և արդյունավետ ճյուղեր:

Առևտրային բանկերի գործունեության [երկրորդ սկզբունքը](#) նրանց լիակատար տնտեսական ինքնուրույնությունն է և իրենց գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվությունը:

Տնտեսական ինքնուրույնությունը ենթադրում է բանկի պատասխանատվությամբ սեփական և ներգրավված միջոցների տնօրինման ազատություն, հաճախորդների և ավանդատուների ազատ ընտրություն, շահույթի տնօրինում:

Առևտրային բանկերի գործունեության [երրորդ սկզբունքը](#) այն է, որ բանկի և նրա հաճախորդների միջև հարաբերությունները դրված են շուկայական հիմքերի վրա, կրում են պայմանագրային բնույթ: Բանկը ներդրումային գործունեության ընթացքում առաջնորդվում է շուկայական այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են շահութաբերությունը, ռիսկը, իրացվելիությունը:

Առևտրային բանկերի գործունեության [չորրորդ սկզբունքը](#) այն է, որ բանկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է վերահսկող և կարգավորող մարմնի կողմից, բանկային ռիսկերի զսպման նպատակով հաստատված տնտեսական և իրավական նորմատիվ ակտերով:

Ինչպես արդեն նշել ենք, բանկի հիմնական գործառույթը միջնորդությունն է փոխատուներից փոխառուներին և գնորդներից վաճառողներին դրամական միջոցների տեղաբաշխման գործում, որի ընթացքում առաջնորդվում է ամեն ինչ հաճախորդի և նրա անվտանգության համար՝ գործընկերային և փոխշահավետ հարաբերությունների հիման վրա:

Բանկի շահույթը ձևավորվում է բանկային գործառնություններ իրականացնելու արդյունքում հաճախորդներից գանձվող և նրանց վճարվող տոկոսների տարբերությունից, ինչպես նաև մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող միջնորդավճարների հաշվին:

Պետությունը ի դեմս վերահսկող և կարգավորող մարմնի, հաշվի առնելով բանկային գործի առանձնահատկությունները միայն, սահմանում է «խաղի կանոնները», այլ ոչ թե տալիս է ուղղակի հրամաններ:

5.2. Առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները

Առևտրային բանկերը , ինչպես նաև մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ապահովման համար պետք է տնօրինեն դրամական միջոցների որոշակի գումարի, այսինքն՝ ռեսուրսների:

Առևտրային բանկերի ռեսուրսները կան «բանկային ռեսուրսները» իրենցից ներկայացնում են սեփական և ներգրավված միջոցների ամբողջականությունը, որոնք գտնվում են նրանց տնօրինության ներքո և օգտագործվում են ակտիվային գործառնությունների իրականացման համար:

Բանկի սեփական միջոցները բանկի ակտիվների ու պարտավորությունների տարբերությունն է, որն անվանվում է ընդհանուր կապիտալ: Այս հասկացությունն իր մեջ ներառում է բանկի սեփականատերերի (մասնակիցների) կողմից կատարված ներդրումները, չբաշխված շահույթը, գլխավոր և այլ պահուստները: Այն որոշում է բանկի պարտատերերի շահերը երաշխավորող նրա գույքի նվազագույն չափը, որը կանոնակարգվում է օրենսդրորեն:

Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալը (հիմնադրամը) ստեղծում է գոյության տնտեսական հիմքը և պարտադիր պայման է բանկի որպես իրավաբանական անձի կազմավորման համար:

Գլխավոր պահուստը ստեղծվում է բանկի տրամադրության տակ մնացած զուտ շահույթից՝ բանկի գործունեության ընթացքում առաջացող չկանխատեսված կորուստները հատուցելու նպատակով, և ապահովում է նրա գործունեության կայունությունը: Նրա մեծությունը և հիմնադրամին հատկացումների բաշխման կարգը սահմանվում է բանկի կանոնադրությամբ՝ սովորաբար փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նկատմամբ տոկոսներով:

Բանկի կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև զուտ շահույթի հաշվին ձևավորվող այլ պահուստներ՝ սպառման, կուտակման, բաժնետիրացման, շահաբաժինների վճարման և այլ պահուստներ (հիմնադրամներ):

Ինչպես մենք կտեսնենք ստորև, բանկի կապիտալը կատարում է մի քանի կարևոր գործառնություններ՝ նրա ամենօրյա գործունեության և երկարաժամկետ կենսագործունեության ապահովման մեջ, որպիսիք են նոր բանկի՝ մինչև գործունեություն սկսելը ռեսուրսներով ապահովելը, բանկի հետագա աճի և զարգացման համար նախադրյալներ ստեղծելը, բանկին ռիսկային գործառնություններից ապաստելիք կորուստներից պաշտպանելը, ինչպես նաև հասարակության կողմից բանկի նկատմամբ վստահությունը ամրապնդելը:

Նախ. կապիտալը ծառայում է որպես «սև օրվա փող»՝ բանկին սնանկացումից պաշտպանելու համար (պաշտպանական ֆունկցիա), հատուցում է ընթացիկ կորուստները: Այն խաղում է յուրօրինակ պաշտպանական «բարձիկի» դեր, չեզոքացնում է կորուստները և հնարավորություն է տալիս բանկին շարունակելու գործունեությունը:

Երկրորդ. կապիտալն ապահովում է բանկի ստեղծման, կազմավորման և գործունեության համար անհրաժեշտ գործընթացը՝ մինչև բանկը կներգրավի բավականաչափ ավանդներ: Նոր ստեղծվող բանկին անհրաժեշտ են միջոցներ նույնիսկ մինչև նրա ստեղծվելը՝ բանկի գործունեության համար անհրաժեշտ տարածքի ձեռքբերման կամ վարձակալության, սահմանված պահանջներին համապատասխան տեխնիկական հագեցման ու պայմանների ապահովման, ինչպես նաև անձնակազմի վարձատրության համար:

Երրորդ. կապիտալն ապահովում է բանկի հաճախորդների վստահությունը բանկի նկատմամբ: Որքան մեծ է բանկի կապիտալը, այնքան մեծ է ներդրողների, վարկառուների և հաճախորդների վստահությունը նրա նկատմամբ, որովհետև կապիտալի մեծությունը բանկի հուսալիության գրավականն է:

Վերջապես, կապիտալը ծառայում է որպես բանկի աճի կարգավորիչ (կարգավորիչ ֆունկցիա), աջակցում է բանկի աճին: Քանի որ բանկերի գործունեությունը կարգավորող մարմինները և ֆինանսական շուկաները պահանջում են, որպեսզի բանկի վարկային ներդրումները և մյուս ռիսկային ակտիվներն աճեն մոտավորապես նույն տեմպերով, ինչ տեմպով որ աճում է նրա կապիտալը, կորուստները փոխհատուցելու համար «սև օրվա փողի» բանակը մեծանում է համապատասխան ռիսկի ավելացմանը զուգընթաց: Բանկի կապիտալի ցուցանիշի օգնությամբ պետական մարմիններն իրականացնում են բանկերի գործունեության գնահատում և վերահսկողություն: Կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված բանկային այլ սահմանափակումները (մասնավորապես ինվեստիցիոն գործունեության սահմանափակումները) հիմնականում ելնում են բանկի սեփական կապիտալի մեծությունից:

Կապիտալը և բանկի ռիսկը անմիջական առնչություն ունեն: Կապիտալը զսպում և սահմանափակում է այն ռիսկերը, որոնց հետ անմիջականորեն առնչվում է բանկն իր գործունեության ընթացքում:

Այսպիսով, բանկի ընդհանուր կապիտալի (սեփական միջոցների) չափը մեծ նշանակություն ունի նրա գործունեության համար, և պատահական չէ, որ կարգավորող մարմինները սահմանում են կապիտալի անհրաժեշտ նվազագույն չափը: Այն երբեմն հանդես է գալիս որպես տարածայնությունների առարկա բանկիրների և վերահսկողների միջև: Վերահսկողները սովորաբար պահանջում են ավելի շատ կապիտալ՝ կորուստների կլանման և ռիսկի փոխհատուցման տեսանկյունից, երբ բանկերը նախընտրում են ավելի քիչ կապիտալ (մեծ լեբերեջ)՝ հիմնադիրների կողմից ներդրված միջոցներն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

Բանկի կապիտալի վերոհիշյալ գործառնությունները ցույց են տալիս, որ բանկի սեփական կապիտալը՝ նրա առևտրային գործունեության հիմքն է: Այն ապահովում է բանկի ինքնուրույնությունը և երաշխավորում նրա ֆինանսական կայունությունը՝ հանդիսանալով տարբեր տեսակի բանկային ռիսկերի բացասական հետևանքների մեղմացման կամ հատուցման կարևոր աղբյուր:

Բանկային ռեսուրսների ընդհանուր ծավալում **ներգրավված միջոցները** գերակշռե մաս են կազմում: Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց բանկերի ներգրավված միջոցների կառուցվածքը էական փոփոխություններ է կրել, որոնք հիմնականում պայմանավորված են բանկերի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանցից ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրման նոր եղանակների առաջացմամբ:

Ներգրավված միջոցներ են հանդիսանում այն դրամական միջոցները, որոնք չեն պատկանում կազմակերպությանը, սակայն ժամանակավորապես, մինչև դրանց վերադարձը, գտնվում են նրա տնօրինության ներքո:

Միջազգային բանկային պրակտիկայում ներգրավված ռեսուրսներն, ըստ հավաքագրման աղբյուրների, խմբավորվում են.

- ավանդների (դեպոզիտների)

- ոչ ավանդային ներգրավված միջոցների: Առևտրային բանկերի ներգրավված ռեսուրսներում զգալի տեսակարար կշիռ են կազմում բանկային ավանդները, այսինքն՝ այն դրամական միջոցները, որոնք դրվել են բանկում պահպանելու կամ տոկոսներ ստանալու նպատակով: Ավանդներում տեղաբաշխվող միջոցների հիմնական աղբյուրներն են իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշիվներում գտնվող միջոցները, որոնք նրանց կողմից օգտագործվում են բանկային հաշվի ռեժիմին և բանկային օրենսդրությանը համապատասխան: Ընդունված է տարբերել անժամկետ (ցպահանջ) և ժամկետային ավանդներ:

Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, Բանկային ավանդ է համարվում անձին տրամադրված այն դրամական գումարը, որի տրամադրման պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին, և որը չի տրամադրվել այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությանը կամ որպես գույք, գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու, աշխատանք կամ ծառայություն մատուցելու հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց:

Բանկային ավանդ է համարվում նաև բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ նման այլ հաշիվը, ինչպես նաև բանկային ավանդի վրա հաշվարկված, բայց ավանդատուին չվճարված տոկոսները կամ այլ հատուցումը:

Ոչ ավանդային ներգրավված միջոցները այն միջոցներն են, որոնք բանկը ստանում է փոխառությունների տեսքով կամ դրամական շուկայում սեփական պարտքային պարտավորությունների վաճառքի միջոցով: Այս միջոցներն ավանդներից տարբերվում են նրանով, որ

- նախ, ունեն ոչ անձնական բնույթ, այսինքն՝ չեն կապվում բանկի կոնկրետ հաճախորդի հետ, այլ ձեռք են բերվում շուկայում

- երկրորդ, այդ միջոցների ներգրավման նախաձեռնությունը պատկանում է հենց իրեն՝ բանկին: Ընդհանուր առմամբ բանկերի ռեսուրսների գերակշիռ մասը բաժին է ընկնում ներգրավված միջոցներին, որը բացատրվում է բանկի տնտեսագիտական իմաստով՝ հանդիսանալով միջնորդ օղակ խնայողության և փոխառությունների միջև:

5.3. Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը և որակը

Ակտիվը իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատկանող ցանկացած նյութական և ոչ նյութական միջոցն է՝ օբյեկտ, որն ունի շուկայական, փոխանակային կամ հաշվեկշռային արժեք:

Ակտիվը հանդես է գալիս որպես հաշվապահական հաշվեկշռի մաս, որը դրամական արտահայտությամբ արտացոլում է կազմակերպությանը պատկանող նյութական և ոչ նյութական (զուղվիլ) արժեքները, դրանց կազմը և տեղաբաշխումը: Համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության, ակտիվը կազմակերպության կողմից վերահսկվող միջոց է՝ որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք:

Բանկային ակտիվների կառուցվածքը պայմանավորված է տվյալ բանկի գործունեության ոլորտներով:

Ակտիվների կառուցվածքի տակ հասկացվում է հաշվեկշռի որակապես տարբեր բնույթի ակտիվների հարաբերակցությունը ակտիվների հանրագումարին: Բանկերի ակտիվները կարելի է բաժանել չորս խմբի՝

- դրամական միջոցներ
- արժեթղթերում ներդրումներ
- փոխատվություններ
- հիմնական միջոցներ:

Սակայն յուրաքանչյուր բանկի առջև ծառանում է ակտիվների արդյունավետ կառուցվածքի ձևավորման և պահպանման հիմնախնդիր: Բացի դրանից, ակտիվների կառուցվածքը մեծապես որոշվում է ձևավորված բանկային օրենսդրության և հաշվառման առանձնահատկություններով, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցությամբ:

Բանկերի ակտիվները կարելի է դասակարգել ըստ գործունեության ձևի և որակի:

Ըստ գործունեության ձևի ակտիվները կարելի է խմբավորել երեք խմբի՝

- նյութական
- ոչ նյութական
- ֆինանսական ակտիվներ:

Նյութական ակտիվներ են համարվում բանկի ֆիզիկական կամ շոշափելի ակտիվները, ի տարբերություն ոչ նյութական (անշոշափելի) ակտիվների: Նյութական ակտիվներ են, օրինակ, դրամական միջոցները, հիմնական միջոցները և այլն:

Ոչ նյութական ակտիվները չունեն ֆիզիկական մարմնավորում, սակայն ունեն իրական արժեք՝ առաջին հերթին ակտիվը տիրապետողի համար: Այդպիսի ակտիվներից են բանկի վարկի (համբավի) և գործարար կապերի պայմանական արժեք, մտավոր սեփականությունը, արտոնագրերը, հեղինակային իրավունքները, առևտրանշանները ապահովագրական պոլիսները և այլն: Հավանաբար, ամենից անտեսանելի և անշոշափելի ոչ նյութական ակտիվները բանկի վարկն ու գործարար կապերն են, քանի որ դրանց առկայությունը չի ամրագրվում որևէ փաստաթղթում և դժվար է գնահատել դրանց առևտրական արժեքը: Սակայն դրանք հաճախ շահույթի կարևոր գործոն են դառնում: Ֆինանսական ակտիվների խումբը հանդես է գալիս կանխիկ դրամական միջոցների և տարբեր ֆինանսական գործիքների ձևով:

Ակտիվների այս խմբին են պատկանում բանկի դրամական միջոցները՝ ազգային արժույթով և արտարժույթով, կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական ներդրումները (այդ թվում տրամադրված վարկերը, տեղաբաշխված ավանդները, ձեռք բերված արժեթղթերը), դեբիտորական պարտքերը:

Առևտրային բանկերի ակտիվների որակի գնահատման առումով հատկապես կարևոր է ակտիվների դասակարգումը ըստ՝

- իրացվելիության
- եկամտաբերության
- ռիսկայնության աստիճանի:

«Իրացվելիություն» տերմինը (լատիներեն liquidus - հոսուն, հեղուկ) բառացի նշանակում է արժեքները դրամական միջոցների վերածելու դյուրինություն:

Իրացվելի կամ բարձր իրացվելի է համարվում ցանկացած ակտիվ, որը բավարարում է հետևյալ երեք պայմանները՝

- ա) զնի կայունություն
- բ) շուկայում ազատ շրջանառելիություն
- գ) փոխարկելիություն:

Այդպիսի ակտիվները հեշտությամբ փոխարկվում են դրամական միջոցների և իրականացվում են ընթացիկ վճարումներ (օրինակ, պետական պարտատոմսերը): Այս ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին կամ ընթացիկ պարտավորություններին տալիս է բանկի իրացվելիության գնահատականը (իրացվելիության գործակիցները): Բնական է, որ բանկերը, ինչպես նաև մյուս տնտեսավարող սուբյեկտները պետք է ունենան իրացվելի միջոցներ, այսինքն՝ ակտիվներ, որոնք կարող են հեշտությամբ փոխարկվել դրամական միջոցների կորուստների ոչ մեծ ռիսկով կամ առանց ռիսկի:

Ոչ իրացվելի ակտիվներն, ի տարբերություն բարձր իրացվելի ակտիվների, դժվարությամբ են իրացվում, փոխարկվում դրամական միջոցների: Դրանք կարող են փոխարկվել դրամի, սակայն արժեքի մեծ կորուստներով: Հիմնական ֆոնդերը, ժամկետանց և անհուսալի պարտքերը (վարկային ներդրումները, դեբիտորական պարտքերը) համընդհանուր են ոչ իրացվելի ակտիվներ:

Եկամտաբեր են համարվում այն ակտիվները, որոնք եկամուտ են բերում տոկոսի կամ միջնորդավճարի ձևով: Անվանվում են նաև աշխատող ակտիվներ: Դրանք հիմնականում բանկի կողմից տրամադրված վարկերն են և արժեթղթերում կատարված ներդրումները: Եկամտաբեր ակտիվները իրենց հերթին կարող են բնութագրել բանկի տեղը և դերը տնտեսության մեջ:

Ռիսկային ակտիվները բանկի այն ակտիվներն են, որոնք տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան չունեն ռիսկի զրոյական գործակից: Այս ակտիվների արժեքը ենթարկվում է փոփոխությունների կապված շուկայական իրադրության և ակտիվների որակի փոփոխությունների հետ:

Ակտիվների որակական չափանիշները արտացոլվում են ակտիվների աշխատունակության, արդյունավետության, այսինքն՝ եկամուտ բերելու և դրանով իսկ բանկի զարգացման ու նրա կապիտալային հիմքն ուժեղացնելու համար աղբյուր ստեղծելու ունակությամբ: Որքան մեծ է եկամտաբեր ակտիվների բաժինը, այնքան հավասար պայմաններում բանկն ունի մեծ եկամուտ, հետևաբար իր կապիտալային հիմքն ամրապնդելու մեծ հնարավորություն: Իսկ դա նշանակում է, որ բանկը կարող է ավելի ուժեղ դիմակայել այն ռիսկերին, որոնց հետ նա անմիջապես առնչվում է իր գործունեության ընթացքում: Դրա հետ միասին, ակտիվների կառուցվածքն ըստ եկամտաբերության կարգավորելիս պետք է պահպանել ողջամտություն, քանի որ դեպի շահույթը անզուսպ ձգտումը կարող է հանգեցնել բանկի ակտիվների և իրացվելիության զգալի կորստի:

Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքում եկամտաբերության առումով առաջին հերթին առանձնանում են վարկային ներդրումները, որոնց բաժին է ընկնում տոկոսային եկամուտների մեծ մասը: Ինչպես ցույց է տալիս միջազգային բանկային փորձը, բանկերի համար հատկապես կարևոր է վարկային պորտֆելի որակը: Դա պայմանավորված է նրանով, որ վարկային գործառնությունները, ինչպես արդեն նշել ենք, բանկերի գործունեության հիմնական ուղղություններից են: Հետևաբար, հաջող վարկավորումը հանգեցնում է բանկի հիմնական տոկոսային եկամուտների ստացմանը, վճարունակության ցուցանիշների բարելավմանը, իսկ վարկավորման բնագավառում լուրջ անհաջողություններին ուղեկցում են զգալի կորուստները և, ի վերջո, բանկի սնանկացումը:

Բացի վարկային ներդրումներից, առևտրային բանկերի ակտիվների կազմում առկա են նաև այլ եկամտաբեր, «աշխատող» ակտիվներ՝ պետական և ոչ պետական (կոորպորատիվ) արժեթղթերը, ներդրումները արտարժույթով գործառնություններում: Ակտիվների արդյունավետ կառուցվածքի ընդհանրական ցուցանիշ է եկամտաբեր կամ «աշխատող» ակտիվների հարաբերությունը բանկի ակտիվների ընդհանուր գումարին:

Գործնականում բոլոր բանկային ակտիվները ենթարկվում են որոշակի ռիսկի, սակայն դրանք ունեն ռիսկի տարբեր աստիճաններ: Ռիսկը՝ որոշակի վնաս կրելու կամ օգուտը բաց թողնելու հավանականությունն է, համապատասխան եկամուտը ստանալու անվստահությունը: Բանկերի գործունեությունը կարգավորող պետական մարմինները, ձգտելով բանկերին հեռու պահել չհիմնավորված մեծ ռիսկային գործունեություն վարելուց, ակտիվները դասակարգում են ըստ ռիսկի աստիճանների և կշռում այդ աստիճաններով: Բանկը պետք է իր ակտիվների ռիսկի աստիճանը որոշի և պահպանի գործող օրենսդրությանը համապատասխան մակարդակի վրա: Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի աստիճանի և ակտիվների յուրաքանչյուր խմբի ռիսկի մակարդակը (կշիռը, գործակիցը) միատեսակ չեն տարբեր երկրներում և տարբեր նպատակների համար: Կապիտալի համարժեքության գնահատման համար միջազգային պրակտիկայում օգտագործում են Բազելյան կոմիտեի առաջարկությունները, որոնց համաձայն՝ առանձնացվում են ակտիվների չորս խումբ: ՀՀ բանկային օրենսդրությամբ ներկայումս նախատեսված է ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի 5 կշիռների (0%, 10%, 20%, 50%, 100%):

Որպես ակտիվների որակի չափանիշ կարող է ծառայել նաև դրանց դիվերսիֆիկացիան, որը ցույց է տալիս ռեսուրսների բաշխումը ներդրման զանազան օբյեկտների, տարբեր շրջանների և ճյուղերի, ֆինանսական գործիքների և ակտիվների միջև՝ կապիտալի կամ նրանից ստացված եկամուտների հնարավոր կորստի ռիսկը նվազեցնելու նպատակով: Դիվերսիֆիկացիան առանձնապես կարևոր է բանկերի համար, որոնք իրենց

գործառնությունները հիմնականում ծավալում են ներգրավված միջոցների հաշվին: Բանկի միջոցների գոյացման աղբյուրների և օգտագործման ուղղությունների դիվերսիֆիկացիան ռիսկերի փոքրացման եղանակներից մեկն է: Բանկերը սովորաբար ձգտում են կիրառել ռիսկը նվազեցնող դիվերսիֆիկացիայի երկու տեսակ՝ պորտֆելային և աշխարհագրական: Պորտֆելի դիվերսիֆիկացիան ենթադրում է բանկի վարկերի և ավանդների (դեպոզիտների) բաշխումը մեծ թվով հաճախորդների միջև՝ ներառյալ խոշոր և փոքր գործարար ֆիրմաները, տարբեր ճյուղերը, եկամտի տարբեր աղբյուրներ ունեցող տնային տնտեսությունները: Աշխարհագրական դիվերսիֆիկացիան վերաբերում է տարբեր աշխարհագրական շրջաններից հաճախորդների ներգրավմանը: Դիվերսիֆիկացիայի սկզբունքներն առավել արդյունավետ են օգտագործում խոշոր բանկերը, որոնք ունեն վիթխարի միջոցներ և լավ գիտեն շուկայի իրավիճակը:

Ակտիվների դիվերսիֆիկացիայի ցուցանիշներից են բանկի ակտիվների կառուցվածքն ըստ ռեսուրսների ներդրման հիմնական ուղղությունների, վարկային ներդրումների կառուցվածքն ըստ օբյեկտների և սուբյեկտների, արժեթղթերի պորտֆելի կառուցվածքը, արտաթույլների կառուցվածքը, որոնցով բանկն իրականացնում է արտարժութային գործառնություններ, և այլն: Որքան մեծ է ակտիվների դիվերսիֆիկացիայի աստիճանը, այնքան փոքր է բանկի ընդհանուր ակտիվների ռիսկայնության աստիճանը և բարձր է բանկի իրացվելիությունը:

5.4. Առևտրային բանկերի իրացվելիությունը և վճարունակությունը

Առևտրային բանկի գործունեության գլխավոր նպատակը առավելագույն շահույթի ստացումն է, որի ածանցյալը՝ եկամտաբերությունը հակադարձ համեմատական է իրացվելիության ապահովմանը:

Առևտրային բանկի իրացվելիությունը և վճարունակությունը տարբեր հասկացություններ են և չի կարելի դրանք շփոթել, թեև կապված են միմյանց հետ:

Բանկի իրացվելիությունը՝ նրա ամենօրյա ընդունակությունն է՝ ժամանակին և առանց կորուստների կատարելու իր պարտավորությունները ավանդատուների ու պարտատերերի հանդեպ: Բանկն իրացվելի է, եթե նրա իրացվելի ակտիվների գումարը և այն իրացվելի միջոցները, որոնք նա կարող է արագ հավաքագրել այլ աղբյուրներից, բավարար են նրա ընթացիկ պարտավորությունները ժամանակին մարելու համար: Իրացվելի բանկի համար մատչելի են այն միջոցները, որոնք նա կարող է ներգրավել խելամիտ գնով և հեճոց այն պահին, երբ դրանք անհրաժեշտ են: Դա նշանակում է, որ այդպիսի բանկը կամ տնօրինում է իրացվելի միջոցների անհրաժեշտ գումարի, կամ դրանք կարող է ստանալ փոխառությունների կամ ակտիվների վաճառքի միջոցով: Եվ ընդհակառակը, իրացվելիության անբավարար մակարդակի դեպքում առևտրային բանկերը սովորաբար ունենում են ֆինանսական դժվարություններ, սկսում են կորցնել ավանդներ, որը փոքրացնում է նրանց կանխիկ միջոցները և ստիպում հրաժարվել առավել բարձր իրացվելի արժեթղթերից: Մյուս բանկերը մեծ դժվարությամբ են փոխառություններ տրամադրում սնանկացման եզրին գտնվող բանկերին կամ տրամադրում են գրավի դիմաց և բարձր տոկոսներով, որն էլ ավելի է մեծացնում դրանց ծախսերը:

Բանկի իրացվելիությունը կախված է տվյալ բանկի ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռության աստիճանից: Անհրաժեշտ իրացվելիություն ապահովելու համար առևտրային բանկի ակտիվների կառուցվածքը պետք է համապատասխանի իրացվելիության որակական պահանջներին:

Գործնականում բանկի իրացվելիությունը որոշվում է նրա հաշվեկշռի իրացվելիության զնահատման հիման վրա: Բանկի հաշվեկշռը համարվում է իրացվելի, եթե ակտիվում արտացոլված միջոցները դրանց արագ իրացման հաշվին թույլ են տալիս կատարել ժամկետային պարտավորություններն ըստ պասիվի: Հետևաբար, բանկի իրացվելիության մակարդակի վրա առաջին հերթին ազդում են հաշվեկշռի ակտիվների կառուցվածքը, ակտիվային գործառնությունների կազմն ու տեսակները: Ընդամենը պետք է հիշել, որ որքան բանկի հաշվեկշռում բարձր է որևէ ակտիվի իրացվելիությունը, այնքան ցածր է նրա եկամտաբերությունը, և ընդհակառակը:

Բանկի իրացվելիության վերլուծությունը պետք է կատարել անընդմեջ, այլ ոչ թե ժամանակ առ ժամանակ: Այն չի հանգում սոսկ հաշվեկշռի վերլուծությանը. կարևոր է ուսումնասիրել նաև բանկի փոխառություններ ստանալու հնարավորությունը, ընթացիկ գործառնական գործունեությունից ակնկալվող կանխիկ դրամական հոսքերը: Նման վերլուծությունը ենթադրում է մեծ ծավալի տեղեկատվության օգտագործում, մասնավորապես՝ անցած ժամանակաշրջանում բանկի եկամուտների դինամիկայի, վարկերի ժամանակին վերադարձելիության, դրամական շուկայի և այլնի վերաբերյալ:

Բանկի իրացվելիությունը ենթադրում է ստանձնած բոլոր պարտավորությունների (իրական և հավանական, արտահաշվեկշռային) ժամանակին կատարում: Իրական բոլոր պարտավորություններն արտացոլված են բանկի հաշվեկշռում ցպահանջ, ժամկետային ավանդների, ներգրավված միջբանկային ռեսուրսների, վարկատուների միջոցների տեսքով: Հավանական կամ արտահաշվեկշռային պարտավորություններն արտացոլված են բանկի կողմից տրամադրված երաշխիքներում, հաճախորդների համար բացված վարկային գծերում և այլն: Ընդ որում, պարտավորությունների կատարման առավել կարևոր աղբյուրներ են բանկի կանխիկ դրամական միջոցները դրամարկղում և թղթակցային հաշիվներում, դյուրին կերպով կանխիկ վերածվող ակտիվները, միջբանկային վարկերը, որոնք անհրաժեշտության դեպքում կարելի է ստանալ միջբանկային շուկայից կամ Կենտրոնական բանկից:

Այդ աղբյուրների օգտագործումը չպետք է ուղեկցվի բանկի համար կորուստներով: Սակայն բանկի իրացվելիության երկու հատկանիշների (պարտավորությունները ժամանակին և անկորուստ կատարելը) առկայությունը և հաշվեկշռի իրացվելիությունը պայմանավորված է մի շարք ներքին և արտաքին գործոններով, որոնք որոշում են բանկի գործունեության որակը:

- Ներքին գործոններից կարևոր են հատկապես հետևյալները՝
- ակտիվների ու պարտավորությունների համապատասխանությունն ըստ ծավալների ու ժամկետների
 - բանկի ամուր կապիտալային հիմքը
 - ակտիվների կառուցվածքը

- ակտիվային գործառնությունների ռիսկայնության աստիճանը
- պասիվների կառուցվածքը
- կառավարման որակը
- բանկի գործարար համբավը:

Ակտիվների ու պարտավորությունների համապատասխանությունն ըստ ծավալների ու ժամկետների: Բանկի իրացվելիության վրա զգալի ազդեցություն ունի ըստ գումարների և ժամկետների ակտիվների ու պասիվների համապատասխանության ապահովումը: Տվյալ կանոնի անտեսումը այն բանկի գործունեության մեջ, որն աշխատում է առավելապես ներգրավված միջոցներով, անխուսափելիորեն բերում է բանկի կողմից պարտատերերի հանդեպ իր ունեցած պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու խնդրին:

Վերոհիշյալ հավասարակշռությունն ապահովելու համար տնտեսագետների կողմից առաջարկվում է կիրառել երկու մոդել՝ «բանկ՝ բանկում» և «ընդհանուր կաթսայի» մոդելները: Առաջին մոդելը ենթադրում է ըստ ծավալների ու ժամկետների ներգրավված և տեղաբաշխված ռեսուրսների միջև խիստ համապատասխանություն: Այն ապահովում է բանկի հաշվեկշռի լավագույն իրացվելիություն, սակայն չի գտնում լայն կիրառում, քանի որ ավելի շատ հարմար է փոքր բանկերին և ենթադրում է վարկերի ժամանակին վերադարձ: Այս պայմանի խախտման դեպքում հավասարակշռության պահպանումը դառնում է խնդրահարույց, և բանկերը ստիպված են լինում անցնել «ընդհանուր կաթսայի» մոդելին, այսինքն՝ իրենց պարտավորությունները կատարել ոչ թե այն վարկերի հաշվին, որոնք տրամադրվել են տվյալ աղբյուրից, այլ մյուս աղբյուրներից: Բանկերի իրացվելիությունը վերլուծելու և գնահատելու համար կենտրոնական բանկը, նրանց կողմից ներկայացվող հաշվետվությունների կազմում սահմանել է նաև ներգրավված ու տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքի և ժամկետայնության վերաբերյալ հաշվետվությունների ձևերը:

Բանկի ամուր կապիտալային հիմքը: Սա նշանակում է սեփական կապիտալի զգալի բացարձակ մեծության առկայություն՝ որպես ակտիվների ռիսկի կլանման և ավանդատուների ու պարտատերերի միջոցների երաշխավորման պաշտպանական աղբյուր: Որքան մեծ է բանկի սեփական կապիտալը, այնքան բարձր է նրա [վճարունակությունը](#):

Ակտիվների կառուցվածքը: Բանկի իրացվելիության վրա ազդող մեկ այլ կարևոր գործոն է նրա ակտիվների կառուցվածքը, բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը բանկի ակտիվների ընդհանուր ծավալի մեջ: Այս դեպքում իրավացի է հետևյալ պնդումը՝ որքան մեծ է տվյալ ցուցանիշը, այնքան բարձր է բանկի իրացվելիությունը: Ակտիվների իրացվելիության աստիճանը կախված է դրանց նշանակությունից: Այսպես, բանկի դրամական ակտիվները նախատեսված են վճարային գործառնությունների կատարման համար, վարկերը կարող են բավարարել հաճախորդների կարճաժամկետ և երկարաժամկետ պահանջները և այլն:

Ակտիվային գործառնությունների ռիսկայնության աստիճանը: Կոնկրետ բանկի իրացվելիության իրական մակարդակը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն որևէ ակտիվի եկամտաբերությանը, այլ նաև հաշվի առնել դրա ռիսկի աստիճանը: Հաշվի առնելով առևտրային բանկի հաշվեկշռի իրացվելիության գնահատման մեջ ակտիվային գործառնությունների ռիսկի գործոնը, կարելի է դուրս բերել նրա ակտիվների հիմնական բնութագրիչների միջև հետևյալ կախվածությունը. որքան բարձր է բանկի ակտիվների եկամտաբերությունը, այնքան մեծ է ռիսկը, սակայն այնքան ցածր է բանկի հաշվեկշռի իրացվելիության մակարդակը և ընդհակառակը:

Պասիվների կառուցվածքը: Բանկի պասիվների կառուցվածքի վերաբերյալ ճիշտ է հետևյալ բանաձևը. որքան մեծ է ժամկետային հիմունքներով ներգրավված միջոցների բաժինը փոխառու միջոցների ընդհանուր գումարի մեջ, այնքան բանկի համար հեշտ կլինի ապահովել ակտիվների և պասիվների միջև հավասարակշռությունն ըստ ժամկետների ու գումարների: Այս առումով բանկի համար կարևոր է մշտապես վերլուծել իր պասիվները (ըստ ժամկետների և գումարների)՝ հաշվի առնելով դրամական շուկայի փոփոխվող իրավիճակը:

Կառավարման որակը: Բանկի իրացվելիությունը ամենից առաջ հենց իր՝ բանկի գործն է: Դա նշանակում է, որ իրացվելիության մակարդակը կախված է բանկի ամբողջ գործունեության և մասնավորապես՝ իրացվելիության կառավարման համակարգից: Բանկի կառավարման որակն արտահայտվում է բանկի քաղաքականության առկայության և պահպանման, արդյունավետ կազմակերպական կառուցվածքի մեջ, որը հնարավորություն է տալիս բարձր մակարդակով լուծել ռազմավարական և ընթացիկ խնդիրները, բանկի ակտիվների և պասիվների կառավարման համապատասխան մեխանիզմի մշակման մեջ: Բանկի ղեկավարությունը կարող է որոշել ռազմավարությունը և ընտրել իրացվելիության նախընտրելի մակարդակը: Դրա համար էլ յուրաքանչյուր բանկի իրացվելիությունը զգալիորեն կախված է կառավարման վերին օղակների որակավորումից, կադրերի պատրաստվածությունից և մակարդակից:

Բանկի գործարար համբավը: Բանկի դրական համբավը նրան տալիս է մյուս բանկերի նկատմամբ առավելություններ՝ ռեսուրսներ ներգրավելու առումով և դրանով իսկ արագ վերացնել իրացվելի միջոցների անբավարարությունը: Բացի դրանից, այդպիսի բանկին հեշտ է ապահովել իր ավանդային հիմքի կայունությունը: Բանկի առաջնակարգ համբավը նրան թույլ է տալիս զարգացնել գործարար կապերը արտասահմանյան գործընկերների հետ, որը նույնպես նպաստում է նրա ֆինանսական վիճակի և իրացվելիության ամրապնդմանը:

Պետք է նշել, որ բանկի իրացվելիությունը պայմանավորող վերը դիտարկված գործոնները ձեռք են բերում շատ թե քիչ նշանակություն՝ կախված բանկի անհատական առանձնահատկություններից, մասնավորապես, մասնակիցների ֆինանսական վիճակից, հաճախորդների շրջանակից, մասնագիտացումից, բանկի գործունեության տևողությունից, ղեկավարների թիմից:

Բանկերի իրացվելիության վրա ազդող արտաքին գործոններից են՝

- պատահական և/կամ արտակարգ իրավիճակները (կապված բանկի հաճախորդների գործունեության առանձնահատկությունների հետ)
- սեզոնային (կապված սեզոնային արտադրության տեսակների հետ)
- ցիկլային (որոնք արտացոլում են գործարար ակտիվության տատանումները)
- երկարաժամկետ (որոնք պայմանավորված են սպառման, ներդրումային գործընթացում, SU-ում տեղաշարժերով)
- միջբանկային վարկերից օգտվելու հնարավորությունը:

Բանկի իրացվելիության վրա արտաքին գործոնների ազդեցությունը սովորաբար դրսևորվում է նրա ակտիվների ու պասիվների կառուցվածքի փոփոխության միջոցով: Այսպես, օրինակ, պատահական կամ արտակարգ հանգամանքների ժամանակ կարող է սկսվել ժամկետային ավանդների արտահոսք, որը, վերջին հաշվով, հանգեցնում է բանկի կողմից իր պարտավորությունների կատարման լարվածության: Սեզոնային արտադրություն ունեցող հաճախորդների մոտ առանձին ժամանակաշրջաններում կարող են կամ մեծանալ վարկերի նկատմամբ պահանջարկը, կամ ազատվել միջոցներ, որոնք կարող են կուտակվել ժամկետային ավանդների ձևով:

Միջբանկային վարկը որոշակի սահմաններում վտանգ չի ներկայացնում իրացվելիության համար, ընդհակառակը, այն թույլ է տալիս վերացնել իրացվելի միջոցների կարծաժամկետ անբավարարությունը: Իսկ եթե միջբանկային վարկը հիմնական տեղ է զբաղեցնում ներգրավված միջոցների մեջ, միջբանկային շուկայում անբարենպաստ իրադրությունը կարող է հանգեցնել բանկի ֆինանսական ցուցանիշների վատթարացման: Արտաքին աղբյուրներից մեծ կախվածություն ունեցող բանկը չունի գործարարության համար սեփական հիմք, զարգացման հեռանկարներ և ենթարկված է իր անկայուն ռեսուրսային հիմքի ռիսկի:

Այսպիսով առևտրային բանկի հաշվեկշռի իրացվելիության անհրաժեշտ մակարդակին հասնելը, առավել ևս այն պահպանելը շատ բարդ խնդիր է, որի լուծումը բանկի աշխատակիցներից պահանջում է մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, բանկային գործի ոլորտում համապատասխան դրամաֆինանսական գործիքների, ինստիտուտների և նորմատիվային-օրենսդրական ակտերի առկայություն: Բանկի իրացվելիությունը՝ նրա գործունեության որակական բնութագիրն է, որը գտնվում է մշտական փոփոխության մեջ, ձևավորվում է աստիճանաբար և բնութագրվում է կայուն գործոնների ու միտումների ազդեցությամբ:

Բանկի հաշվեկշռի իրացվելիությունն ընկած է նաև նրա վճարունակության հիմքում, և պատահական չէ, որ թե՛ տեսության մեջ, և թե՛ գործնականում այս հասկացություններն օգտագործվում են միասին:

Բանկերի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը հանգեցրել է կենտրոնական բանկի կողմից տնտեսական նորմատիվների սահմանմանը, մասնավորապես բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցության (ընդհանուր իրացվելիության Ն21 նորմատիվ), և բարձր իրացվելի ակտիվների ու ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցության (ընթացիկ իրացվելիության Ն22 նորմատիվ):

Վճարունակությունը պետության, իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ պարտատերերի պահանջները կատարելու, պարտավորությունները ժամանակին վճարելու ունակությունն է, պարտքերը վճարելու համար բավարար կապիտալի առկայությունը:

Բանկը համարվում է վճարունակ, քանի դեռ նրա կապիտալը մնում է ամբողջական, պահպանված, այսինքն՝ քանի դեռ նրա գումարային պարտավորությունները փոքր են գումարային ակտիվներից: Այլ կերպ ասած, բանկի վճարունակությունը նշանակում է նրա ակտիվների և պարտավորությունների միջև դրական տարբերությունը՝ սեփական կապիտալի դրական մեծությունը: Վճարունակության այդպիսի բնորոշում է տրված նաև Համաշխարհային բանկի Մյուխենում: «Միուս» նշանով կապիտալը նշանակում է բանկի անվճարունակություն:

Բանկի կենսագործունեության հիմքում ընկած է ամենից առաջ իրացվելիությունը: Ինչպես ցույց է տալիս իրականությունը, բանկի կողմից իրացվելիության կորուստն, ի վերջո, հանգեցնում է նրա անվճարունակությանը, որից հետո, որպես հետևանք, վրա է հասնում սնանկացումը: Բանկի իրացվելիության կորստից բխող անվճարունակությունը նշանակում է, առաջին, բանկի ստանձնած պարտավորությունները մարելու համար ներքին աղբյուրներ որոնելու անընդունակություն, երկրորդ, այդ նպատակի համար արտաքին աղբյուրներ ներգրավելու անհնարինություն:

Այսպիսով, առևտրային բանկի կայունության և հուսալիության բարձր մակարդակի ապահովման համար իրացվելիությունն առաջնային է, իսկ վճարունակությունը՝ երկրորդային: Ընդ որում, եթե իրացվելիությունը կարելի է հասկանալ որպես բանկի հոգատարության առարկա (դրա համար նա ինքնուրույն ընտրում է դրա պահպանման եղանակները՝ սահմանված նորմաների շրջանակներում), ապա վճարունակության կարգավորումը զգալի չափով պետության ի դեմս Կենտրոնական բանկի գործառնություններից է: Շուկայական հարաբերությունների պայմաններում մեկ բանկի սնանկացումը կարող է հանգեցնել այլ բանկերի և դրանց հաճախորդների սնանկացման:

Բանկի վճարունակության մակարդակի վրա ազդող գործոնները կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ Ներքին գործոններ.

- բանկի սեփական կապիտալի համարժեքությունը
- բանկի և բանկ-գործընկերների ֆինանսական կայունությունը
- բանկի մասնագիտացումը
- բանկի ծառայությունների դիվերսիֆիկացիան
- բանկի աշխատակիցների որակավորման մակարդակը
- բանկի կառավարման մակարդակը:

Վերը թվարկված գործոններից որոշիչ նշանակություն ունի առաջինը: Միայն այն բանկերը, որոնք ունեն բավականաչափ կապիտալ վնասները հատուցելու համար (եթե դրա համար ընթացիկ եկամուտները չեն բավարարի) ի վիճակի են անբարենպաստ հանգամանքների դեպքում կատարել իրենց պարտավորությունները

ավանդատուների և պարտատերերի հանդեպ: Հենց դրա համար էլ բանկը համարվում է վճարունակ, քանի դեռ ձեռք չի տվել սեփական կապիտալին:

Արտաքին գործոններ.

- երկրում ընդհանուր քաղաքական և տնտեսական իրավիճակը
- դրամական և արժեթղթերի շուկաների զարգացումը
- բանկային օրենսդրության կատարելության աստիճանը, մասնավորապես Կենտրոնական բանկի վերահսկողական ֆունկցիաների արդյունավետությունը
- կենտրոնական բանկից վարկեր ստանալու հնարավորությունը:

Երկրում ընդհանուր քաղաքական և տնտեսական իրավիճակը ստեղծում է բանկային գործառնությունների զարգացման և բանկային համակարգի հաջող գործունեության նախադրյալներ, ապահովում բանկերի գործունեության տնտեսական կայունությունը, ամրապնդում հայրենական և օտարերկրյա ներդրողների վստահությունը բանկերի նկատմամբ:

Արժեթղթերի շուկայի զարգացումը թույլ է տալիս ապահովել իրացվելի միջոցների ստեղծման առավել լավագույն տարբերակ՝ առանց շահութաբերության կորստի, քանի որ, բանկի ակտիվները դրամական միջոցների վերածելու ամենաարագ ճանապարհը բազմաթիվ օտարերկրյա բանկերում կապված է արժեթղթերի շուկայի գործունեության հետ:

Բանկերի վճարունակության գնահատման և անվճարունակության ռիսկը սահմանափակելու համար կարգավորող և վերահսկող պետական մարմինների կողմից սահմանվում են ոչ միայն բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի, այլ նաև կապիտալի համարժեքության տնտեսական նորմատիվները, այսինքն՝ կապիտալի բավարարությունը ակտիվների համեմատ՝ կշռված համապատասխան ռիսկի աստիճաններով:

5.5. Առևտրային բանկերի շահույթը

Շահույթը առևտրային կազմակերպության (տվյալ դեպքում՝ առևտրային բանկի) արտադրատնտեսական (ֆինանսատնտեսական) գործունեության վերջնական ֆինանսական արդյունքն է: Բանկի շահույթի մեծությունը հաշվարկվում է որպես տոկոսային եկամուտների, ոչ տոկոսային եկամուտների, հաշվեկշռից դուրս գրված ակտիվների վերադարձի գումարի և տոկոսային ծախսերի, ոչ տոկոսային ծախսերի և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումների գումարի միջև տարբերություն:

Առևտրային բանկի շահույթի գոյացման աղբյուրներն ըստ ձևի կարելի է բաժանել երեք խմբի՝

- **զուտ տոկոսային եկամուտներ**
- զուտ ոչ տոկոսային եկամուտներ
- զուտ մասհանումներ:

Չուտ տոկոսային եկամուտները առևտրային բանկի կողմից կատարված ներդրումներից և ներգրավված միջոցներից ստացված և վճարված տոկոսների տարբերությունն է: Այն բանկի շահույթի հիմնական աղբյուրն է:

Տոկոսային մարժան կարող է բնութագրվել բացարձակ մեծությամբ և մի շարք ֆինանսական գործակիցներով:

Մարժայի բացարձակ մեծությունը հաշվարկվում է որպես բանկի տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի ընդհանուր մեծության, ինչպես նաև ակտիվային գործառնությունների առանձին տեսակների գծով տոկոսային եկամտի և այդ գործառնությունների համար օգտագործված ռեսուրսների հետ կապված տոկոսային ծախսի միջև տարբերություն:

Չուտ ոչ տոկոսային եկամուտները ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի տարբերությունն է:

Չուտ մասհանումները գոյանում են ներդրումների դիմաց ծախսերով ստեղծված պահուստաֆոնդի և ներդրումների մարման դեպքում նրանց համար ստեղծված պահուստների վերադարձի տարբերության արդյունքում:

Շահութաբերությունը կազմակերպության (տվյալ դեպքում՝ առևտրային բանկի) շահույթ ստանալու ընդունակությունն է և գալիք եկամուտների ներուժը (պոտենցիալը): Ի տարբերություն շահույթի, **շահութաբերությունը** հարաբերական մեծություն է, որը բնութագրում է ծախսերի հատուցման մակարդակը և արտադրանքի (ծառայությունների) արտադրության ու իրացման գործընթացում միջոցների օգտագործման աստիճանը: Հաշվարկվում է որպես շահույթի և կազմակերպության ծախսերի, ընդհանուր ակտիվների, սեփական կապիտալի կամ ներդրված երկարաժամկետ միջոցների հարաբերություն:

Բացարձակ ցուցանիշներին զուգահեռ բանկային գործունեության արդյունավետությունը առավել խորը ուսումնասիրելու համար օգտագործվում են հարաբերական ցուցանիշներ: Բանկի ֆինանսական գնահատման կարևոր ցուցանիշներից են՝

- կապիտալի շահութաբերությունը (ROE).

$$ROE = \text{զուտ շահույթ} / \text{կանոնադրական կապիտալ} \times 100$$

Այս գործակիցը ցույց է տալիս կանոնադրական կապիտալի միավորի հաշվով ստացված շահույթը, այսինքն՝ թե ինչ ռիսկի են գնում բանկի բաժնետերերն՝ իրենց միջոցները ներդնելով կանոնադրական կապիտալում շահույթ ստանալու ակնկալիքով:

- **ակտիվների շահութաբերություն** (ROA).

$$ROA = \text{զուտ շահույթ} / \text{ակտիվներ} \times 100$$

Այս գործակիցը բնութագրում է կազմակերպության ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակը: Այս ցուցանիշի միջոցով բացահայտվում է, թե բանկերը մենեջմենթի ինչպիսի մակարդակ ունեն, որքանով հաջող և գրագետ է կատարվում ներգրավված միջոցների տեղաբաշխումը բանկի ակտիվներում:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքները:
2. Որո՞նք են առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները:
3. Ի՞նչպես կարող եք բնութագրել իրացվելիության և շահութաբերության կապը:
4. Ի՞նչ հատկանիշներով կարելի է դասակարգել ակտիվները:
5. Որո՞նք են բանկի միջոցների գոյացման աղբյուրները:
6. Ի՞նչպիսի պայմանների առկայության դեպքում է բանկը համարվում անվճարունակ:
7. Ո՞ր ցուցանիշներն են բնութագրում բանկի շահութաբերությունը:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Թեմայի նպատակն է ներկայացնել բանկերի գործունեության կարգավորման հիմունքները, որի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ՀՀ բանկերի գործունեությունը կարգավորող իրավական և տնտեսական նորմատիվներին, ինչպես նաև կենտրոնական բանկի դերին, որպես կարգավորող և վերահսկող մարմին:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝

- ներկայացնել բանկերի գործունեության կարգավորման սկզբունքները
- ներկայացնել ՀՀ բանկերի գործունեությունը կարգավորող իրավական նորմատիվները և նրանց կարգավորման դաշտը
- ներկայացնել ՀՀ բանկերի գործունեությունը կարգավորող տնտեսական նորմատիվները և նրանց տնտեսագիտական իմաստը
- բացատրել լիցենզավորման գործընթացը
- ներկայացնել վերահսկողության տեսակները:

6.1. Ներածություն

Բանկային գործունեության կարգավորման փորձեր ձեռնարկվել են դեռևս բանկային գործի ակունքներում: Այդ ժամանակներում պետությունը աշխատում էր կարգավորել վարկային հարաբերությունները և պահպանել փոխառուների շահերը:

Ինչպես արդեն նշել ենք, բանկերը դասվում են հասարակության համար «ամենավտանգավոր» ինստիտուտների շարքին, քանի որ հասարակության դրամական միջոցների հոսքը հիմնականում իրականացվում է բանկային համակարգի կառույցների միջոցով, ուստի բարձրանում է պետության պատասխանատվությունը բանկային համակարգի կայունության, հուսալիության և անխափան գործունեության նկատմամբ:

Բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովումը դրված է ՀՀ կենտրոնական բանկի վրա:

Կենտրոնական բանկի և բանկերի փոխհարաբերությունների հիմքում ընկած է այն սկզբունքը, համաձայն որի կենտրոնական բանկը, հանդիսանալով բանկերի լիցենզավորող, կարգավորող և վերահսկող մարմին, չի կարող միջամտել բանկերի ընթացիկ գործունեությանը: Այդ պատճառով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 - րդ հոդվածով սահմանվում է ընթացիկ գործունեությանը չմիջամտելու սկզբունքը, միաժամանակ նախատեսվում է մեկ վերապահում՝ «բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

Կենտրոնական բանկը, անկախ լինելով պետական այլ մարմիններից, իր մեջ համատեղում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների որոշ գործառնություններ, ինչով և տարբերվում է պետական կառավարման այլ մարմիններից: Կենտրոնական բանկի օրենսդիր գործառնությամբ արտահայտվում է նրանով, որ կենտրոնական բանկը սահմանում է բանկային գործունեության կարգավորման դաշտը՝ «խաղի կանոնները»: Հաջորդը գործադիր իշխանության գործառնությամբ է նշված «խաղի կանոնների» կիրառումը, հատկապես բանկային գործունեության լիցենզավորման փուլում: Եվ երրորդը կենտրոնական բանկի դատական գործառնությամբ է սահմանված «խաղի կանոնների» խախտումների (որոնք կոչվում են «օրենսդրության խախտումներ») համար պատժամիջոցների կիրառումը:

Բանկերի գործունեության կարգավորման հիմունքների ռազմավարությունը կառուցվում է բանկային ռիսկերի նվազեցման, հուսալիության և կայունության ապահովման վրա:

6.2. Բանկերի գործունեության լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկումը

Ինչպես արդեն նշել ենք, բանկային համակարգի կայունության, հուսալիության և անխափան գործունեության ապահովման խնդիրները դրված են ՀՀ կենտրոնական բանկի վրա, որով և առաջնորդվելով ՀՀ կենտրոնական բանկը լիցենզավորում, կարգավորում և վերահսկում է բանկերի գործունեությունը:

Բանկերի լիցենզավորման ընթացակարգը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նրանից բխող ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական նորմերով: Լիցենզավորման գործընթացը բաղկացած է երեք փուլից՝

- ա) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը
- բ) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումը
- գ) լիցենզիա տալը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանության փուլում կենտրոնական բանկը մեկամսյա ժամկետում քննում է օրենքով սահմանված նախաձեռնող խմբի կողմից ներկայացված փաստաթղթերը և կայացնում որոշում լիցենզիա ստանալու նախնական հավանություն տալու կամ մերժելու մասին: Ընդ որում՝ կենտրոնական բանկի հիշատակված որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման:

Միաժամանակ հետաքրքրական են լիցենզիա ստանալու նախնական հավանությունը մերժելու հիմքերը, որոնք հիմնված են կենտրոնական բանկի կողմից «սուբյեկտիվ» կարծիք արտահայտելու իրավասության վրա: Նշված դիմումը կարող է մերժվել, եթե նախաձեռնող անձանց կողմից ներկայացված տնտեսական ծրագիրը «կենտրոնական բանկի հաստատած չափանիշներով հիմնավորված՝ կենտրոնական բանկի կարծիքով» իրատեսական չէ:

Լիցենզավորման երկրորդ փուլը բանկի գրանցումն է, որն իրականացվում է կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում: Ընդ որում, բանկը

գրանցվում է միայն Կենտրոնական բանկում բացված համապատասխան հաշվում կանոնադրական հիմնադրամի համալրման համար նախատեսված միջոցների առկայության դեպքում: Կենտրոնական բանկում գրանցվելու պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Այսինքն՝ բանկերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն այլ իրավաբանական անձանց, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ են ստանում պետական ռեգիստրում գրանցման պահից, բանկը իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում Կենտրոնական բանկում գրանցվելու պահից: ԴՅ տարածքում գործող բանկերի գրանցող մարմինը Կենտրոնական բանկն է:

Սակայն, ստանալով իրավաբանական անձի կարգավիճակ, բանկը դեռևս չի կարող ծավալել բանկային գործունեություն: Դրա համար անհրաժեշտ է անցնել լիցենզավորման վերջին փուլը՝ լիցենզիայի ստացումը, որի համար, օրենքի համաձայն, բանկը պետք է դիմի Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում: Այդ ժամկետում չդիմելու դեպքում Կենտրոնական բանկի նախնական հավանությունը և գրանցումը ուժը կորցնում են: Այսինքն՝ լիցենզավորման առաջին և երրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին: Կենտրոնական բանկի կողմից լիցենզիայի տրամադրվում է դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում: Կենտրոնական բանկը կարող է մերժել բանկին լիցենզիայի տրամադրումը, եթե համաձայն իր սահմանած պայմանների, լիցենզիայի նախնական հավանություն տալուց և բանկի գրանցումից հետո էապես փոփոխվել են այն պայմանները, որոնց առկայության պարագայում բանկին տրվել էր նախնական հավանությունը, և (կամ) բանկի գրանցելուց հետո բանկի ղեկավարների կողմից իրականացվել են ապօրինի, վարկաբեկիչ գործողություններ, փոփոխվել է բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց ֆինանսական դրությունը: Ինչպես երևում է վերը նշվածից, լիցենզավորման վերջին փուլում նույնպես շատ կարևոր տեղ է հատկացվում Կենտրոնական բանկի «սուբյեկտիվ» կարծիքին:

Բանկերի լիցենզավորման գործընթացը չի սպառվում նկարագրված երեք փուլերով և կրում է շարունակական բնույթ, ինչն արտահայտվում է Կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղերի գրանցման և բանկի ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման ինստիտուտների առկայությամբ:

Բանկը իր մասնաճյուղերը ստեղծելիս, պետք է գրանցի դրանք Կենտրոնական բանկում, որից հետո միայն կթույլատրվի այդ մասնաճյուղերի գործունեությունը: Ընդ որում, Կենտրոնական բանկը կարող է մերժել մասնաճյուղի գրանցումը մի շարք դեպքերում, որոնցից ամենահետաքրքրականներն են մասնաճյուղում տարածքային և տեխնիկական որոշակի պայմանների առկայությունը և բանկի, «Կենտրոնական բանկի հաստատած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով», «լավ» ֆինանսական վիճակը: Միաժամանակ, Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ դադարեցնել, կամ ժամանակավորապես դադարեցնել մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների գործունեությունը՝ իր կողմից սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով:

Կենտրոնական բանկի կողմից ստուգվում է նաև բանկի ղեկավարների՝ խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահի, նրա տեղակալի, խորհրդի անդամների, գործադիր տնօրենի, նրա տեղակալների, վարչության նախագահի և անդամների, գլխավոր հաշվապահի, նրա տեղակալի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների, բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարների որակավորման մակարդակը և մասնագիտական համապատասխանությունը (գրավոր և բանավոր քննությունների միջոցով), ինչը սակայն բավարար չէ բանկում ղեկավար պաշտոն վարելու համար: Բանկի ղեկավարները պետք է նաև գրանցվեն Կենտրոնական բանկի կողմից: Ղեկավարի գրանցումը մերժելու հիմքերից մեկն է «անձի կողմից անցյալում կատարված այնպիսի արարքը, որը Կենտրոնական բանկի հաստատված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը, որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեությունը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը»:

Ինչպես երևում է նշվածից, Կենտրոնական բանկն ունի իրավասություն ոչ միայն գործել համաձայն իր դատողությունների, այլև ակտիվորեն միջամտել բանկի ընթացիկ գործունեությանը՝ մասնաճյուղեր բացելը և ղեկավարներ նշանակելը թույլ տալով կամ չտալով:

Սակայն Կենտրոնական բանկի կողմից բանկի գործունեության նման խիստ կարգավորումը չի սահմանափակվում զուտ բանկի գործառնություններով կամ նշանակվող ղեկավարներով, այլև տարածվում է բանկի բաժնետերերի վրա: Այս տեսանկյունից օրենսդրության կարևորագույն դրույթներից է բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումները: Ընդ որում, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, բանկի նշանակալից մասնակից է համարվում ոչ միայն ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող անձը, այլ նաև այն մասնակիցը, որն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշել տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, կամ էապես ազդել նրանց որոշումների կայացման կամ կիրառման վրա, կամ կանխորոշել տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները: Եվ ավելին, օրենքով սահմանվում է, որ նշանակալից մասնակցություն ունեցող է նաև այն անձը, որը հնարավորություն ունի կանխորոշել տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, կամ էապես ազդել նրանց որոշումների կայացման կամ կիրառման վրա,

կամ կանխորոշել տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ուղրտները՝ տվյալ բանկի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով (օրինակ, մեծ ավանդ ունենալը բանկում):

Վերոհիշյալ չափանիշների հիման վրա, եթե անձը կամ նրա հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում ցանկանում են ձեռք բերել նշանակալից մասնակցություն, ապա կարող են այն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է: Միևնույն ժամանակ, օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ վերոհիշյալ կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Օֆշորային տարածքների ցանկը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից:

Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական թույլտվություն ստանալու դիմումը կարող է մերժվել Կենտրոնական բանկի կողմից, եթե «տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը»:

Բանկային գործունեության կարգավորումը ներառում է բանկի և Կենտրոնական բանկի միջև հարաբերությունների լայն շրջանակ և հետապնդում է բանկերի գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի շրջանակի նվազեցում և կառավարելիություն:

Բանկային գործունեության կարգավորումը սկսվում է բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործունեության տեսակների սահմանումից: «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 -րդ հոդվածը սահմանում է, թե բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա բանկը ինչպիսի ֆինանսական գործառնություններ կարող է իրականացնել: Այդ հոդվածում նշվում է նաև, որ Կենտրոնական բանկը կարող է թույլատրել բանկերին իրականացնել նշված օրենքով չնախատեսված գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ և եթե դրանք թույլատրելը չի հակասում բանկային գործունեության նպատակներին և չի վտանգում բանկի ավանդատուների և վարկատուների շահերը: Բացի նշված ֆինանսական գործառնություններից (նաև Կենտրոնական բանկի կողմից թույլատրված), բանկին արգելվում է այլ գործունեություն ծավալել:

Վերևում նշվել է բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումների մասին: Մինչդեռ օրենքը սահմանափակումներ է նախատեսում նաև բանկի կողմից այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման առումով: Այդպես, բանկի կողմից մեկ այլ անձի կապիտալում 4,99 և ավելի մասնակցության կամ այլ անձի կապիտալում տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը գերազանցող մասնակցության կամ բոլոր անձանց կապիտալում տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը գերազանցող մասնակցության ձեռքբերման համար բանկը պետք է ստանա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը (այստեղ նույնպես չի գործում բանկի ընթացիկ գործունեությանը չմիջամտելու սկզբունքը):

Նշված նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե այդ մասնակցությունը ձեռք է բերվում այլ բանկերի կապիտալում, ինչպես նաև այն անձանց կապիտալում, որոնք իրականացնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գործառնությունները կամ դրանց մի մասը (խոսքը վարկային կազմակերպությունների մասին է՝ լիզինգային, վարկային, ֆակտորինգային և այլն): Կենտրոնական բանկը համաձայնություն է տալիս այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման համար, եթե այն «համատեղելի է բանկի ֆինանսական վիճակի հետ, և, համաձայն Կենտրոնական բանկի հաստատած պայմանների և կարգի, կնպաստի ֆինանսական շուկայում տվյալ բանկի գործունեության զարգացմանը»:

Կենտրոնական բանկի և բանկերի միջև հարաբերությունների կարևորագույն մասերից է բանկերում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը և տեռորիզմի ֆինանսավորումը կանխարգելելու ուղղությամբ Կենտրոնական բանկին տրամադրված լայն իրավասությունները:

Այսպես, Կենտրոնական բանկը կարող է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը կանխարգելելու համար սահմանել բանկերում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման կարգ, կասկածելի գործառնությունների վերաբերյալ բանկերի կողմից ներկայացվող տեղեկանքների և հաշվետվությունների ներկայացման հատուկ կարգ և ձևեր, բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկ, իր որոշմամբ դադարեցնել այն հաշիվներով գործառնությունները, որոնց տեռորը կասկածվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կամ տեռորիզմի ֆինանսավորման մեջ: Կենտրոնական բանկն իր կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, կարող է հանձնարարել բանկին իր հաճախորդից, կոնտրազենտից, պարտատերից, մասնակցից կամ մասնակցություն ձեռք բերող անձից պահանջել միջոցների ծագման օրինակաճանաչության վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն: Ընդ որում, Կենտրոնական բանկը կարող է նման գործողություններ իրականացնել (հաշվի միջոցների սառեցում, տեղեկատվության տրամադրում և այլն) կասկածի դեպքում: Իսկ նման կասկածը հերքելու պարտականությունը դրվում է բանկի հաճախորդի վրա:

Բանկերի ընթացիկ գործունեությանը չմիջամտելու սկզբունքի ամենահետաքրքիր բացառություններից է Կենտրոնական բանկի այն իրավասությունը, համաձայն որի վերջինս կարող է «բանկային գործունեության ռիսկայնությունը զսպելու նպատակով բանկի վարկային, ավանդային, ֆինանսական գործառնությունների, ներդրումների առանձին տեսակների համար սահմանափակումներ կամ դրանց իրականացման հատուկ կարգ սահմանել»:

Կենտրոնական բանկը որպես բանկերին լիցենզավորող և նրանց գործունեությունը կարգավորող և վերահսկող անձ, իրավունք ունի սահմանել բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներ, որոնց չափը և հաշվարկման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից: «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44 -րդ հոդվածը սահմանում է հիմնական տնտեսական նորմատիվների հետևյալ տեսակները.

- ա) բանկի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը
- բ) բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվները
- գ) բանկի իրացվելիության նորմատիվները
- դ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը
- ե) բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը
- զ) բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափերը (սույն նորմատիվը Կենտրոնական բանկը օրենքի ընդունման պահից մինչ օրս դեռևս չի սահմանել)
- է) Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը
- ը) արտարժույթի տնօրինման նորմատիվը:

Հարկ է նշել, որ հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող միևնույն տեսակի լիցենզիա ունեցող բոլոր բանկերի համար, բացառությամբ նոր ստեղծվող բանկերի համար սահմանվող ընդհանուր կապիտալի հիմնական տնտեսական նորմատիվի և նախատեսված հետևյալ դեպքի: Կենտրոնական բանկը կարող է առանձին բանկի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ բանկերի համար, եթե բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած ցուցանիշների ամփոփ գնահատականից, կամ տվյալ բանկի ֆինանսական ցուցանիշները վատթարացել են, կամ բանկը գործունեություն է ծավալում բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում: Հիմնական տնտեսական նորմատիվների խտացման դեպքում վերջինիս վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումը ուժի մեջ է մտնում առնվազն վեց ամիս հետո:

Միևնույն ժամանակ, բանկային համակարգի կայունությունը ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է արտակարգ դեպքերում սահմանել հատուկ տնտեսական նորմատիվներ՝ մինչև վեց ամիս տևողությամբ:

Ինչպես երևում է, բանկային գործունեության կարգավորման դաշտում նույնպես բանկի և Կենտրոնական բանկի հարաբերություններում լայնորեն կիրառվում են տուբյեկտիվ կարծիքի օգտագործման ու բանկի ընթացիկ գործունեությանը միջամտելու իրավասությունները:

Բանկերի գործունեության նկատմամբ բացառիկ վերահսկողության իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է Կենտրոնական բանկին, որն այդ վերահսկողությունն իրականացնում է հաշվետվությունների ստացման և տեղերում ստուգումների իրականացնելու միջոցներով: Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվություններ վերջինիս կողմից սահմանված ձևերով, կարգով ու ժամկետներում: Ինչ վերաբերվում է տեղերում ստուգումներին, ապա հետաքրքրական է ուսումնասիրել նման ստուգումների նպատակները և ստուգումն իրականացնող խմբի իրավասությունները:

- Կենտրոնական բանկի կողմից բանկերում ստուգումների իրականացման նպատակներն են՝
 - բանկի հիմնադիր փաստաթղթերում կատարված փոփոխությունների օրինականության վերստուգում
 - բանկի ընդհանուր կապիտալի մեծության գնահատում
 - բանկի իրացվելիության գնահատում
 - բանկի ակտիվների վերլուծություն, դասակարգում և գնահատում
 - բանկի կառավարման որակի գնահատում
 - բանկի ֆինանսական արդյունքների (եկամուտներ և ծախսեր) գնահատում
 - ռիսկերի առանձին տեսակների գնահատում
 - դրամական միջոցների հոսքերի գնահատում
 - Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերստուգում
 - Կենտրոնական բանկի հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի վերստուգում
 - Ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության վերստուգում
 - օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման վերստուգում:

Վերը նշված նպատակներն իրագործելու համար վերստուգող խումբը վերստուգումներ իրականացնելիս իրավասու է՝

- ա) անարգել մուտք գործել բանկի բոլոր տարածքները՝ բացառությամբ դրամապահոցի, որտեղ մուտքը կատարվում է միայն բանկի համապատասխան աշխատակիցների ուղեկցությամբ
- բ) օգտվել վերստուգման համար անհրաժեշտ, բանկում առկա կազմակերպատեխնիկական միջոցներից, ինչպես նաև վերստուգվող բանկ բերել և տանել համակարգիչ, մագնիսական կրիչներ, հաշվիչներ և այլն
- գ) վերստուգվող բանկի ղեկավարներից և իրավասու աշխատակիցներից պահանջել վերստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր կնքված բանկի կնիքով և ստորագրված իրավասու անձանց կողմից, այդ թվում.

- բանկի հիմնադիր փաստաթղթերը, դրանցում կատարված փոփոխությունները, բանկի կառավարման մարմինների որոշումները, բանկի ղեկավար մարմինների հրամանները և կարգադրությունները, ներքին վերահսկողության ակտերը
 - պայմանագրեր, գրագրություններ, դրամարկղահաշվարկային փաստաթղթեր, ֆինանսական հաշվետվություններ, սկզբնական և այլ հաշվապահական փաստաթղթեր
 - տեղեկություններ կատարված գործառնությունների վերաբերյալ, մերժված վարկային հայտեր, հաճախորդների բողոք-դիմումներ
 - բանկի գործունեությունն ապահովող համակարգչային համակարգին առնչվող փաստաթղթեր
 - անկախ աուդիտային կազմակերպության հետ ունեցած հարաբերություններին առնչվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև բանկի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, բանկի գործունեության ծրագրի կատարման ընթացքի և նախորդ վերստուգման արդյունքներով հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ բանկի ձեռնարկած միջոցառումների մասին տեղեկատվություն և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ վերստուգումները ժամանակին և սպառիչ իրականացնելու համար
 - դ) անհրաժեշտության դեպքում ինքնուրույնաբար կամ վերստուգվող բանկի օգնությամբ պատճենահանել անհրաժեշտ փաստաթղթեր, ֆայլեր, հաշվողական ցանցում կամ առանձին համակարգչային համակարգում պահվող գրառումներ
 - ե) վերստուգվող բանկի ղեկավարությանը և իրավասու աշխատակիցներին իրենց իրավասության սահմաններում ներկայացնել հիմնավոր այլ պահանջներ, եթե դրանք բխում են վերստուգման անհրաժեշտությունից և նպատակից
 - զ) հաճախորդների համաձայնությամբ վերջիններից ստանալ իրավական ակտերի պահանջների պահպանման վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, որն անհրաժեշտ է փաստացի հանգամանքները, այդ թվում՝ վերստուգվող բանկից ստացված փաստաթղթերում պարունակվող տվյալների հավաստիությունը հաստատելու համար:
- Ինչպես երևում է ներկայացվածից, բանկի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս Կենտրոնական բանկը ունի բացառիկ իրավասություններ տեղեկատվություն ստանալու առումով, իսկ վերահսկողության նպատակները չսպառնալու լայն են և ընդգրկում են բանկի գործունեության բոլոր հնարավոր կողմերը:
- Կենտրոնական բանկը, ունենալով բանկերի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ունի նաև խախտումներ հայտնաբերելու և դրանց համար պատժամիջոցներ կիրառելու իրավունքը (Կենտրոնական բանկի դատական գործառնություն): Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի, Կենտրոնական բանկը կարող է պատժամիջոցներ կիրառել հետևյալ դեպքերում.
- բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի այլ տարրերը համալրվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով
 - բանկի, բանկի մասնաճյուղի կանոնադրությունները փոխվել և լրացվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով
 - խախտվել են բանկային գործունեությունը կարգավորող օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները
 - խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները կամ Կենտրոնական բանկի կարծիքով, բանկն իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնք կարող են վտանգել ավանդատուների կամ բանկի այլ պարտատերերի շահերը
 - խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ու հրապարակման կարգն ու պայմանները, և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ, բանկը չի կատարել Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված դեպքերում նախատեսվող հանձնարարականները,
 - բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականից
 - բանկն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի կատարել [բանկային ավանդների](#) երաշխիքային հիմնադրամին երաշխիքային վճարների վճարումը:
- Վերը նշված դեպքերում Կենտրոնական բանկը բանկերի նկատմամբ կարող է կիրառել պատժամիջոցներ: Այդ պատժամիջոցներն են նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը, տուգանքը (թե բանկի, թե բանկի ղեկավարի նկատմամբ), բանկի ղեկավարին որակավորման վկայականից զրկելը և բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը:
- Փաստորեն, պատժամիջոցների կիրառման ժամանակ նույնպես Կենտրոնական բանկը իրավունք ունի օգտագործել իր սուբյեկտիվ կարծիքը՝ որակելով բանկի գործողությունները որպես վտանգավոր (պարտատերերի շահերի պաշտպանության տեսանկյունից):
- Բանկերի սնանկության գործընթացն ունի իր առանձնահատկությունները: Այդ պատճառով էապես տարբերվում է իրավաբանական այլ անձանց սնանկության գործընթացից և կարգավորվում է առանձին օրենքով: Այդպես, եթե այլ իրավաբանական անձանց անվճարունակությունը ճանաչվում է դատարանի կողմից, ապա բանկերի դեպքում անվճարունակությունը ճանաչվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Ընդ որում, Կենտրոնական բանկի անվճարունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ:
- «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է բանկի անվճարունակության չորս հիմքեր: Դրանք են՝

- ա) բանկը սպառել է իր հիմնական կապիտալի հիսուն տոկոսը և ավելին, կամ
 - բ) բանկը ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, կամ
 - գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, կամ
 - դ) բանկը պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը: Խախտման պարբերականությունը սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:
- Չիշատակված հիմքերը հայտնաբերելու դեպքում Կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է իրականացնել հետևյալ երկու գործողություններից մեկը.
- ա) նշանակել ժամանակավոր ադմինիստրացիա (այսուհետև՝ ադմինիստացիա) և հաստատել բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը, կամ
 - բ) բանկի սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան:
- Չիշատակված գործողություններից ելնելով, բանկերի սնանկության գործընթացը բաժանվում է երկու մասի:

Առաջինը կարգավորում է այն դեպքը, երբ այդ հիմքերի հայտնաբերման դեպքում բանկում նշանակվում է ժամանակավոր ադմինիստրացիա, որը բանկի ֆինանսական առողջացման նպատակով իրականացնում է բանկի ղեկավարումը: Իսկ երկրորդ մասը կարգավորում է այն դեպքը, երբ, Կենտրոնական բանկը, գտնելով, որ բանկի ֆինանսական առողջացումը անհնարին է, բանկի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչում և սնանկության մասին դիմում է ներկայացնում դատարան բանկի լուծարման և լուծարային կառավարիչ հաստատելու համար: Ընդ որում, այս երկրորդ դեպքը կիրառելի է նաև այլ դեպքում: Կենտրոնական բանկը սնանկության մասին դատարան դիմում կարող է ներկայացնել նաև առաջին ֆինանսական առողջացման փուլը անցնող բանկերի լուծարման համար, եթե գտնի, որ անհնար է բանկի ֆինանսական առողջացումը:

Ինչպես արդեն նշվել է, բանկի անվճարունակության հիմքերի հայտնաբերման դեպքում Կենտրոնական բանկը կարող է նշանակել ժամանակավոր ադմինիստրացիա և հաստատել ֆինանսական առողջացման ծրագիր: Ընդսմին, կարևորվում է, որ օրենքի համաձայն այդ որոշումը չի կարող դատական կարգով բողոքարկվել: Ադմինիստրացիայի նշանակման պահից բանկի կամ վարկային կազմակերպության կառավարման բոլոր մարմինների լիազորություններն այդ ընթացքում անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին, ինչը նշանակում է, որ ադմինիստրացիայի ղեկավարը գործում է որպես բանկի ընդհանուր ժողով, խորհուրդ և գործադիր տնօրինություն: Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է բանկի ֆինանսական առողջացման ծրագրով՝ մինչև երեք տարի ժամկետով: Ընդ որում, այդ ժամկետը կարող է Կենտրոնական բանկի կողմից երկարաձգվել ևս երեք տարով:

Պետք է նշել, որ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կամ դրանց իրականացման ընթացքում բանկի ֆինանսական առողջացման անհնարինության դեպքում ադմինիստրացիայի ղեկավարը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել գրավոր միջնորդություն՝ տվյալ բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու և բանկի նկատմամբ սնանկության վարույթ սկսելու միջնորդությամբ դատարան դիմելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, [Կենտրոնական բանկը](#) նույնպես ադմինիստրացիայի գործողության ցանկացած պահին իր նախաձեռնությամբ կարող է իրականացնել վերոհիշյալ միջոցառումները:

Ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կամ դրանց իրականացման ընթացքում բանկի ֆինանսական առողջացման դեպքում ադմինիստրացիայի ղեկավարը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել գրավոր միջնորդություն՝ ադմինիստրացիայի գործունեությունը դադարեցնելու և բանկը մասնակիցների կառավարմանը վերադարձնելու մասին:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ադմինիստրացիա նշանակելու դեպքում Կենտրոնական բանկը ադմինիստրացիայի ղեկավարի միջնորդությամբ կամ ֆինանսական առողջացման ծրագրով իրավունք ունի ադմինիստրացիայի գործողության ամբողջ ժամանակահատվածում սառեցնել բանկի պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում):

Ինչ վերաբերվում է սնանկության գործընթացի երկրորդ մասին, ապա պետք է նշել, որ բանկի կամ վարկային կազմակերպության նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է բացառապես Կենտրոնական բանկի կողմից վերոհիշյալ դեպքերից որևէ մեկի ժամանակ: Այդպես հիշատակված անվճարունակության հիմքերի առկայության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում և որոշում է կայացնում բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին և բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից հնգօրյա ժամկետում դատարան է ներկայացնում բանկի սնանկության մասին դիմում՝ առաջարկելով լուծարային կառավարչի թեկնածություն (թեկնածություններ): Դատարանը, եռօրյա ժամկետում քննելով Կենտրոնական բանկի դիմումը, որոշում է կայացնում Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու կամ դիմումը մերժելու մասին: Ընդ որում, դատարանի կայացրած վճիռը բողոքարկման ենթակա չէ:

Հարկ է նշել նաև, որ բանկի պարտատերերն իրավունք ունեն դիմել Կենտրոնական բանկ՝ բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելու միջնորդությամբ: Կենտրոնական բանկը, քննարկելով միջնորդությունը երկշաբաթյա ժամկետում, որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշումը պարտատիրոջ միջնորդությունը մերժելու մասին կարող է բողոքարկվել միջնորդությունը ներկայացրած պարտատիրոջ կողմից Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում:

6.3. Բանկերի գործունեությունը կարգավորող իրավական նորմատիվ ակտեր

Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի գործունեությունը հիմնականում կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրները, իրավունքները և պարտավորությունները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող և գործող բանկերի, նրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի) գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարեցման, ինչպես նաև բանկային գործունեության վերահսկողության կարգը և պայմանները:

«Բանկերի սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի (այսուհետ՝ բանկեր) անվճարունակության և սնանկության հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, այդ տեղեկությունների հրապարակման, պահպանման և տրամադրման իրավական հիմքերը և կարգը, բանկային գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև սույն օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվ ակտերը հիմնականում հանդիսանում են.

Կանոնակարգ - 1 «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը և լիցենզավորումը, մասնաճյուղերի, գործառնական գրասենյակների և ներկայացուցչությունների գրանցումը», սահմանում է ՀՀ տարածքում ստեղծվող և գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցման և լիցենզավորման, մասնաճյուղերի, գործառնական գրասենյակների և ներկայացուցչությունների, ինչպես նաև օրենքով սահմանված փոփոխությունների գրանցման ընթացակարգերի մասով ՀՀ օրենքների համապատասխան դրույթների կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ կարգերն ու պայմանները:

Կանոնակարգ - 2 «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները», սահմանում է ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները:

Կանոնակարգ - 3 «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը», սահմանում է ՀՀ կենտրոնական բանկի ներկայացվող հաշվետվությունների տեսակները, կազմման սկզբունքները և նրանց ներկայացման կարգը:

Կանոնակարգ - 4 «Բանկերում վերստուգումների իրականացումը», սահմանում է բանկերում, դրանց, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում, ներկայացուցչություններում ՀՀ կենտրոնական բանկի ծառայողների կողմից վերստուգումների անցկացման կանոնները, բանկերի աուդիտային ստուգման կարգը:

Կանոնակարգ - 5 «Բանկերում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման նպատակով բանկային գործառնությունների իրականացման մասին կանոնակարգ», կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված բանկերի կողմից իրականացվող պարտադիր միջոցառումներն ու ընթացակարգերը կատարելու կարգն ու պայմանները:

Կանոնակարգ - 7 «Բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման ընթացակարգի մասին կանոնակարգ», սահմանում է անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի (այսուհետև՝ ադմինիստրացիա) ձևավորման կարգն ու պայմանները, ադմինիստրացիայի ղեկավարի թեկնածուին ներկայացվող պահանջները, սահմանափակումները, ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականների տրման կարգն ու պայմանները, ինչպես նաև անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման հետ կապված այլ հարաբերություններ:

Կանոնակարգ - 8 «Հայաստանի Հանրապետությունում արժույթային կարգավորումը և վերահսկողությունը», սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընթացիկ հաշվի գործարքների և կապիտալի շարժի հետ կապված գործարքների հասկացությունները, ինչպես նաև կարգավորում է արտարժույթը որպես վճարամիջոց օգտագործելու դեպքերը և վերահսկումը:

Կանոնակարգ - 9 «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները», սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները՝ Հայաստանի Հանրապետության դրամի վճարունակության հատկանիշները, բանկերում Հայաստանի Հանրապետության դրամանիշերի փոխանակումը, Կենտրոնական բանկում դրամանիշերը փորձաքննության ընդունելը և փոխանակելը, Հայաստանի Հանրապետության թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը, բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների վերականգնման կանոնակարգումը, բանկային հաշիվներից կանխիկ դրամի

դուրսգրումը, բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիան, բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացումը:

ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատված բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերն են.

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը, որը սահմանում է հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրս գրման հարցերը:

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործումը» կարգը, որը կանոնակարգում է բանկերի կողմից ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների դասակարգման, դրանց հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ու օգտագործման հարցերը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞վ է կարգավորում և վերահսկում բանկային համակարգի գործունեությունը:
2. Քանի՞ փուլից է բաղկացած բանկերի լիցենզավորման գործընթացը:
3. Որո՞նք են հանդիսանում բանկի անվճարունակության հիմքերը:
4. Ի՞նչպիսի նորմատիվ ակտերով են կարգավորվում բանկերի գործունեությունը:
5. Որո՞նք են բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական օրենքները:
6. Ինչպիսի տնտեսական նորմատիվներ է սահմանում ՀՀ կենտրոնական բանկը:

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային ռիսկերի տեսակները, դրանց գնահատման հիմնական եղանակները և կառավարման քաղաքականությունը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝

- բացատրել ռիսկ հասկացությունը
- ներկայացնել ռիսկերի հիմնական տեսակները
- բացատրել ռիսկերի գնահատման հիմնական եղանակները
- ներկայացնել ռիսկերի կառավարման հիմունքները:

7.1. Բանկային ռիսկերի էությունը և դրանց դասակարգումը

Տնտեսագիտական գրականության մեջ ռիսկի միանշանակ սահմանման բացակայությունը պայմանավորված է ռիսկը բնորոշող տարրերի տարբերություններով և բազմազանությամբ: Բացի այդ, ռիսկը բարդ հասկացություն է՝ հիմնված բազմաթիվ անհամապատասխան, հաճախ իրարամերձ հիմքերի վրա, ուստի դիտարկենք ռիսկը նկարագրող մի քանի կատեգորիաներ. «ռիսկ» բառը ծագել է հունական «*risdikon*» ժայռ բառից, իտալական բառարանում՝ «*risiko*», այն վտանգ նշանակությունն ունի, ֆրանսիական բառարանում՝ «*risdoe*»՝ ստացել է ռիսկի դիմելու իմաստը: «Վեբստերի» բառարանում ռիսկը սահմանվում է որպես վտանգ, վնաս, կորուստ կրելու հնարավորություն: Ռուսական «Օժեգովի» բառարանում ռիսկը սահմանվում է որպես վտանգի հնարավորություն կամ որպես հաջողությանը միտված գործողություններ, որոնք բարենպաստ ավարտ կունենան: «Ֆինանսական մեմեջմենթի» գրքում ռիսկը սահմանվում է հետևյալ կերպ. «Ռիսկը կորուստներ կրելու կամ եկամուտներ չստանալու հավանականությունն է, ցանկալի տարբերակի համեմատ», «Ռիսկը ժամանակակից բիզնեսում» գրքում նշվում է, որ «Ռիսկը ձեռնարկության կողմից իր ռեսուրսների մի մասը կորցնելու կամ եկամուտները չստանալու կամ հավելյալ ծախսեր կրելու հավանականությունն է որոշակի արտադրական, ֆինանսական գործունեության արդյունքում»:

Ռիսկի սահմանումը ամբողջապես բնութագրելու նպատակով նպատակահարմար է առաջ բերել «ռիսկային իրավիճակ» հասկացությունը, քանի որ այն խիստ փոխկապված է «ռիսկ» տերմինի բովանդակության հետ: Եթե գոյություն ունի այս կամ այն ռիսկային իրավիճակի հավանականության աստիճանի որակական և քանակական գնահատական, ապա հենց դա էլ կլինի ռիսկի իրավիճակը: Այստեղից էլ հետևում է, որ ռիսկային իրավիճակը կապված է վիճակագրական գործընթացների հետ, որոնց ուղեկցում է երեք պայման.

- անորոշության առկայություն
- այլընտրանքի անհրաժեշտություն (ընդ որում պետք է հաշվի առնել, որ տարբերակից հրաժարվելը ևս այլընտրանք է)
- ընտրված տարբերակների իրականացումը հավանականությունը գնահատելու հնարավորություն

Ռիսկը առկա է ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ այն իրականացնելու փուլում: Եվ առաջին, և երկրորդ դեպքերում անձը ցանկանում է նվազեցնել ռիսկը՝ իր կողմից անորոշությունը առավել հստակեցնելով: Այս դեպքում «Շուկա և ռիսկ» գրքում բերված հետևյալ ձևակերպումն առավել ամբողջական է. «Ռիսկը գործողություն է (գործունեություն, արարք) ընտրության պայմաններում (ընտրելու իրավիճակում ակնկալելով հաջող ավարտ), երբ անհաջողության պարագայում գոյություն ունի հնարավորություն (վտանգվածության աստիճան) գտնվելու վատագույն վիճակում, քան թե մինչ ընտրություն կատարելը (մինչ այդ գործողության կատարումը)»: Իսկ «Ռիսկը և դրա դերը հասարակական կյանքում» գրքում բերված է հետևյալ սահմանումը. «Ռիսկը գործողություն է, որը կապված է անխուսափելի իրավիճակում անորոշության հաղթահարման հետ և որի ընթացքում հնարավորություն կա քանակապես և որակապես գնահատել առաջարկվող արդյունքին հասնելու հավանականությունը (անհաջողության, նպատակից շեղման)»:

«Ռիսկ» հասկացության մեջ առանձնացնենք հետևյալ հիմնական տարրերը, որոնց փոխկապակցվածությունն էլ հանդիսանում է նրա էությունը.

- ենթադրվող նպատակից շեղման հնարավորություն, որի համար էլ կատարվում է այլընտրանքների ընտրությունը
- ցանկալի արդյունքին հասնելու հավանականություն
- դրված նպատակին հասնելու վստահության բացակայություն
- հնարավոր նյութական, բարոյական և այլ կորուստներ կապված անորոշության պայմաններում ընտրված տարբերակի իրականացման հետ:

Այս ամենի հետ մեկտեղ ռիսկին բնորոշ է մի շարք այլ բնորոշումներ, որոնք օգնում են հասկանալ դրա բովանդակությունը.

- հակասական լինելը
- այլընտրանքայնությունը
- անորոշությունը

Բանկերի գործունեության վերջնական նպատակը, սահմանված կանխարգելիչ նորմատիվների պահանջներն ապահովելով սեփական և [ներգրավված միջոցների](#) տեղաբաշխմամբ առավելագույն շահույթի ստացումն է: Ինչպես ցանկացած ֆինանսական գործունեություն, այնպես էլ բանկայինը՝ մշտապես ռիսկ է պարունակում: Սակայն ռիսկերն արտադրական և բանկային բնագավառներում զգալիորեն տարբերվում են միմյանցից: Ձեռնարկության տեսանկյունից ռիսկը սեփականատերերի կողմից ներդրված գումարները կորցնելու հավանականությունն է: Բանկերի տեսանկյունից ռիսկը սեփականատերերի և բանկերի հաճախորդների կողմից բանկում ներդրված գումարները կորցնելու հավանականությունն է: Սովորաբար ընդունված է ասել, որ բանկն իր եկամուտները ստանում է այն ռիսկերի ստանձնման հաշվին, որոնք բանկի հաճախորդները չեն ուզում կամ չեն կարող ստանձնել:

Ներկայումս ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվում է ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն, որը հնարավորություն է տալիս գնահատել բանկի ռիսկային գործունեության մակարդակը և դրա ազդեցությունը բանկի կապիտալի, ակտիվների որակի, իրացվելիության և ի վերջո վճարունակության վրա: Այստեղից ռիսկն այն պոտենցիալ հնարավորությունն է, որ ակնկալվող և չնախատեսված դեպքերը կարող են բացասական ազդեցություն ունենալ հաստատության կապիտալի և շահույթի վրա:

7.2. Ռիսկի տեսակները

Միջազգային պրակտիկայում ընդունված են ռիսկերի դասակարգման տարբեր եղանակներ՝ կախված նրանից, թե որ չափանիշն է ընկած դասակարգման հիմքում: Ելնելով գործունեության միջավայրի և ազդեցության ոլորտից՝ բանկային ռիսկերը կարելի է բաժանել երկու խմբի.

- 1. արտաքին
- 2. ներքին:

Արտաքին ռիսկերի խմբում ներառվում են բանկի գործունեության ընթացքում առաջացող այն ռիսկերը, որոնք կապված չեն բանկի ներքին կազմակերպչական աշխատանքների, գործունեության կազմակերպման հետ, սակայն թողել են իրենց ազդեցությունը բանկի ֆինանսական գործունեության արդյունքների վրա: Ռիսկերի այս խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- 1. երկրի
- 2. շուկայական
- 3. տարերային աղետների
- 4. տնտեսական
- 5. մակրոտնտեսական
- 6. ֆինանսական
- 7. օրենսդրական
- 8. փոխանցման
- 9. ճյուղային և այլն

Երկրի ռիսկը որոշվում է, ելնելով տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացածության մակարդակից, համաշխարհային տնտեսական համակարգում նրա տեղից և դերից: Երկրի ռիսկի գնահատումը կարևորվում է արտերկրի հետ գործառնություններ իրականացնելիս, մասնավորապես կապված այլ երկրների բանկերում թղթակցային հաշիվներ բացելու, միջազգային փոխանցումներ կատարելու և այլ գործառնություններ իրականացնելու հետ:

Շուկայական ռիսկն առաջանում է շուկայական տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Օրինակ, ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների, արտարժույթի փոխարժեքների, գույքի, շենքի, շինությունների և սարքավորումների գների ոչ բարենպաստ փոփոխությունից:

Տարերային աղետների ռիսկը կամ ֆորս-մաժորային ռիսկը պայմանավորված է անկանխատեսելի, անհաղթահարելի բնական աղետների առաջացման հետ: Ռիսկի կառավարման ճանապարհը վթարներից, հրդեհներից, երկրաշարժներից և տարերային այլ աղետներից ապահովագրումն է:

Տնտեսական ռիսկը պայմանավորված է համախառն ազգային արդյունքի նվազմամբ կամ աճի ցածր տեմպերով, ապրանքների գների կտրուկ աճով, արտահանման եկամուտների նվազմամբ, հումքի և էներգիայի ներմուծման ծախսերի ավելացմամբ, վճարային հաշվեկշռի դեֆիցիտով և այլն:

Մակրոտնտեսական ռիսկը կապված է երկրում տնտեսական հարաբերությունների խախտման և անբարենպաստ ֆինանսական գործոնների առաջացմամբ:

Ֆինանսական ռիսկի առաջացումն արդյունք է արտաքին պարտքի և համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի խզման:

Օրենսդրական ռիսկը ծագում է կապված օրենսդրության փոփոխությունների, օրենսդրական պահանջների խախտումների հետ կամ այս կամ այն գործունեությունն օրենսդրությամբ չնախատեսվելուց:

Փոխանցման ռիսկն առաջանում է արտարժույթի անհրաժեշտ ծավալի բացակայությունից, արտաքին առևտրի, ներդրումների և վճարային հաշվեկշռի ռիսկերից, պարտավորությունների կատարումից հրաժարման, պայմանագրի պահանջների վերանայման, նախագծերի վերանայման և այլնի հետևանքով:

Ճյուղային ռիսկն առաջանում է տվյալ ճյուղի ցածր եկամտաբերության կամ եկամտաբերության մակարդակի կտրուկ նվազման, բնականոն գործունեության խափանման, ճգնաժամային իրավիճակի հետևանքով:

Ներքին ռիսկերն առաջանում են բանկի գործունեության ընթացքում և կապված են նրանց կողմից իրականացվող գործարքների տեսակների հետ:

Բանկի գործունեության ընթացքում առաջացող ներքին ռիսկերը կարելի է տարանջատել չորս խմբի.

- 1. հաշվեկշռային ռիսկ, որը կարելի է տարանջատել երկու խմբի՝
 - 1.1. բանկի ակտիվային գործառնությունների հետ կապված ռիսկեր
 - 1.2. բանկի պասիվային գործառնությունների հետ կապված ռիսկեր
- 2. Հետհաշվեկշռային ռիսկ
- 3. բանկի կողմից ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման հետ կապված ռիսկեր
- 4. բանկի կողմից ֆինանսական ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկեր:
 - 1. Հաշվեկշռային ռիսկերի խմբում ընդգրկվում են.
 - վարկային
 - արժեթղթերի
 - ներդրումային

- կապիտալի կառուցվածքի
- և այլ ռիսկերը:

Վարկային ռիսկը իրենից ներկայացնում է այն բանի հավանականությունը, որ վարկառուի կողմից չեն կատարվի պայմանագրային կարգով նրա ստանձնած պարտավորությունները, այսինքն, չի վերադարձվի վարկի մայր գումարը կամ տոկոսագումարները: Վարկային ռիսկը սերտորեն առնչվում է հաճախորդի վարկունակության գնահատման հետ: Հաճախորդի վարկունակության գնահատումը կամ ինչպես ընդունված է ասել «Պրո-ֆորմա» վերլուծությունը հնարավորություն է ընձեռնում գնահատելով հաճախորդի իրավունակությունը, ֆինանսական կայունությունը, իրացվելիության մակարդակը, շուկայում նրա դիրքը, խուսափել հետագա ռիսկերից և կորուստներից:

Արժեթղթերի ռիսկն առաջանում է շուկայում արժեթղթերի գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Արժեթղթերի ռիսկը գնահատելիս պետք է հաշվի առնել հետևյալ ռիսկերը.

- կապիտալի կորստի (արժեթղթերի պորտֆելի չիրացվելիության ռիսկը)
- ընտրանքային (արժեթղթերի սխալ ընտրության ռիսկը)
- շուկայական (արժեթղթերի արժեզրկման ռիսկը):

Ներդրումային ռիսկն արդյունք է բանկի կողմից այլ անձի կանոնադրական հիմնադրամում իրականացրած ներդրումների սպասվածից ցածր եկամտաբերության, շահույթի բացակայության կամ ընդհանրապես կորստի:

Կապիտալի կառուցվածքի ռիսկն իրենից ներկայացնում է այն բանի հավանականությունը, որ կապիտալի հաշվարկում ընդգրկված տարրերը ռեալ չեն արտահայտում բանկի կապիտալի մեծությունը, և որ բանկն ի վիճակի չի լինի սեփական միջոցների հաշվին կատարել ստանձնած պարտավորությունները:

2. Հետհաշվեկշռային ռիսկերի խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- ֆինանսական երաշխիքների
- գրավների
- հավատարմագրային գործառնությունների և այլն:

Ֆինանսական երաշխիքների ռիսկն իրենից ներկայացնում է այն բանի հավանականությունը, որ երաշխիք ստացած հաճախորդը չի կատարի ստանձնած պարտավորությունները և բանկը ստիպված կլինի կատարել այն հաճախորդի փոխարեն:

Գրավների ռիսկը այն բանի հավանականությունն է, որ հաճախորդը չի կատարի ստանձնած պարտավորությունները և բանկը ստիպված կլինի իր կրած կորուստները փոխհատուցել գրավի իրացմամբ: Գրավի ռիսկը կախված է այն բանից, թե ում մոտ է գտնվում գրավը՝ գրավառուի, թե գրավատուի, ապահովագրված է տվյալ գրավը, թե ոչ:

Հավատարմագրային գործառնությունների ռիսկը բանկի կողմից հավատարմագրային կառավարման վերցված ակտիվների ոչ ճիշտ կառավարման արդյունքում կրած վնասն է:

3. Բանկի կողմից ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման հետ կապված ռիսկերի խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- տոկոսադրույթ
- անվճարունակության
- արտարժույթային
- իրացվելիության:

Տոկոսադրույթի ռիսկը ծագում է ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույթների փոփոխման ժամկետների անհամապատասխանությունից: Տոկոսադրույթի ռիսկից կարելի է խուսափել, երբ ակտիվները և պարտավորությունները ճշգրտորեն հակադրվում և հավասարակշռվում են միմյանց թե ծավալի, և թե տոկոսադրույթի փոփոխման ժամկետի տեսանկյունից: Տոկոսադրույթի ռիսկի ընդունված տարբերակը հեջավորումն է:

Անվճարունակության ռիսկը ծագում է այն ժամանակ, երբ բանկը սպառել է իր հիմնական կապիտալը կամ դրա զգալի մասը:

Փողարժեքի ռիսկն առաջանում է ազգային արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից բանկի վնաս կրելը կամ շահույթի ստացումը կախված է այն բանից, թե բանկն արտարժույթային ինչ դիրք ունի և ինչպես է իրականացնում արտարժույթով ստանձնած պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ծավալների կառավարումը:

Իրացվելիության ռիսկն առաջանում է այն ժամանակ, երբ բանկի ստանձնած պարտավորությունների մարման ապահովման համար կանխիկ միջոցների անբավարարություն է զգացվում:

4. Բանկի կողմից ֆինանսական ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկերի խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը.

- գործառնական
- տեխնոլոգիական
- անվտանգության
- նորամուծության
- ստրատեգիական
- հաշվառման
- վարչական
- կազմակերպչական:

Գործառնական ռիսկերը իրենց մեջ ներառում են բանկի ծառայությունների գների փոփոխության և ընթացիկ ծախսերի ավելացման հետ կապված ռիսկեր:

Տեխնոլոգիական ռիսկերին դասվում են տեխնոլոգիական գործառնությունների հետ կապված համակարգչային ցանցի խափանման, պահուստների բացակայության պատճառով փաստաթղթերի կորստի և այլ ռիսկեր:

Անվտանգության ռիսկերը կապված են բանկի տարածքի անվտանգության, ներքին հակահրդեհային անվտանգության ռիսկերի հետ:

Նորամուծության ռիսկերը նախագծային, նոր գյուտերի ներմուծման հետ կապված ռիսկերն են (հազվագյուտ նախագծերի ռիսկ, շուկայական կամ պորտֆելային ռիսկ), որն իր մեջ ներառում է նաև նորամուծության սխալ ընտրության ռիսկը, նորամուծության համար ոչ ճիշտ ժամանակ ընտրելու ռիսկը, օրենսդրության փոփոխության հետևանքով բանկի նոր գործունեության ոլորտի կանխման ռիսկը:

Ստրատեգիական ռիսկը բանկի ղեկավարության որդեգրած ոչ ճիշտ քաղաքականության արդյունքում նախատեսված եկամուտներ չստանալու ռիսկն է, որի պատճառը կարող է լինել ռիսկի թույլատրելի մակարդակը գերազանցելը, ռիսկի աստիճանի և չափի սխալ գնահատումը: Սրանք բանկի սխալ որոշումների, գործարքների ժամկետների ոչ ճիշտ որոշման և այլ ռիսկերն են:

Հաշվառման ռիսկերը կապված են ոչ ճիշտ կամ ոչ ժամանակին հաշվառման հետ: Դա չհաշվառված թղթակցությունների պատճառով խաբեության ռիսկն է:

Վարչական ռիսկերը հիմնականում կապված են վճարման և այլ փաստաթղթերի կորստի հետ: Աղմինիստրատիվ ռիսկերը սերտորեն կապված են բանկային չարաշահումների հետ:

Կազմակերպչական ռիսկերը կապված են բարձրակարգ մասնագետների բացակայության, ֆինանսական տեղեկատվության բացակայության հետ:

Ներկայացվող դասակարգումների նման բազմազանությունից աշխատանքում առավել նպատակահարմար է անդրադառնալ ռիսկերի հետևյալ դասակարգմանը:

- Ֆինանսական ռիսկեր
- Ոչ ֆինանսական ռիսկեր
- 1. Ֆինանսական ռիսկերի շարքին են դասվում.
 - վարկային ռիսկ
 - շուկայական ռիսկ, որը լինում է.
 1. փոխարժեքի տատանման ռիսկ
 2. տոկոսադրույքի տատանման ռիսկ
 3. շուկայական գների տատանման ռիսկ
 - իրացվելիության ռիսկ
- 2. Ոչ ֆինանսական ռիսկերի շարքին են դասվում.
 - օրենսդրական ռիսկ
 - [գործառնական ռիսկ](#)
 - ֆորս-մաժորային ռիսկ
 - տնտեսավարման/ռազմավարական ռիսկ
 - վարկանիշի ռիսկ

Օրենսդրական ռիսկ - Օրենսդրական ռիսկն այն ռիսկն է, որը սպառնում է շահույթին ու կապիտալին, որն առաջանում է, կապված օրենսդրության փոփոխությունների, օրենսդրական պահանջների խախտումների հետ: Այս ռիսկը նաև կարող է առաջանալ այն դեպքերում, երբ բանկի հաճախորդների գործունեությունը կարգավորող օրենքներն ու կանոնները հստակ չեն կամ դեռևս չեն ներդրվել:

Գործառնական ռիսկ – Գործառնական ռիսկն այն ռիսկն է, որը սպառնում է շահույթին ու կապիտալին, որն առաջանում է մատուցվող ծառայությունների գների փոփոխության և ընթացիկ ծախսերի ավելացման հետևանքով: Այս ռիսկն առաջանում է ամեն օր, բոլոր հաստատություններում, գործառնությունների իրականացմանը զուգընթաց:

Ֆորս- մաժորային ռիսկ - Ֆորս- մաժորային ռիսկ այն ռիսկն է, որը սպառնում է շահույթին ու կապիտալին և պայմանավորված է ոչ կանխատեսելի, անհաղթահարելի բնական աղետների առաջացման հետ: Ռիսկի կառավարման ճանապարհը վթարներից, հրդեհներից, երկրաշարժերից և տարերային այլ աղետներից ապահովագրումն է:

Տնտեսավարման/ռազմավարական ռիսկ – Տնտեսավարման/ռազմավարական ռիսկն այն ռիսկն է, որը սպառնում է շահույթին ու կապիտալին, որն առաջանում է սխալ որոշումների ընդունման կամ որոշումների ոչ ճիշտ կիրառման հետևանքով: Այս ռիսկը կախված է կազմակերպության ռազմավարական նպատակների, այս նպատակներին հասնելու համար մշակված բիզնես ռազմավարության, այս նպատակներին հասնելու համար օգտագործվող ռեսուրսների և իրականացման ճանապարհների համատեղելիությունից:

Վարկանիշի ռիսկ – վարկանիշի ռիսկն այն ռիսկն է, որը սպառնում է շահույթին ու կապիտալին՝ բացասական հասարակական կարծիքի հետևանքով: Այն ազդում է հաստատության նոր կապեր հաստատելուն և ծառայություններ մատուցելուն, ինչպես նաև գոյություն ունեցող կապերի սպասարկման կարողության վրա: Այս ռիսկը կարող է դատական վեճի, ֆինանսական կորուստների կամ վարկանիշի անկման պատճառ հանդիսանալ: Վարկանիշի ռիսկն առկա է ամբողջ կազմակերպության մեջ: Այս պատճառով ավանդ ընդունող բոլոր հաստատությունները պետք է շատ զգույշ լինեն հաճախորդների հետ աշխատելիս:

7.3. Բանկային ռիսկերի գնահատման հիմնական եղանակները

Այսօր բանկերի ֆինանսական շուկաներին ակտիվ ինտեգրվելուն ուղղված քաղաքականությունը բազմաթիվ նոր ֆինանսական ռիսկերի առջև է կանգնեցնում նրանց՝ խնդրո առարկա դարձնելով դրանց կառավարումը: Նախ և առաջ ռիսկերի կառավարման նպատակով անհրաժեշտ է հնարավորինս ճիշտ գնահատել

ռիսկերը, ուստի դրանք գնահատող մոդելներն անընդհատ կատարելագործման պետք է ենթարկվեն, ինչպես բանկերի, այնպես էլ բանկերի գործունեությունը վերահսկող մարմինների կողմից: Ընդ որում, վերջիններիս համար առավել կարևոր է ստեղծել մեկ ընդհանրական ռիսկերի գնահատման համակարգ (որը կներառի իր մեջ մեթոդներ ըստ տարբեր ռիսկերի) բանկերի գործունեությունը հաշվառելու և վերահսկելու նպատակով: Այս առումով, նախ և առաջ հարկ է ճանաչել բանկային ռիսկերի գնահատման հիմնական եղանակները:

Առանձնացվում են ռիսկերի գնահատման հետևյալ եղանակները՝

- վերլուծական մեթոդ
- ռիսկի գոտու վերլուծություն միկրո և մակրո մակարդակներով
- որակական
- քանակական

փորձագիտական գնահատման մեթոդ

փորձագետների կարծիքներ և վարկանշային գնահատում

- վիճակագրական մեթոդ

վիճակագրական շարքերի վերլուծություն:

վերլուծական մեթոդի հիմնական մոտեցումները՝

- ինդուկցիոն մոտեցում. տվյալների և փաստերի հավաքագրում, համակարգում և ամփոփում
- դեդուկցիոն մոտեցում. հիպոթեզների ներկայացում, որոնք հետագայում համադրվում են փաստերի հետ
- պոզիտիվ մոտեցում. ուսումնասիրվում է այն ամենը, ինչ գոյություն ունի
- նորմատիվային մոտեցում. արտահայտվում են սուբյեկտիվ մոտեցումներ և պատկերացումներ այն մասին, թե ինչ պետք է լինի

Քանակական վերլուծական մեթոդը ենթադրում է առանձին ռիսկի կամ մի խումբ ռիսկերի թվային գնահատական: Այս փուլում որոշվում է ռիսկային իրադարձությունների և դրանց հետևանքների հանդես գալու հավանականությունների թվային արժեքը, տրվում է ռիսկի մակարդակի քանակական գնահատականը և սահմանվում տվյալ կոնկրետ իրավիճակում ռիսկի ընդունելի մակարդակը:

Որակական վերլուծական մեթոդը ենթադրում է ռիսկի ծագման աղբյուրների և պատճառների հայտնաբերում, ռիսկի պոտենցիալ սահմանների որոշում, կարևորվում է բոլոր հնարավոր ռիսկերի բացահայտումը: Որակական վերլուծությունները հիմնվում են որոշակի որակական դասակարգումների վրա, մասնավորապես հետևյալ կերպ.

Ռիսկը ըստ ազդեցության մակարդակի.

- բարձր, վկայում է այն մասին, որ ներդրումները ամբողջությամբ հավասար են կորստի
- չափավոր, կազմակերպությունը կորցնում է հիմնական պարտքի մի մասը միայն և ռիսկը դեռևս գտնվում է թույլատրելի սահմաններում
- ցածր, կազմակերպությանը թույլ է տալիս ստանալ կայուն շահույթ:

Ռիսկը ըստ մասշտաբների կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- ընդհանուր
- մասնավոր

Երկու դեպքում էլ հաշվարկի հիմք է հանդիսանում տվյալ կազմակերպության թույլատրելի ռիսկի չափի և սպասվելիք կորուստների միջև գոյություն ունեցող կախվածության որոշումը:

Ընդհանուր կամ համալիր մոտեցումը բանկի համախառն ռիսկն է նրա գործունեության ամբողջ ոլորտում: Ընդհանուր ռիսկը կարելի է հաշվել ինչպես պարբերաբար (օրինակ, բանկի ընդհանուր վարկային ռիսկի որոշումը, կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների կատարմանը հետևելը), այնպես էլ բանկի գործունեության ցուցանիշների կտրուկ վատթարացման դեպքում:

Մասնավոր մոտեցումը բանկի առանձին գործարքի ռիսկն է: Մասնավոր ռիսկը որոշվում է էմպիրիկ՝ յուրաքանչյուր գործարքի համար առանձին եղանակով:

Փորձագիտական գնահատման մեթոդ

Փորձագիտական գնահատման մեթոդը իրենից ներկայացնում է սուբյեկտիվ գնահատական, այսինքն փորձագետի անկախ կարծիք, իսկ վարկանշային գնահատականը՝ տարբեր ցուցանիշների հիման վրա դասակարգումն է:

Վիճակագրական մեթոդ

Վիճակագրական մեթոդը հիմնվում է վիճակագրական շարքերի ուղղահայաց և հորիզոնական վերլուծության վրա:

7.4. Բանկային ռիսկերի կառավարման քաղաքականությունը

Ռիսկերի կառավարումը բացառիկ տեղ է գրավում բանկային համակարգում: Բանկային գործունեության մեջ յուրաքանչյուր կառավարչական որոշում հանդիսանում է ռիսկային, դժվար կանխատեսելի և որոշիչ: Դա պայմանավորված է զանազան սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների հանդես գալու համաձայն ոլորտի զգայուն լինելով: Յուրաքանչյուր փոքրագույն անկայունությունը շատ ծանր անդրադարձ է ունենում ֆինանսական շուկայի բոլոր սեգմենտների իրավիճակի և դինամիկայի վրա: Եվ քանի որ մակրոտնտեսական ցուցանիշները դժվար կանխատեսելի են, կառավարչական որոշումներն ընդունելիս ռիսկից լիովին խուսափելը պարզապես անհնար է: Այդ իսկ պատճառով այս կամ այն գործառնությունը կատարելիս բանկային ռիսկերի կառավարման հիմնական խնդիրը կայանում է հնարավոր ռիսկերի գնահատման և դրանք նվազագույն մակարդակի իջեցնելու մեջ: Այստեղից էլ արդիական է դառնում ռիսկերի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը, որը և հնարավորություն է ընձեռում բավարարել արագ զարգացող ԳՀ և միջազգային ֆինանսական շուկաների պահանջները:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է.

▪ Ճիշտ ըմբռնել ռիսկը: Այս գործոնը կարևոր է այնքանով, որքանով ռիսկի տարբեր տեսակները խիստ փոխկապակցված են միմյանց հետ և ռիսկի մի տեսակը իր հետ կարող է առաջ բերել մյուս տեսակները: Ուստի, ռիսկը ճիշտ կառավարելու նպատակով արճիհաժեշտ է հստակ պատկերացնել, թե ռիսկի որ տեսակի հետ գործ ունենք, և ինչ միջոցառումներ պետք է իրականացնել ռիսկը վերահսկելու և կառավարելու համար

▪ Ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրում: Այս փուլը իրականացվում է մասնաճյուղերից ստացվող հաշվետվությունների հիման վրա՝ առևտրային բանկերի համար, և բանկերից ստացվող հաշվետվությունների հիման վրա՝ Կենտրոնական բանկի համար

▪ Հավաքագրված տվյալների հիման վրա ռիսկի քանակական և որակական բնութագիր: Այս քայլը ցույց է տալիս, որ ստացված հաշվետվությունների հիման վրա կատարվում է ռիսկի առանձին տեսակների գծով քանակական և որակական մակարդակների բացահայտում, այսինքն ռիսկի յուրաքանչյուր տեսակի գծով ֆիքսվում է բանկում տիրող իրավիճակը:

▪ Իրավիճակի հստակեցումից հետո մշակվում են համապատասխան միջոցառումներ՝ առավել ռիսկային բնագավառները կառավարելու նպատակով:

Յուրաքանչյուր բանկ, ելնելով իր առանձնահատկություններից, ֆինանսական շուկայում գրաված դիրքից և իր հաճախորդների առանձնահատկություններից, ինքնուրույն է որոշում իր գործառնությունների ռիսկայնության աստիճանը: Որպես կանոն, առևտրային բանկերը ձգտում են առավելագույնի հասցնել իրենց ռիսկը (բանկային գործունեության եկամտաբերությունը և ռիսկը իրար հետ կապված են ուղիղ համեմատական կապով), իրացվելիությունը պահելով ընդունելի մակարդակի վրա, իսկ Կենտրոնական բանկը ձգտում է առավելագույնի հասցնել բանկերի իրացվելիությունը՝ ռիսկը պահելով ընդունելի մակարդակի վրա:

Բանկային ռիսկերի կառավարումը բանկային ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր գործողությունների համակարգ է, որը ներառում է ռիսկերի կանխատեսում, նրանց հնարավոր չափերի և հետևանքների որոշում, ռիսկերի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման միջոցառումների իրականացում:

Այդ ամենը ենթադրում է յուրաքանչյուր բանկի կողմից ռիսկերի կառավարման ռազմավարության, այսինքն՝ որոշումների ընդունման քաղաքականության մշակում այնպես, որ ժամանակին և հետևողականորեն օգտագործվեն բանկի զարգացման բոլոր հնարավորությունները, միաժամանակ պահպանելով ռիսկի թույլատրելի և կառավարելի մակարդակը:

Յուրաքանչյուր բանկ ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով պետք է սահմանի ռիսկերի կառավարման իր քաղաքականությունը: Այն պետք է ներառի հետևյալ հիմնական բաժինները.

- քաղաքականության նպատակը՝ ապահովել շահույթի ընդունելի մակարդակ ռիսկի հնարավոր չափով նվազեցման պայմաններում
- քաղաքականության խնդիրները
- ռիսկերի դասակարգումը և բնորոշումը
- ռիսկերի առաջացման աղբյուրների բացահայտումը
- ռիսկերի սահմանաքանակների հստակեցումը
- ռիսկի փոխհատուցման նպատակով այլընտրանքային տարբերակների սահմանումը
- ռիսկի գծով հնարավոր կորուստների գնահատումը:

Ռիսկի կառավարման մեթոդները, որոնց շարքին են դասվում՝

1. դիվերսիֆիկացիա (տարբերակում կամ շերտավորում): Ցույց է տալիս, որ բանկը իր միջոցները չի կենտրոնացնում մի բնագավառում, այլ կատարում է շերտավորված ներդրումներ, ելնելով հետևյալ չափանիշներից.

- ըստ հաճախորդների խմբի
- ըստ տնտեսության ճյուղերի (առևտրի, արտադրության, գյուղատնտեսության և այլն)
- ըստ տարածաշրջանների
- ըստ ժամկետների և այլն:

2. նորմատիվային մեթոդ, որը ստորաբաժանվում է 2 խմբի՝

- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող տնտեսական նորմատիվներ
- առևտրային բանկերի կողմից սահմանված ներքին նորմատիվներ: Սրանք բանկերը սահմանում են ինքնուրույն իրենց ռիսկերը առավել խորը և համակողմանի կառավարելու նպատակով: (ՀՀ ներքին նորմատիվներ բանկերը չեն կիրառում բացառությամբ HSBC – Հայաստան բանկից):

3. ծածկույթի ապահովում. Այստեղ մտնում են գրավը, երաշխիքը, ապահովագրությունը, կայուն դրամական հոսքերը (cash flow) և այլն

- ճեղքվածք (GAP).
- տոկոսադրույթի ճեղքվածք
- իրացվելիության ճեղքվածք
- արտարժույթի ճեղքվածք
- ստրես Թեսթավորում
- դյուրացիայի մոդել
- VaR (Value at Risk)

1. Ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումներ. Միջոցառումների այն համալիրն է, որ կիրառվում են ռիսկի յուրաքանչյուր տեսակի նվազեցման ուղղությամբ: Այստեղ կոնկրետ պետք է մշակի միջոցառման բովանդակությունը, ժամկետը, իրականացնող անձը և այլն

2. Ռիսկի կառավարումն իրականացնող և դրա համար պատասխանատու ստորաբաժանումը. Որպես կանոն, ռիսկի կառավարման վերջնական արդյունքների համար պատասխանատվությունը կրում է բանկի խորհուրդը:

Բանկերում ռիսկերի կառավարումը կատարվում է կենտրոնացված կամ ապակենտրոնացված տարբերակով: Կենտրոնացված տարբերակի դեպքում ռիսկի կառավարումը իրականացվում է առանձնացված ստորաբաժանման կողմից: Ապակենտրոնացված տարբերակի դեպքում բանկի համապատասխան ստորաբաժանումը կառավարում է իրեն բնորոշ ռիսկը:

3. Ոչ ստանդարտ իրավիճակներում բանկի կողմից իրականացվող միջոցառումներ. Օրինակ, դեպոզիտների մեծ արտահոսքը, տոկոսադրույքի կտրուկ փոփոխությունը և այլն: Այս բաժինը ցույց է տալիս, թե բանկը որքանով է պատրաստ արագ արձագանքել շուկայի անկանխատեսելի փոփոխություններին:

Ռիսկերի կառավարման ռազմավարության նպատակները և խնդիրներն առավելապես որոշվում են անընդհատ փոփոխվող արտաքին տնտեսական միջավայրով, որտեղ գործում է բանկը: Վերջին տարիներին բանկային գործում տնտեսական միջավայրի փոփոխման հիմնական հատկանիշներն են տնտեսական ճգնաժամերի՝ մասնավորապես, ռուսաստանյան ճգնաժամի հետևանքով բանկային համակարգի, պետական արժեթղթերի նկատմամբ բնակչության շրջանում վստահության անկումը, կենտրոնական բանկի կողմից բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովման նպատակով բանկերի նկատմամբ առավել խիստ պահանջների առաջադրումը, դրամական և վարկային շուկաների ընդլայնումը, նոր բանկային ծառայությունների ի հայտ գալը, բանկերի միջև մրցակցության ուժեղացումը, բիզնեսի մանր և միջին ոլորտում սնանկացումների աճը, վարկերի վերադարձելիության գործունե Երաշխիքների բացակայությունը:

Այսպիսով, բանկերը իրենց գործունեության ընթացքում պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն ռիսկերի կառավարման գործընթացին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով իրենց կորուստները, հետևաբար վերականգնելով վստահության մակարդակը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է ռիսկը:
2. Ո՞րն է բանկային ռիսկերի էությունը:
3. Ի՞նչ սկզբունքով կարելի է դասակարգել բանկային ռիսկերը:
4. Ի՞նչպիսի ռիսկերի գնահատման մեթոդներ գոյություն ունեն:
5. Ինչո՞ւ է կայանում ռիսկերի կառավարման քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ 8. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումները: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի բանկային համակարգի հիմնական ցուցանիշների վրա ազդող գործոններին:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները կկարողանան՝

- ներկայացնել ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ պատկերը
- բացատրել ՀՀ բանկային համակարգի կապիտալի վրա ազդող գործոնները
- ներկայացնել ՀՀ բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը
- ներկայացնել ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններ կառուցվածքը
- բացատրել ՀՀ բանկային համակարգի [շահութաբերությունը](#)
- բացատրել ՀՀ բանկային համակարգի իրացվելիությունը
- ներկայացնել մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում:

8.1. ՀՀ տարածքում գործող բանկերը

2002 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 25 բանկ, այդ թվում 20 բանկ գործում էր ընդհանուր վերահսկողության դաշտում, իսկ 5 բանկ՝ հատուկ վերահսկողության դաշտում:

Հատուկ վերահսկողության դաշտում գործող 5 բանկերի ընդհանուր պարտավորությունները 29.0 մլրդ դրամով գերազանցել են ընդհանուր ակտիվները: Տարեվերջին 5 բանկերի կողմից տնօրինվել է բանկային համակարգի պարտավորությունների մոտ 21.5%-ը կամ 51.0 մլրդ դրամ, ակտիվների 8.8%-ը կամ 22.0 մլրդ դրամ (որոնց հիմնական մասը կազմում են խնդրահարույց ակտիվները) և վնասն ամբողջությամբ կազմել է 40.4 մլրդ դրամ:

Հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ֆինանսական առողջացման ծրագրով համաձայն բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին օրենքով սահմանված կարգի պահանջների: Այս բանկերի ղեկավարումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նշանակված ժամանակավոր ադմինիստրացիաների կողմից: Այսպիսով, քանի որ այս բանկերը գտնվում են նորմատիվային, ընդհանուր դաշտից դուրս և իրավասու են իրականացնել միայն սահմանափակ գործառնություններ, ապա առավել իրատեսական պատկեր ստանալու համար, բանկային համակարգի զարգացման միտումները վերլուծելիս, հիմք է ընդունվել վերահսկողության ընդհանուր դաշտում գործող 20 բանկերի ֆինանսատնտեսական ցուցանիշները:

8.2. Բանկային համակարգի կապիտալը

2002թ. ընթացքում բանկերի ընդհանուր կապիտալն աճել է 29.2%-ով և 31.12.2002թ. կազմել 42.1 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3.1%-ը՝ նախորդ տարվա 2.8%-ի դիմաց:

Ընդհանուր կապիտալի 9.5 մլրդ դրամի չափով աճը հիմնականում կանոնադրական հիմնադրամի և ընթացիկ տարվա շահույթի զգալի աճերի արդյունք է: Կանոնադրական հիմնադրամի զգալի աճը պայմանավորված է եղել նաև 2002թ. հուլիսի 1-ից 1.650 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի ապահովմամբ: Նշված նորմատիվի նվազագույն սահմանաչափի ավելացումը հետապնդում է բանկերի խոշորացում և բանկային համակարգի հուսալիության մակարդակի բարձրացում:

Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամի աճի միայն 13%-ն է պայմանավորված ոչ ռեզիդենտների ներդրումներով, ըստ որի կանոնադրական հիմնադրամում ոչ ռեզիդենտների մասնակցության տեսակարար կշիռը նվազել է 8.3 տոկոսային կետով և 31.12.2002թ. դրությամբ կազմել 52.3%:


Ներքոհիշյալ աղյուսակում պատկերված է շահութաբեր և վնասաբեր բանկերի խմբերի ընդհանուր կապիտալի փոփոխությունը հաշվետու տարվա ընթացքում:

Աղյուսակ 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի փոփոխությունը

	16 շահութաբեր բանկեր	4 վնասով աշխատող բանկեր	Բանկային համակարգ
Կապիտալը տարեսկզբին	26.7	5.9	32.6
Կանոնադրական կապիտալի ավելացում	4.6	1.2	5.8
Չբաշխված շահույթ	3.0	-0.6	2.4
Կապիտալի այլ հոդվածների փոփոխություն	1.3	-	1.3
Կապիտալը տարեվերջին	35.6	6.5	42.1

Թեև նախորդ տարեվերջի համեմատ բանկերի ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշներն՝ ընդհանուր կապիտալի հարաբերությունը շիսկով կշռված ակտիվներին և հիմնական կապիտալի հարաբերությունը շիսկով կշռված ակտիվներին, նվազել են համապատասխանաբար 2.7 և 2.8 տոկոսային կետերով, այնուամենայնիվ, տարեվերջին դրանք ավելի քան կրկնակի անգամ գերազանցում են նորմատիվային պահանջները, կազմելով համապատասխանաբար 30.5% և 28.8% (պահանջվող նվազագույն սահմանաչափը՝ 12% և 8%):

Ստորև բերված նկարում պատկերված է տարվա վերջի դրությամբ կապիտալի համարժեքությունը ըստ անկերի:




Սկար 2. Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի

Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ ընդհանուր կապիտալի համարժեքության մակարդակի արձանագրված նվազումը հիմնականում հետևանք է բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի աճի տեմպի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճի տեմպի: Միևնույն ժամանակ, ակտիվների ռիսկայնության աճը ուղեկցվել է դրանց եկամտաբերության համարժեք աճով:

8.3. Բանկային համակարգի ակտիվները

ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2002թ. ընթացքում աճել են 21.1%-ով և 31.12.2002թ. դրությամբ կազմել 228.6 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 16.8%-ը՝ նախորդ տարվա 15.3%-ի դիմաց:



Սկար 3. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների կառուցվածքը 31.12.2002թ. դրությամբ

Տարվա ընթացքում ընդհանուր ակտիվների աճը ուղեկցվել է եկամտաբեր ակտիվների առաջանցիկ 28% աճով և դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում աճելով 0.3 տոկոսային կետով՝ կազմել է 55.3%: Ընդհանուր ակտիվների աճն ապահովվել է հիմնականում բարձր իրացվելի ակտիվների՝ կանխիկի, թղթակցային հաշիվներում մնացորդի, պետական արժեթղթերում ներդրումների և վարկային ներդրումների աճի հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում դրսևորվել են վարկային ներդրումների աճի միտումներ: Անդրադառնալով վարկային պորտֆելի որակին, նշենք որ հաշվետու տարվա ընթացքում երկարաձգված և ժամկետանց վարկերը նվազել են 43.4%-ով (4.7 մլրդ դրամ) և կազմել 6.1 մլրդ դրամ: Երկարաձգված վարկերը նվազել են 51%-ով (4.4 մլրդ դրամ), իսկ ժամկետանց վարկերը նվազել են 13%-ով (268 մլն դրամ): Հարկ է նշել, որ այս նվազեցումները պայմանավորված են հիմնականում վատորակ ակտիվների մարման արդյունքում վարկային պորտֆելի վերադասակարգմամբ, իսկ հաշվեկշռից զուտ դուրս գրված վարկերը տարվա ընթացքում կազմել են ընդամենը

568 մլն դրամ: Բնականաբար, կապիտալի արձանագրված աճի պայմաններում նվազել է վատորակ վարկերի դասակարգման և դուրսգրման հետագա հնարավոր բացասական ազդեցությունը կապիտալի մակարդակի վրա:

Տարվա ընթացքում դասակարգված ակտիվները (վարկերը և դեբիտորական պարտքերը) աճել է 0.9 տոկոսային կետով և ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ դրանց տեսակարար կշիռը կազմել է 3.2%: Բացարձակ նեոնությամբ արձանագրվել է դասակարգված ակտիվների 2.3 մլրդ դրամ աճ, որի արդյունքում դրանց ծավալը կազմել է 5.0 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի և վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գումարի 11.1%-ը, ինչը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 3.4 տոկոսային կետով: Այս աճը պայմանավորված է հաշվետու տարում ակտիվների դասակարգման կարգի մեջ փոփոխություններ մտցնելու և դասակարգված ակտիվների կազմում (ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի) նոր «հսկվող ակտիվներ», դասի ներդրմամբ:

Տարվա սկզբին ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկերի տեսակարար կշիռը կազմել է 11.1%, իսկ տարվա վերջին՝ 18.1%, քանի որ դրամով վարկավորումն աճել է 94%-ով, իսկ արտաժույթով վարկավորումը՝ 10%-ով:

Բանկերի հիմնական վարկառու են հանդիսանում առևտրի, գյուղատնտեսության, էներգետիկայի, սննդի ճյուղերին պատկանող կազմակերպությունները: Այս տարվա ընթացքում ևս արձանագրվել է վարկային պորտֆելի բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) մակարդակի բարձրացում: Թեև գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ տրանսպորտի և կապի) արձանագրվել է վարկային ներդրումների աճ, սակայն վարկային ներդրումների կազմում կատարվել են որոշ փոփոխություններ. մասնավորապես, արդյունաբերության ճյուղի վարկային ներդրումների աճի տեմպի համեմատ, առևտրի, շինարարության և գյուղատնտեսության ճյուղերի վարկային ներդրումներն ունեցել են աճի ավելի բարձր տեմպեր, ինչը հանգեցրել է ընդհանուր վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող արդյունաբերության ճյուղի վարկավորման տեսակարար կշիռի նվազման և առևտրի, գյուղատնտեսության, շինարարության ճյուղերի աճի: Միևնույն ժամանակ 36%-ով նվազել է ֆինանսական հատվածի վարկավորումը, ինչը վկայում է ֆինանսական հատվածում իրացվելիության հիմնախնդրի բարելավման մասին:

Վարկային ռիսկի նվազեցման նպատակով և տնտեսության մեջ ձևավորված դրամական հոսքերի համեմատաբար կարճաժամկետ բնույթով պայմանավորված, հաշվետու տարում արձանագրվել է բանկերի կողմից կարճաժամկետ (մինչև մեկ տարի) տրամադրված վարկերի աճ, որոնք կազմել են վարկային ներդրումների մոտ 70%-ը:

Հարկ է նշել, որ Հայաստանի տնտեսության մեջ երկարաժամկետ դրամական հոսքերի ընդլայնման և վերջիններիս կարիքը զգացող տնտեսության ճյուղերի զարգացման համար կարևոր խթան է հանդիսանում միջազգային ֆինանսական կազմակերպություններից նպատակային ներգրավված միջոցների հաշվին տրամադրվող վարկերի ծավալի աճը: Ներկայումս ՀՀ տարածքում գործող բանկերի մեծ մասը սպասարկում են «Լինսի» հիմնադրամի, Գերմանա-Հայկական հիմնադրամի, Համաշխարհային բանկի, «Եվրասիա» հիմնադրամի, «OXFAM»-ի Հայաստանյան մասնաճյուղ, Միգրացիայի Միջազգային կազմակերպության, ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, «Շոր Օվերսիզ Քորփորեյշն» հոլդինգի կողմից իրականացվող վարկային ծրագրերը, որոնք ընդգրկում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները:

Տարեվերջի դրությամբ բանկերի կողմից միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի ծավալը կազմել է մոտ 32.3 մլրդ դրամ, այդ թվում՝ ժամկետային վարկերը կազմել են 16.5 մլրդ դրամ, երկարաժամկետ վարկերը՝ 974.6 մլն դրամ, ժամկետանց վարկերը՝ 33.1 մլն դրամ, հետհաշվեկշիռ դուրս գրված և մարված վարկերի ծավալները կազմել են համապատասխանաբար՝ 388.5 մլն դրամ և 14.4 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված ժամկետային վարկերի հիմնական մասը՝ 85.0%-ը, կազմել են մեկ տարի և ավելի ժամկետով, 12%-ը՝ վեց ամսից մինչև մեկ տարի ժամկետով և 3%-ը՝ մինչև վեց ամիս ժամկետով վարկերը: Այդ վարկերի հիմնական մասը բաժին է ընկել գյուղատնտեսության, արդյունաբերության, սննդի և առևտրի ճյուղերին: Չգալի է վերոհիշյալ ծրագրերի շրջանակներում տնտեսության վարկավորման դրական ազդեցությունը տնտեսական աճի և զբաղվածության ապահովման գործում:

Անդրադառնալով արժեթղթերի պորտֆելին, նշենք որ հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել է ՀՀ պետական արժեթղթերում ներդրումների 48.7% աճ՝ տարեվերջին կազմելով 30.9 մլրդ դրամ, քանի որ այս ներդրումները համարվում են ցածր ռիսկային և բարձր իրացվելի՝ միևնույն ժամանակ ապահովելով որոշակի համեմատաբար բարձր եկամտաբերության մակարդակ:

Խրախուսելի է նաև այն փաստը, որ բարձր ռիսկային համարվող այլ արժեթղթերում ներդրումները նվազել են 54%-ով՝ տարեվերջին կազմելով 4.3 մլրդ դրամ:


8.4. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները

2002թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 26.1%-ով և կազմել է 186.5 մլրդ դրամ: Հաշվետու տարում պարտավորությունների ծավալի ավելացումը պայմանավորված է տնտեսությունից ցպահանջ և ժամկետային ներգրավված ավանդների աճով, ինչն ուղեկցվել է միջբանկային ժամկետային միջոցների ծավալների նվազմամբ:

Ընդհանուր պարտավորությունների կազմում դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը հաշվետու տարում աճել է 8.6 տոկոսային կետով և տարեվերջին կազմել՝ 27.8%, ինչը պայմանավորված է այն փաստով, որ դրամով պարտավորություններն աճել են 84.0%-ով (24.4 մլրդ դրամ), իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 12.2%-ով (16.9 մլրդ դրամ): Չնայած տարվա ընթացքում բանկերի կողմից դրամով ներգրավված պարտավորությունների աճի տեմպը էապես գերազանցել է արտարժույթով ներգրավված միջոցների աճին, սակայն այնուամենայնիվ դեռևս բանկային համակարգի պարտավորությունների հիմնական մասը շարունակում են կազմել արտարժույթով ներգաված միջոցները:

Նկար 4. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը 31.12.2002թ. դրությամբ

Հաշվետու տարում ցպահանջ պարտավորություններն աճել են 53.3%, ինչը բացատրվում է ինչպես բարձր տնտեսական աճի և գործարարության ակտիվացման հետ իրավաբանական անձանց հաշիվների և՛ քանակական և՛ ծավալային աճերով, այնպես էլ տոկոսադրույքների նվազման փաստով, ինչը մղել է որոշ



1. Բանկերի թղթակցային հաշիվներ
2. Ցպահանջ պարտավորություններ
3. Բանկերից ներգրավված ավանդներ
4. Բանկերից ստացված վարկեր
5. Ֆիզիկական անձանց ավանդներ
6. Իրավաբանական անձանց ավանդներ
7. Այլ պարտավորություններ
8. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ
9. Հետգնման պայմանագրերի գծով պարտ.

ներդրումների տարբերակում նախապատվությունը տալ ցպահանջ ավանդների ներդրումներին, հրաժարվելով արդեն ցածր տոկոսադրույքներով ժամկետային ավանդների ներդրումներից:


Բանկերի թղթակցային հաշիվների գումարների կրկնակի աճ է արձանագրվել՝ պայմանավորված ինչպես օտարերկրյա նոր թղթակից բանկերի ավելացմամբ, այնպես էլ փոխանցումների ծավալների էական աճի պայմաններում թղթակից բանկերի հաշիվների մեծացման անհրաժեշտությամբ: Զգալի ակտիվացել են բանկերի գործառնությունները միջազգային միջբանկային, արժեթղթերի և փոխանցումների շուկաներում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ պարտավորությունները համապատասխանաբար աճել են 21.4%-ով և 12%-ով: Իրավաբանական անձանց պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց ժամանակավորապես ազատ դրամական միջոցների բանկային համակարգում ներդրումային ծավալների մեծացմամբ, իսկ ֆիզիկական անձանց ավանդների ծավալների աճը պայմանավորված է ինչպես ազգաբնակչության եկամուտների աճի փաստով, այնպես էլ բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության բարձրացման փաստով:

Տարվա ընթացքում 28.3%-ով նվազել է բանկերից ներգրավված միջոցների ծավալը, ինչը պայմանավորված է բանկերում իրացվելիության հիմնախնդրի բարելավման և ցպահանջ էժան ռեսուրսների ներգրավման պայմաններում միջբանկային համեմատաբար թանկ ռեսուրսների անհրաժեշտության նվազմամբ:

8.5. Բանկային համակարգի շահութաբերությունը

2002 թվականի ընթացքում բանկային համակարգն ապահովել է շահութաբերության բարձր մակարդակ, և հաշվետու տարում բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 4.8 մլրդ դրամ, ընդ որում տարվա ընթացքում շահույթով է աշխատել 16 բանկ, իսկ վնասով՝ 4 բանկ: Տարին շահույթով եզրափակած 16 բանկի չբաշխված շահույթը կազմել է 5.06 մլրդ դրամ, վնասով եզրափակած 4 բանկի ընդհանուր վնասը կազմել է 221 մլն



դրամ:

Նկար 5. 16 շահութաբեր բանկի ըստ կապիտալի և ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշները

Նախորդ տարվա համեմատ 2002թ. ընթացքում իրականացված համախառն եկամուտներն ավելանալով 33%-ով, առաջանցիկ աճի միտում են ցուցաբերել համախառն ծախսերի նկատմամբ, որոնք ավելացել են 20%-ով: Արդյունքում, 2002թ. ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում բանկային համակարգի ստացած զուտ շահույթը կազմել է 4.8 մլրդ դրամ, իսկ բոլոր տարիների կուտակված չբաշխված շահույթը կազմել է 3.1 մլրդ դրամ:

2002 թվականին նախորդ տարվա համեմատ տոկոսային եկամուտների 1.8%-ով նվազումը ուղեկցվել է տոկոսային ծախսերի առաջանցիկ 18.8%-ով նվազմամբ, որոնց արդյունքում զուտ տոկոսային եկամուտներն աճել են 14.5%-ով: Ոչ տոկոսային եկամուտների 59.4% աճը ուղեկցվել է ոչ տոկոսային ծախսերի 24.6% աճով, որոնց արդյունքում զուտ ոչ տոկոսային եկամուտները աճել են 27%-ով: Գործառնական եկամուտներն աճել են 52.3%-ով: Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների 56.6% աճը ուղեկցվել է վերադարձների 134.4% աճով, որոնց արդյունքում զուտ մասհանումները նվազել են 43%-ով:

Թեև տարվա ընթացքում բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների զգալի աճը ենթադրում էր տոկոսային եկամուտների և ծախսերի աճ, այնուամենայնիվ տոկոսադրույքների նվազումը նպաստեց տոկոսային եկամուտների և ծախսերի նվազմանը, իսկ տոկոսային ծախսերի առաջանցիկ նվազումը տոկոսային եկամուտների համեմատ, պայմանավորված էր ինչպես ավանդների տոկոսադրույքների ավելի արագ նվազման փաստով, այնպես էլ այն փաստով, որ բանկային համակարգի տեղաբաշխված ակտիվների միջին ժամկետայնությունը գերազանցում է ներգրաված պարտավորությունների միջին ժամկետայնությանը:

Դրական միտում է նաև ոչ տոկոսային եկամուտների կտրուկ աճի փաստը, և քանի որ ոչ տոկոսային եկամուտներում մասնավորապես ավելացել են գանձված կոմիսիոն գումարները, կարելի է բացատրել, որ արտաքին առևտրի ծավալների աճին զուգընթաց զգալի մեծացել են նաև փոխանցումների ծավալները արտասահման: Միաժամանակ ներքին շուկայում անկանխիկ վճարումների արդեն իսկ ձևավորված աճի միտումները ևս նպաստել են ոչ տոկոսային եկամուտների աճին: Այս միտմանը նպաստում է նաև բանկերի կողմից օրեցօր սպասարկման նոր դրական դրսևորումների ցուցաբերումը:

Այս տարի առանձնահատուկ տեղաշարժեր են արձանագրվել նաև համախառն եկամուտների և համախառն ծախսերի կառուցվածքներում: Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը նվազել է 16.2 տոկոսային կետով և կազմել համախառն եկամուտների 46.1%-ը, իսկ ոչ տոկոսային եկամուտների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստների վերադարձների տեսակարար կշիռները համախառն եկամուտների մեջ աճել են համապատասխանաբար 4.5 և 11.7 տոկոսային կետերով և կազմել՝ 26.9% և 27%: Համախառն ծախսերի կազմում տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը նվազել է 10.3 տոկոսային կետով և կազմել համախառն ծախսերի 21.7%-ը, իսկ ոչ տոկոսային ծախսերի և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների տեսակարար կշիռները համախառն ծախսերի մեջ աճել են համապատասխանաբար 1.6 և 8.8 տոկոսային կետերով և կազմել՝ 40.9% և 37.4%:

Չուտ գործառնական մարժան 31.12.2002թ. դրությամբ կազմել 3.4%:

Ընթացիկ տարում բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ընդհանուր կապիտալի կազմել է 13.4%, ըստ կանոնադրական կապիտալի՝ 15.8%, իսկ ըստ ակտիվների 2.4%:

8.6. Իրացվելիություն

Տարվա ընթացքում բարձր իրացվելի ակտիվներն աճել են 45%-ով՝ կազմելով 94.4 մլրդ դրամ: Նշենք, որ ընդհանուր ակտիվների տոկոսային աճերը ավելի ցածր են եղել, որի արդյունքում էլ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության նորմատիվը աճել է 4.7 տոկոսային կետով և կազմել՝ 44.4%: Դրան հակառակ ցպահանջ պարտավորությունների տոկոսային աճերը ավելի զգալի են եղել, որի հետևանքով էլ բանկային համակարգի ընթացիկ իրացվելիության նորմատիվը նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել՝ 108.8%:

Այնուամենայնիվ, տարվա ընթացքում որոշ բանկեր երբեմն կանգնել են իրացվելիության հիմնախնդրի առջև:

Համակարգի իրացվելիության ճեղքվածքը շարունակել է մնալ դրական և տարեվերջին կազմել է 32.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 23.8 մլրդ դրամի համեմատ:

Տարեվերջին ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ակնթարթային ճեղքվածքը կազմել է դրական մեծություն՝ 19 մլրդ դրամ: Տարեվերջին բացասական իրացվելիության ճեղքվածք է ունեցել միայն մեկ բանկ, իսկ բացասական ակնթարթային իրացվելիության ճեղքվածք՝ երեք բանկ, որոնք գտնվում են կառավարելի շրջանակներում և իրացվելիության էական ռիսկ չեն ներկայացնում:

Տարվա ընթացքում նվազել է պարտավորությունների համակենտրոնացման աստիճանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած այն փաստի, որ տարվա ընթացքում «խոշոր»* պարտավորությունների ծավալը աճել է 3 մլրդ դրամով և 31.12.2002թ. դրությամբ կազմել 21.7 մլրդ դրամ, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել է 9.5%, ինչը բացատրվում է ընդհանուր պարտավորությունների ծավալի առաջանցիկ տոկոսային աճով՝ «խոշոր» պարտավորությունների ծավալի տոկոսային աճի համեմատ:

8.7. Մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում

Վերջին տարիներին ՀՀ բանկային շուկայում, այդ թվում՝ նրա առանձին հատվածներում, նկատվում են բանկերի դիրքերի անընդհատ տեղաշարժեր. որոշ բանկեր շուկայից դուրս են գալիս, որոշ նոր բանկեր մուտք են գործում շուկա և աստիճանաբար ամրապնդում իրենց դիրքերը բանկային մրցակցային շուկայում: Բնականաբար, բանկային համակարգում կարող են ձևավորվել ինչպես խոշոր, այնպես էլ մանր բանկեր, որոնք գործում են առողջ մրցակցային դաշտում:

ՀՀ բանկային շուկայի վարկային ներդրումների և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների հատվածներում 2002 թ. ընթացքում 25 բանկից խոշորագույն չորս (Կզ4) և տասը (Կզ10) բանկի մասնաբաժիններով նկատվել է համակենտրոնացման մակարդակի նվազման միտում: Համեմատաբար առավել համակենտրոնացված է իրավաբանական անձանց ժամկետային դեպոզիտների և ցպահանջ պարտավորությունների շուկան, որտեղ խոշորագույն չորս (Կզ4) բանկերի կտրվածքով համակենտրոնացվածության մակարդակը աճել է համապատասխանաբար 6 և 13 տոկոսային կետով, իսկ դրան զուգահեռ խոշորագույն տասը (Կզ10) բանկերի մասնաբաժիններով նվազել՝ համապատասխանաբար 13 և 19 տոկոսային կետով:

Աղյուսակ 2. Բանկային շուկայի հատվածներում համակենտրոնացման ցուցանիշները ՀՀ բանկային հատվածի համակենտրոնացման մակարդակը (%)

	1998	1999	2000	2001	2002
Ընդհանուր ակտիվներ					
Կզ4	50	43	39	42	43
Կզ10	76	74	70	72	73
Վարկային ներդրումներ					
Կզ4	58	44	43	45	38
Աղյուսակ 2-ի շարունակություն					
Կզ10	79	76	73	77	71
Պետական պարտատոմսեր					
Կզ4	47	50	65	56	49
Կզ10	82	82	87	85	71
Ժամկետային ավանդներ ֆիզիկական անձանցից					
Կզ4	55	48	50	44	39
Կզ10	80	80	83	84	78
Ժամկետային դեպոզիտներ իրավաբանական անձանցից					
Կզ4	48	55	44	45	51
Կզ10	79	84	79	77	64
Ցպահանջ պարտավորություններ					
Կզ4	54	52	56	59	72
Կզ10	85	82	83	83	64
Բանկերի թիվը					
	31	31	30	30	25

Ինքնաստուգման հարցեր

1. Ընդհանուր կապիտալի աճը նախորդ տարվա համեմատ ինչն է պայմանավորված:
2. Որքա՞ն են կազմում բանկային համակարգի ընդհանուր ակտիվները:
3. Որքա՞ն են կազմում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները:
4. Բանկային համակարգի իրացվելիության ցուցանիշների դրական տեղաշարժը ի՞նչի արդյունք է:
5. Հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկերի գործունեությունը ի՞նչ նորմատիվ ակտերով է կարգավորվում:
6. Բանկային համակարգի իրացվելիության ցուցանիշների աճը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
2. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»
3. ՀՀ օրենքը «Բանկերի սնանկության մասին»
4. ՀՀ օրենքը «Բանկային գաղտնիքի մասին»
5. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
6. ՀՀ ԿԲ կանոնակարգ 1
7. ՀՀ ԿԲ կանոնակարգ 2
8. ՀՀ ԿԲ կանոնակարգ 5
9. ՀՀ ԿԲ-ի տարեկան հաշվետվություն
10. *В. Платонов, М. Хиггинс. Банковское дело*
11. **Введение в банковское дело. Учебное пособие.** / Под ред. Г. Асхауер. – М: Мир и культура, 1997 г. - 627 с.
12. **Банковское дело: Учебник.** – 4-е изд., перераб. и доп. / Под ред. В. И. Колесникова, Л.П. Кровелицкой . – М.: Финансы и статистика, 1999. - 464 с.: ил.

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա

Ակտիվ, 44
 Ակտիվների շահութաբերություն, 55
 Առևտրային բանկ, 28
 Ավանդ, 44
 Արտաքին ռիսկ, 74

Բ

Բաժնետիրական բանկեր, 28
 Բանկ, 11

Բանկային ավանդ, 44
 Բանկային գործունեություն, 18
 Բանկային համակարգ, 21
 Բանկի խորհուրդ, 32
 Բանկի մասնաճյուղ, 24
 Բանկի ներկայացուցչություն, 24
 Բանկի սեփական միջոցներ, 41

Գ

Գլխավոր պահուստ, 42
 Գործառնական ռիսկ, 79

Ե

Երկրի ռիսկ, 74

Զ

Զուտ տոկոսային եկամուտներ, 54

Է

Էմիսիոն բանկեր, 27

Ը

Ընդհանուր կապիտալ, 87

Ի

Ինվեստիցիոն բանկեր, 29
 Իրացվելիություն, 45

Խ

Խնայողական բանկ, 29

Կ

Կենտրոնական բանկ, 23
 Կոոպերատիվ բանկեր, 28

Ղ

Ղիփոթեքային բանկ, 29

Ճ

Ճյուղային ռիսկ, 75

Ս

Սակրոտնոտեսական ռիսկ, 75
 Սասնագիտացված բանկեր, 29

Ն

Ներգրավված միջոցներ, 43
 Ներքին ռիսկեր, 75
 Նյութական ակտիվներ, 45

Շ

Շահութաբերություն, 54
 Շահույթ, 54
 Շուկայական ռիսկ, 74

Ո

Ոչ նյութական ակտիվներ, 45

Ռ

Ռիսկ, 47
 Ռիսկային ակտիվներ, 46

Վ

Վարկային ռիսկ, 76
 Վերստուգիչ համաձայնագրով, 35
 Վճարունակություն, 52

Տ

Տարերային աղետների ռիսկ, 75
 Տնտեսական ռիսկ, 75

Ու

Ունիվերսալ բանկեր, 30

Փ

Փայատիրական բանկեր, 28
 Փոխադարձ - խնայողական բանկեր, 30
 Փոխանցման ռիսկ, 75
 Փոստա - խնայողական բանկեր, 30

Օ

Օտարերկրյա բանկ, 24
 Օրենսդրական ռիսկ, 75

Ֆ

Ֆինանսական ռիսկ, 75

Բ

Back Office, 37

Բ

Front Office, 36

Մ

Middle Office, 37

Վ ա հ ա ն Բ ա բ ա յ ա ն

Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ի Հ Ի Մ ՈՒ Ն Ք Ն Ե Ր

Խմբագիր՝

Համակարգչային ձևավորում՝

Լարիսա Նաղարյան

Յուլյա Ստակյան

[ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ](#)